

Հերագրական խմբի ղեկավար՝

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

յնպեսագիտության թեկնածու, դոցենտ

Հերագրական խմբի անդամներ՝

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԳԱՆՅԱՆ

յնպեսագիտության թեկնածու, դոցենտ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

յնպեսագիտության թեկնածու, սախարենտ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱՎԱՍԱՐԳՅԱՆ

ՀՊՏՀ «Մակրոյնրեսական վերլուծություն» կրթական

ծրագրի մագիստրանտ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՊՏՀ «Տնտեսության պերական կարգավորում» կրթական

ծրագրի մագիստրանտ

**ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

DOI: 10.52174/978-9939-61-246-1

Ե Ր Ե Վ Ա Ն

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2022

ՀՏԴ 338.45: 339.137.2
ԳՄԴ 65.30
Հ 247

*Հրատարակության է կրաչիավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը*

Մասնագիտական խմբագիր՝

Թ. Մկրտչյան

տ.գ.դ., դոցենտ

Գրախոսներ՝ **Ֆ. Մայիլյան**

տ.գ.դ., դոցենտ

Վ. Խաչատրյան

տ.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝

Դ. Գալոյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Թ. Մկրտչյան

տ.գ.դ., դոցենտ

Դ. Հախվերդյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Գ. Նազարյան

տ.գ.թ., դոցենտ

ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացման հնարավորությունները
Հ 247 / Գ. Ավագյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2022.- 142 էջ.- («Ամբերդ»
մատենաշար 51):

Սույն հետազոտությունը նվիրված է ՀՀ տնտեսական աճի թիրախների գնահատմանը, ՀՀ արդյունաբերության մրցունակության վրա ազդող հիմնական գործոնների, մշակող արդյունաբերության զարգացման էական խոչընդոտների բացահայտմանը, ՀՀ արդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացման կառուցակարգերի մշակմանը:

Հետազոտության շրջանակներում առանձնացվել են ՀՀ տնտեսության մրցունակությունն ապահովող հիմնական արդյունաբերական ապրանքախմբերի արտահանման ծավալների վրա ազդեցություն ունեցող առանցքային գործոնները, ուսումնասիրվել են դրանց ազդեցության փոխանցման ուղիները, տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ իրականացվել է այդ գործոնների ազդեցության չափի, նշանակալիության և տևողության գնահատում:

Ախտորոշվել են այն ընդգծված խնդիրները, որոնք խոչընդոտում են ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացումը, մատնանշվել են ՀՀ արդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացման հնարավոր ուղղությունները, ներկայացվել են պետական քաղաքականության նպատակային միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ:

ՀՏԴ 338.45: 339.137.2

ԳՄԴ 65.30

ISBN 978-9939-61-246-1

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2022 թ.

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2022 թ.

Ներածություն..... 5

Գլուխ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- 1.1. *Մրցունակություն* հասկացության և տնտեսության մրցունակության տեսությունների մեկնաբանումը..... 9
- 1.2. ՀՀ տնտեսության մրցունակության վերլուծությունը, տարածաշրջանի և ԵԱՏՄ անդամ երկրների նկատմամբ առավելություններն ու թերությունները 12
- 1.3. ՀՀ արդյունաբերության մրցունակության վերլուծությունը՝ ըստ *արդյունաբերության մրցունակության համաթվի* 21
- 1.4. Ընդհանուր գործոնային արտադրողականության և արտադրության կազմակերպման որակի գնահատումը ՀՀ-ում..... 29

Գլուխ 2. ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԱՄՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. ՀՀ արդյունաբերության ոլորտի ընդհանուր բնութագիրը 40
- 2.2. ՀՀ արտահանման շարժնթացի և կառուցվածքի վերլուծությունը 46
- 2.3. ՀՀ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատումը..... 52
- 2.4. ՌԴ-ում ՀՀ արտահանելի ապրանքների գնային մրցունակության գնահատումը 60

Գլուխ 3. ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

- 3.1. ՀՀ-ում արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշների վրա ազդող գործոնների վերլուծությունը..... 68
- 3.2. Արդյունաբերական կազմակերպությունների մրցունակության բարձրացման հնարավորությունները և խոչընդոտները..... 75

Եզրակացություն..... 87

Օգտագործված գրականություն 91

Հավելված..... 96

Համառոտագրեր..... 118

Մինչև գնաժամային շրջանում ՀՀ տնտեսական աճի տատանողական տեմպերը, արտահանման սահմանափակ և հիմնականում հումքային ռեսուրսներով գերիշխող կառուցվածքը, մասնավոր տրանսֆերտներից բավականին մեծ կախվածությունը հանգեցրին տնտեսության կառուցվածքային ձևախեղումների՝ սահմանափակելով հետագա տնտեսական աճի հնարավորությունները: Թեև 2009-2020 թթ. կառուցվածքային տեղաշարժերը շարունակվել են և ՀՆԱ-ի աճի թիրախները՝ փոփոխվել, այնուամենայնիվ, դրանք նույնպես չեն նպաստել ՀՀ տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանը: Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների է հանգեցրել նաև COVID-19-ի տարածումը, որը կաթվածահար է արել տնտեսական համակարգը՝ ժամանակավորապես խաթարելով տնտեսական «կապերը», և լոգիստիկ շղթաների խափանումները հանգեցրել են արտադրության անկման: Այս հանգամանքը, միջազգային և տարածաշրջանային զարգացումների հետ մեկտեղ, առավել դժվարացրել է հետագա տնտեսական աճի ապահովման հնարավորությունները: Ներկա իրողության պայմաններում առավել սրվում է ՀՀ տնտեսական աճի ապահովման նոր մոդելի գործարկման անհրաժեշտությունը, որը պետք է հիմնված լինի արտադրական ոլորտի զարգացման վրա և հնարավորինս միտված լինի արտահանմանը:

ՀՀ-ն փոքր, ծովային ելք չունեցող, բաց տնտեսությամբ երկիր է, որն ունի խիստ սահմանափակ ներքին շուկա, սակայն ունակ է ստեղծել տեխնոլոգիական և նորարարական արտադրանքներ: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսության վերակառուցումը պետք է հիմնվի առավելապես բարձր մշակման աստիճան ու մեծ ավելացված արժեք ունեցող արդյունաբերական ապրանքների արտադրության և արտահանման մեխանիզմների վրա: Ներկա իրավիճակում ՀՀ տնտեսությունն ունի համեմատական մրցակցային առավելությունների ցածր մակարդակ: Այսպես, մրցակցային առավելությունների քառամակարդակ սանդղակում արդյունաբերական արտադրությունը կա՛մ առաջին (արտադրության գործոնների վրա հիմնված առավելություն), կա՛մ երկրորդ (արտահանման վրա հիմնված առավելություն) մակարդակում է: Մինչդեռ, արդյունաբերության ոլորտը մեր երկրում (ներառյալ հանքարդյունաբերությունը) վերջին տասնամյակների ընթացքում հնարավորություն ունեցել է անցում կատարելու մրցունակության երրորդ՝ նորարարությունների վրա հիմնված փուլին: Իհարկե, դրա համար անհրաժեշտ էր համապատասխան քաղաքականության և գործիքակազմի կիրառում:

Նույնիսկ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, որի արտադրանքի զգալի մասն արտահանվում է, երկրի մրցունակությունը հիմնված է առավելապես արտադրական գործոնների առկայության, հիմնականում՝ էժան և որակյալ աշխատուժի վրա: Սակայն ՏՏ ոլորտում հիմնական եկամուտները ձևավորվում են արտերկրից պատվերներ փոխանցող խոշոր միջ-

ազգային ընկերությունների պատվերների վերապատվիրակման՝ աութօր-սինգի համակարգի միջոցով: Նշված օրինակները ցույց են տալիս, որ ՀՀ արդյունաբերության մրցունակության հիմնախնդիրները վեր են ձեռնարկու-թյունների, կազմակերպությունների մակարդակից և լուծումներ են պահանջում առավելապես մակրոմակարդակում՝ ակտիվ կառուցվածքային, արդյու-նաբերական և նորարարական քաղաքականությունների իրականացմամբ ու դրանց արդյունավետ համադրմամբ:

Այս առումով կարևորվում են ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ ար-դյունաբերության զարգացման խոչընդոտների բացահայտումը, դրանք հաղ-թահարելու հնարավոր տարբերակների առաջադրումը, ոլորտի զարգացման ներուժի գնահատումը, որոնցով էլ պայմանավորված է սույն հետազոտու-թյան արդիականությունը:

Հետազոտության նպատակը ՀՀ արդյունաբերության մրցունակու-թյան բարձրացման հնարավորությունների բացահայտումն ու, մասնավորա-պես, մշակող արդյունաբերության մրցունակության բարձրացմանը միտված համալիր միջոցառումների մշակումն է:

Հետազոտության նպատակի իրագործման տեսանկյունից կարևորվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել տնտեսական մրցունակության տեսությունները և հիմնական մոտեցումները, տնտեսական մրցունակության գնահատ-ման մեթոդաբանությունը, բացահայտել արդյունաբերության մրցու-նակության գնահատման մեթոդական առանձնահատկությունները,
- բացահայտել տարածաշրջանի և ԵԱՏՄ անդամ երկրների մրցունա-կության վրա ազդող հիմնական գործոնները, գնահատել դրանց ազ-դեցության չափը,
- ուսումնասիրել արդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացման միջազգային փորձը,
- ուսումնասիրել և մեկնաբանել արդյունաբերական քաղաքականու-թյան մոդելները, գնահատել դրանց կիրառման արդյունավետությու-նը ՀՀ-ում,
- մեկնաբանել տնտեսական աճի մոդելը, որը վերջին տասնամյակում ՀՀ տնտեսական աճի հիմքում է և գնահատել ՀՀ տնտեսական աճի թիրախները,
- վերլուծել ՀՀ արդյունաբերության ոլորտի ցուցանիշների շարժընթա-ցը, կառուցվածքային տեղաշարժերը, բացահայտել այդ փոփոխու-թյունները պայմանավորող էական գործոնները,
- գնահատել իրական փոխարժեքի դերը՝ որպես արդյունաբերական արտադրանքի մրցունակության վրա ազդող կարևոր գործոն, բացա-հայտել փոխարժեքի և տնտեսական մրցունակության փոխկապվա-ծությունները ՀՀ -ում,
- վերլուծել արդյունաբերական արտադրանքի արտահանման ցուցա-նիշները, արդյունաբերական արտադրանքի արտահանման ապրան-

քային և աշխարհագրական կառուցվածքները, բացահայտել նոր շուկաներ գրավելու հնարավորությունները,

- մշակել պետության կողմից ՀՀ արդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացման կառուցակարգեր և գնահատել դրանց ներդրման արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական, տեղեկատվական հիմքերը

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են հետազոտության առարկայի, այն է՝ տնտեսության մրցունակության իմաստավորման, արդյունաբերության մրցունակության գնահատման, արդյունաբերության զարգացման խոչընդոտների բացահայտման՝ միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդները, սկզբունքները և կատեգորիաները: Կիրառվել են ՀՀ արդյունաբերության ոլորտի առկա վիճակը բնութագրող վիճակագրական տվյալների խմբավորման, համակարգային, դինամիկ վերլուծության, ընդհանրացման մեթոդները: Հետազոտության նպատակի իրագործման և հիմնական խնդիրների լուծման համար օգտագործվել են ինչպես տնտեսաչափական մոդելներ՝ հիմնված վիճակագրական տվյալների միջոցով տնտեսագիտական և վարքագծային կապերի բացահայտման վրա, այնպես էլ կառուցվածքային մոդելներ՝ ուղղված մակրոտնտեսական քաղաքականության միջոցառումների ազդեցությունների ուղղությունների և չափերի գնահատմանը:

Իրականացվող վերլուծությունների և գնահատումների հիմքում ՀՀ Կառավարության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ մաքսային ծառայության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական հանձնաժողովի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի, ՀՀ հիմնական գործընկեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների պաշտոնական տեղեկագրերը և վիճակագրական տվյալների բազաներն են, Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Գլոբալ մրցունակության զեկույցները, հայաստանյան, արտասահմանյան կազմակերպությունների և փորձագետների՝ արդյունաբերության հիմնախնդիրներին առնչվող առանձին հետազոտություններ, հրատարակված զեկույցներ:

Հետազոտության շրջանակում ստացվել են հետևյալ արդյունքները.

1. ՀՀ տնտեսության մրցունակության ներկայիս մակարդակի ձևավորման պատմական պատճառների, փոփոխությունների միտումների ուսումնասիրության, ինչպես նաև տարածաշրջանային դիրքի գնահատման հիման վրա բացահայտվել են տարածաշրջանի և ԵԱՏՄ անդամ երկրների նկատմամբ ՀՀ մրցունակության առավելություններն ու թերությունները, *արդյունաբերության մրցունակության համաթվի* ցուցանիշների վերլու-

ծությանը ախտորոշվել են այն ընդգծված խնդիրները, որոնք խոչընդոտում են ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացումը:

2. Ընդհանուր գործոնային արտադրողականության և արտադրության կազմակերպման որակի չափման՝ տեսականորեն հիմնավորված և տարածված ցուցանիշ հանդիսացող *Մայնքլիսթի արտադրողականության համաթվի* կիրառումը ՀՀ տնտեսությանը հնարավորություն է ընձեռել ստանալու մրցունակության արդյունավետության գնահատականները, դրանց շարժընթացը, զուգահեռներ անցկացնելու այլ տնտեսությունների հետ, բացահայտելու ՀՀ-ում արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության աճի հիմնական շարժիչ ուժերը, ինչպես նաև այն խոչընդոտող պատճառները:
3. ՀՀ տնտեսության եռամսյակային ժամանակային շարքի հիման վրա ստոխաստիկ սահմանի մոդելի միջոցով գնահատվել է Հայաստանի արտադրական ֆունկցիան և հիմնավորվել մակրոմակարդակում երկրի թողարկման անարդյունավետությունը: Գնահատվել են ՀՀ տնտեսության արդյունք գեներացնող գործոնների էլաստիկության գործակիցները, փաստացի և ներուժային ցուցանիշների միջև առկա շեղման այն չափը, որը բացատրվում է տեխնիկական անարդյունավետությամբ:
4. Բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելների միջոցով գնահատվել են ինչպես ընդհանուր, այնպես էլ ՀՀ տնտեսության մրցունակությունն ապահովող հիմնական արդյունաբերական ապրանքախմբերի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների, մասնավորապես՝ առաջարկի, պահանջարկի և փոխարժեքի ազդեցության չափն ու նշանակալիությունը: Կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիվ մոդելների օգնությամբ գնահատվել է մակրոտնտեսական գործոնների ազդեցության տևողությունը:
5. ՀՀ արդյունաբերական կազմակերպությունների քանակի, դրանց թողարկման ծավալների և արտահանման միտումների վերլուծությամբ և պանելային ռեգրեսիայի գործիքակազմի օգնությամբ գնահատվել են կազմակերպությունների թողարկման ծավալների և արտահանման տեսանկյունից կարևոր գործոնների ազդեցությունները, մատնանշվել են ՀՀ արդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացման հնարավոր ուղղությունները:
6. Գնահատվել է դեպի ՌԴ ՀՀ արտահանման ներուժը, վեր են հանվել հայկական ապրանքների՝ դեպի Ռուսաստան արտահանման խոչընդոտները, առաջարկվել են քայլեր, որոնք կարող են աշխուժացնել ՀՀ-ի և ՌԴ-ի միջև առևտրաշրջանառությունը:
7. ՀՀ-ում արդյունաբերական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ որակական և քանակական տեղեկատվության հիման վրա նախանշվել են ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացման ուղիները, ներկայացվել են պետական քաղաքականության նպատակային միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ:

ԳԼՈՒԽ 1

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀՀ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1.1 *Մրցունակություն հասկացության և տնտեսության մրցունակության տեսությունների մեկնաբանումը*

Արդյունաբերության ոլորտը, իր խիստ մրցակցային բնույթի, հումքի և արտահանման շուկաների շարունակական միջազգայնացման հետևանքով, գրեթե մշտապես բախվում է մեծագույն մարտահրավերների հետ: Տնտեսության ցանկացած ոլորտի մրցունակության գնահատման համար նախ հարկավոր է պարզել, թե ինչպիսին է երկրի ազգային տնտեսության մրցունակությունը: Տնտեսության բոլոր ոլորտների փոխկապակցվածության պայմաններում դրանցից մեկի ինտենսիվ զարգացումն ու մրցունակության մակարդակի բարձրացումը կարող են բազմաբնույթ ազդեցություն ունենալ մյուսների վրա:

Տնտեսական մրցունակության տեսագործական հարցերի քննարկման համատեքստում կարևորում ենք ՀՀ տնտեսության մրցունակության բազմակողմ ուսումնասիրությունը՝ բացահայտելու համար երկրի տնտեսության, նաև արդյունաբերության մրցունակության վրա ազդող գործոնները, տնտեսական մրցունակության մակարդակի փոփոխությունների պատճառները և միտումները, երկրի վարկանշային դիրքը տարածաշրջանում, ախտորոշելու այն խնդիրները, որոնք խոչընդոտում են արտադրողականության, հետևաբար նաև՝ մրցունակության բարձրացումը:

Մրցունակությունը բազմամակարդակ, բազմագործոն հասկացություն է: Ուսումնասիրելով և ամփոփելով մասնագիտական գրականության մեջ առկա՝ մրցունակության բազմաթիվ սահմանումները՝ առանձնացվել են մրցունակության սահմանման և գնահատման այն հիմնական դրույթները, որոնք այս կամ այն չափով մատնանշվում և ընդգծվում են դրանցում.

- մրցունակությունը մրցակցելու կարողությունն է և դիտարկվում է մրցակիցների նկատմամբ առավելությունների տեսանկյունից՝ առավելապես կենտրոնանալով «ոչ նյութական» կողմերի վրա¹,
- մրցունակությունը գնահատվում է արտադրանքի որակի տեսանկյունից՝ զին/որակ հարաբերակցություն²,

¹ Տե՛ս **Мокронос** А. Г., Конкуренция и конкурентоспособность: учебное пособие / А. Г. Мокронос, И. Н. Маврина. Екатеринбург: Изд-во Урал ун-та, 2014. 194, էջ 49, https://elar.urfu.ru/bitstream/10995/28814/1/978-5-7996-1098-2_2014.pdf

² <https://business-planner.ru/articles/marketing/analiz-konkurentosposobnosti-produktsii.html>

- կարևորվում է մրցունակության գնահատման մատրիցային մեթոդաբանությունը (Բոստոնյան խորհրդատվական խումբ)³,
- մրցունակությունը գնահատվում է ֆունկցիոնալ առումով. որոշվում են ծախսերի և գների հարաբերակցությունը, արտադրական հզորությունների օգտագործման ծավալները, արտադրանքի քանակը և այլ ցուցանիշներ⁴,
- մրցունակությունը գնահատվում է կառուցվածքային առումով՝ կարևորելով տարածական չափումը: Ըստ այդմ, մրցունակությունը դիտարկվում է մակրո- և միկրոնակարգակներում⁵,
- մրցունակության բարձրացման գործում կարևորվում է ամենաևոր և միաժամանակ ամենաէական բաղադրիչների՝ գիտելիքի, նորարարությունների, տեխնոլոգիաների դերը⁶,
- մրցունակության բարձրացման մեջ հատուկ ընդգծվում է պետության դերը⁷:

ԸՀ տնտեսության և մասնավորապես արդյունաբերության մրցունակության գործնական հարցերի և ցուցանիշների վերլուծության տեսական հիմքերն ամրապնդելու տեսանկյունից կարևորում ենք մրցունակության տեսամեթոդաբանական դրույթների, մասնավորապես՝ մրցունակության տեսությունների քննական ուսումնասիրությունը: Մրցունակության գաղափարը տնտեսագիտական գրականության մեջ ներկայացրել էր դեռևս Ադամ Սմիթը՝ իր «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատության մեջ⁸: Ըստ նրա՝ երեք առաջնային գործոններ՝ հող, կապիտալ, բնական ռեսուրսներ և աշխատուժ, որոշում են պետության բացարձակ առավելությունը միջազգային առևտրում: Սմիթի գաղափարը շարունակեց և զարգացրեց Դավիդ Ռիկարդոն՝ առաջ քաշելով երկրի համեմատական առավելությունների տեսությունը, որն այդ ժամանակից ի վեր միջազգային առևտրի տեսության հիմքում է: Ըստ Ռիկարդոյի՝ երկիրը պետք է արտադրի և արտահանի այն ապրանքները, որոնց արտադրությունը հարաբերականորեն էժան է, և ներմուծի ապրանքներ, որոնք արտասահմանյան երկրներում արտադրվում են ավելի քիչ ծախսերով, քան երկրի ներսում⁹: Համեմատական առավելությունների տեսության շուրջ երկդարյա գերակա-

³ https://librarvno.ru/8-2-metody-ocenki-konkurentosposobnosti-predprivativa-i-produkcii-strateg_menedi/

⁴ Конкуренентоспособность компании по ценам и издержкам, <https://economy-web.org/?p=129>

⁵ Տե՛ս Ա.Ն. Захаров, А.А. Зокин, Конкуренентоспособность предприятия: сущность, методы оценки и механизмы увеличения, https://logistics.ru/scm/9/2/i20_64.htm

⁶ Տե՛ս Ի. Б Кулешова, Конкуренентоспособность и инновации, <https://cvberleninka.ru/article/n/konkurentosposobnost-i-innovatsii/viewer>

⁷ Տե՛ս Մ. В. Клинова, Государство и национальная конкурентоспособность (на примере ЕС) // Вопросы экономики. 2020. № 8, էջ 146-158, <https://www.imemo.ru/publications/info/gosudarstvo-i-natsionalnava-konkurentosposobnostv-na-primere-es>

⁸ Տե՛ս А. Смит, Исследование о природе и причинах богатства народов, М., 1962, էջ 381-425,

⁹ <https://kpfu.ru/portal/docs/F646901I/2.Lekcii.pdf>

յությունից հետո Մայքլ Պորտերի կողմից առաջ քաշվեց նոր մոտեցում¹⁰, որում կենտրոնական գաղափարը հետևյալն է՝ երկրի բարեկեցությունը ստեղծվում է, ոչ թե՛ ժառանգվում¹¹: Այն պայմանավորված չէ երկրի բնական ռեսուրսներով, աշխատուժի ներուժով, տոկոսադրույքի կամ փոխարժեքի մեծությամբ, ինչպես պնդում է դասական տնտեսագիտությունը¹²: Մրցակցային, այլ ոչ համեմատական առավելություններն են ստեղծում երկրի բարեկեցությունը: Մրցակցային առավելությունը համեմատական առավելությունից տարբերվում է այն առումով, որ առաջին դեպքում առավելությունը պայմանավորված չէ հումքային ռեսուրսների պաշարով կամ աշխատուժի էժանությամբ: Պորտերի կարծիքով՝ մրցունակության սահմանման համար պետք է կողմնորոշվել արտադրողականության գործոններով և արտադրողականության աճի արագությամբ, քանի որ արտադրողականության աճի ու տնտեսության զարգացման գործընթաց տեղի է ունենում այն գործոնների համախմբի միջոցով, որոնք մրցունակության միջանկյալ ցուցանիշներ են¹³:

Մրցունակությունը, ի վերջո, բարեկեցություն է ապահովում երկրի քաղաքացիների համար և հետագա առաջխաղացման հիմքեր ստեղծում՝ կայուն տնտեսական զարգացում, բնակչության բարեկեցության բարձրացում, աղքատության կրճատում: Մրցունակությունը միջոց է, որի շնորհիվ հասարակության բոլոր անդամները շահում են տնտեսական աճից: Հետևաբար, մրցունակությունն ունի ուժեղ բարոյական և սոցիալական չափումներ¹⁴:

Ըստ Պորտերի՝ մրցակցային առավելությունը պայմանավորված է 4 խումբ գործոններով (Ադամանդի մոդել)¹⁵, որոնք փոխկապակցված են և որոնց վրա մեծ ազդեցություն ունի պետությունը: Այդ 4 խումբ գործոններն են՝ արտադրության գործոններ, պահանջարկի գործոններ, օժանդակ և հարակից ոլորտներ, ինչպես նաև ռազմավարություն, կառուցվածք և մրցակցություն:

Տնտեսական մրցունակության վերաբերյալ տարբերվող տեսություն է առաջ քաշում մրցունակության ժամանակակից տեսության ներկայացուցիչ Պոլ Կրուգմանը, ըստ որի՝ «Մրցունակությունն անիմաստ բառ է, եթե վերագրվում է ազգային տնտեսությանը»¹⁶: «Չնայած այն հանգամանքին, որ «ազգային մրցունակություն» հասկացության փոխանակությունը հանգում է «արդյունքայնություն» հասկացությանը, փոխանակական քաղաքա-

¹⁰ <https://kpfu.ru/portal/docs/F6469011/2.Lekcii.pdf>

¹¹ Տե՛ս Cho D. S., Moon H. C., From Adam Smith to Michael Porter. Evolution to Competitiveness Theory, World Scientific, Asia Pacific Business Series, Vol. 2, Singapore 2000:

¹² Տե՛ս Porter M., The Competitive Advantage of Nations, New York, The Free Press, 1990:

¹³ Competitiveness at the Crossroads: Choosing the Future Direction of the Russian, Economy By Michael E. Porter and Christian Ketels, with Mercedes Delgado and Richard Bryden. էջ 8. URL: http://www.csr.ru/upload/editor_files/file0029.pdf

¹⁴ Տե՛ս Fairbanks M., Changing a Mind of a Nation: Elements in a Process for Creating Prosperity, Culture Matters: How Values Shape Human Progress, New York: Basic Books, 2000:

¹⁵ Տե՛ս Porter M., On Competition, The Harvard Business Review Book Series, Boston, United States, 1998:

¹⁶ <https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/241392>

կանության քննարկման ժամանակ «ազգային մրցունակություն» հասկացության օգտագործումը սխալ է և նույնիսկ վրանգավոր»¹⁷։ նշում է Կրուզմանը։ Ըստ նրա՝ «Երկրի տնտեսական դժվարությունների մեծ մասը պայմանավորված է ներքին գործոններով, հետևաբար, կյանքի որակի բարձրացումը տեղի է ունենում ազգային տնտեսությունում արտադրողականության բարձրացմամբ, ոչ թե այլ երկրների համեմատությամբ արտադրողականության բարձրացմամբ»¹⁷։

Պետության նկատմամբ կիրառվող մրցունակություն հասկացությունը փոխաբերություն է. ի տարբերություն կազմակերպության՝ պետությունը չունի մրցունակության չափանիշ։ Միջազգային մրցունակության վրա շեշտադրումը կարող է հանգեցնել ազգային տնտեսության անարդյունավետ ոլորտների աջակցության, արդյունքում՝ երկրի տնտեսության ամբողջական արդյունավետության նվազման¹⁸։

Ուսումնասիրելով մրցունակության վերաբերյալ տարբեր մոտեցումները, հաշվի առնելով դրանցում առկա որոշ տարակարծությունները և անորոշությունները՝ հարկ է նշել, որ քննարկված հայեցակարգերի մեջ կարմիր թելի նման ընդգծվում է մեկ հիմնարար գաղափար՝ արտադրողականությունը մրցունակության բոլոր տեսությունների առանցքային հենքն է, համաշխարհային շուկայում երկրի մրցունակության հիմնարար չափորոշիչը։

Տեխնոլոգիական զարգացման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ապրանքների և ծառայությունների բարձր որակի ցուցանիշները մրցունակության մակարդակի գնահատականներն են։ Մրցունակությունը հիմնվում է արտադրողականության վրա, իսկ արտադրողականությունը մարդկանց կյանքի որակը բարձրացնելու միակ միջոցն է։ Այսինքն, կարող ենք փաստել, որ արտադրողականությունը մրցունակության լավագույն գնահատականն է։

1.2

ՀՀ տնտեսության մրցունակության վերլուծությունը, տարածաշրջանի և ԵԱՏՄ անդամ երկրների նկատմամբ առավելություններն ու թերությունները

Մրցունակության համաշխարհային զեկույցը (ՄՀԶ) աշխարհի երկրների մրցունակության մակարդակների համեմատական վերլուծությունը ներկայացնող, տնտեսագիտական և քաղաքագիտական շրջանակներում ընդունված և արժանահավատ ուսումնասիրություն է, որում համեմատվում են

¹⁷ Модели мировой конкурентоспособности.

https://studbooks.net/1960167/ekonomika/modeli_mirovov_konkurentosposobnosti

¹⁸ https://studbooks.net/1960167/ekonomika/modeli_mirovov_konkurentosposobnosti

տարբեր երկրների տնտեսական մրցունակությունը, տնտեսական աճի վրա ազդող գործոնները¹⁹: Առաջին անգամ այն հրապարակվել է 1979 թ.: 2019 թ. ՄՀԶ-ում ներկայացված է զարգացած և զարգացող 141 երկրների տնտեսությունների մրցունակության վերլուծությունը, որոնց բաժին է ընկնում աշխարհի ՀՆԱ-ի 99%-ը²⁰:

Սկսած 2005 թվականից՝ ՀՏՖ-ն մրցունակության վերլուծություններում հիմնվում է *գլոբալ մրցունակության համաթվի* (ԳՄՀ) վրա: Այն բազմաբովանդակ գործիք է, որի միջոցով գնահատվում են ազգային մրցունակության մակրոտնտեսական և միկրոտնտեսական հիմքերը, որը քաղաքականություն մշակողներին հնարավորություն է տալիս չսահմանափակվելու կարճաժամկետ, արձագանքող միջոցառումներով և առաջընթացը գնահատել համաթվի մեջ ներառված ցուցանիշների մասով:

Գլոբալ մրցունակության համաթիվը գնահատում է երկրների վարկանիշը՝ ըստ տնտեսական մրցունակության, հրապարակվում է ամեն տարի (բացառություն է 2020 թվականը, այդ տարվա համար, COVID-19-ով պայմանավորված, աշխարհի երկրների ամփոփ վարկանիշը, ըստ Գլոբալ մրցունակության համաթվի, չի ներկայացվել²¹), խարսխված է աճի հաշվառման վրա, չափում է «գործոնների ընդհանուր արտադրողականությունը»:

Համաշխարհային տնտեսական ֆորումը 2018 թվականից ԳՄՀ-ի հաշվարկման նոր մեթոդաբանություն է կիրառում, որի հիման վրա ինդեքսը վերանվանվել է *համաշխարհային մրցունակության համաթիվ 4.0* (այսուհետ՝ ՀՄՀ 4.0): Մեթոդաբանության փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորվել է վերջին տարիների համաշխարհային տնտեսական զարգացումներով, մասնավորապես՝ 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով արտադրողականության կտրուկ անկմամբ, վերջինիս երկարատև ազդեցությամբ, չորրորդ արդյունաբերական հեղափոխության արդյունքները հաշվի առնելու անհրաժեշտությամբ, բիզնես մոդելների շահութաբերության և կենսունակության ապահովման գործում նորարարությունների մեծացող դերով²²: Այսինքն, ՀՄՀ 4.0-ը գործոնների և հատկանիշների մանրամասն քարտեզ է, որը բնորոշում է արտադրողականությունը, տնտեսական աճը և մարդկային զարգացումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ The Global Competitiveness Report 2019, Klaus Schwab, World Economic Forum, http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

²¹ <https://gtmarket.ru/ratings/global-competitiveness-index>

²² Տե՛ս «Լույս» հիմնադրամ, միջազգային կառույցների կողմից հրապարակված ցուցանիշների ուսումնասիրություն, Գլոբալ մրցունակություն, 2018, <https://www.luvs.am/img/artpic/small/0300bc66605994700370%D4%B3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%B4%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B6%D5%A4%D5%A5%D6%84%D5%BD2018PDF.pdf>

ՀՄՀ-ի հաշվարկման նոր մեթոդաբանության հիմքում այն գաղափարն է, որ մարդկության զարգացման հիմնական շարժիչ ուժն ու անհրաժեշտ պայմանը կայուն, երկարաժամկետ և ներառական տնտեսական աճ ապահովող արտադրողականության աճն է: Հետևաբար, ՀՄՀ 4.0-ի շրջանակում գնահատվում են բոլոր այն գործոնները, որոնք պայմանավորում են երկրում կյանքի որակի երկարաժամկետ բարելավման կարևորագույն շարժիչ ուժ հանդիսացող արտադրողականության մակարդակը:

ՀՄՀ 4.0-ը 103 առանձին ցուցանիշների միավորման արդյունք է, որն ստացվել է միջազգային կազմակերպությունների տվյալների և Համաշխարհային տնտեսական ֆորումի գործադիր մարմնի հետազոտության (Executive Opinion Survey) համադրմամբ: Ցուցանիշները խմբավորված են մրցունակության 12 հենասյուներում, որոնք բաժանվում են 4 խմբի՝ նպաստավոր միջավայր, մարդկային կապիտալ, շուկաներ և նորարարություններ: Նախկին մեթոդաբանության համաձայն՝ կախված երկրների զարգացածության մակարդակից՝ կիրառվում էին ցուցանիշների ագրեգավորման տարբեր կշիռներ: Մինչդեռ, ՀՄՀ 4.0-ի հաշվարկման համար ցուցանիշներն ագրեգավորվում են նույն կշիռներով բոլոր երկրների համար: Համաթվի 12 հենասյուները ներկայացված են աղյուսակ 1-ում:

ՀՄՀ 4.0-ի ենթահամաթվերը²³ | Աղյուսակ 1.1


<i>Երկարաժամկետ միջավայր</i>	<i>Շուկաներ</i>
Ինստիտուտներ	Ապրանքների շուկա
Ենթակառուցվածքներ	Աշխատանքի շուկա
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Ֆինանսական համակարգ
Մակրոտնտեսական կայունություն	Շուկայի մեծություն
<i>Մարդկային կապիտալ</i>	<i>Նորարարություններ</i>
Առողջապահություն	Գործարար ակտիվություն
Կրթություն	Նորարարության կարողություն

2019 թ. զեկույցը, ընդգծելով մրցունակության խոր անկումը, կարևորում է դրա շտապ հաղթահարումը՝ արտադրողականությունն ու աճը վերականգնելու, այնուհետև կենսամակարդակը բարձրացնելու համար: «Երկրները տնտեսությունների վերականգնման ճանապարհին» վերնագրված «Գլոբալ մրցունակության զեկույց – 2020»-ի հատուկ թողարկման մեջ նախանշվում են հետճգնաժամային վերականգնման և հետագայում տնտեսական աճի արագացման առաջնահերթությունները, գնահատվում են համավարակի դեմ պայքարի արդյունավետության գործոնները, վերլուծվում է, թե որ երկրներն են տնտեսական համակարգերի փոխակերպմանը պատրաստված այնպես, որ ներդաշնակորեն զուգակցվեն «արտադրողականության», «մարդու և նրա պահանջմունքների» և «մոլորակի» նպատակները: «Գլոբալ

²³ Տե՛ս The Global Competitiveness Report 2019, Klaus Schwab, World Economic Forum: http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport2019.pdf

մրցունակության զեկույց – 2020»-ում դիտարկվում են տնտեսությունների վերականգնման և վերափոխման ուղիները չորս ոլորտներում՝ բարենպաստ միջավայր և խթաններ, մարդկային կապիտալ, շուկաներ և նորարարություններ²⁴:

2005-2019 թթ. ընթացքում ՀՀ-ն տնտեսական մրցունակության առումով գրանցել է ինչպես դիրքի բարելավում, այնպես էլ վատթարացում: Վերլուծության ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է ՀՀ-ի՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցում ընդգրկվելու ժամանակահատվածով: ՀՀ-ն Մրցունակության համաշխարհային զեկույցում ներառվել է 2005 թվականին: Այդ ժամանակ զեկույցում տեղ էին գտել 117 երկրներ, որոնց շարքում ՀՀ-ն զբաղեցնում էր 79-րդ տեղը (գծապատկեր 1.1):



Գծապատկեր 1.1

ՀՀ դիրքը «Գլոբալ մրցունակության զեկույցում», 2005-2019 թթ.²⁵

2000-ականների սկիզբը ՀՀ-ի համար կարելի է բնորոշել որպես բարձր տնտեսական աճի շրջան, երբ արագ տեմպերով աճում էր ՀՆԱ-ի իրական ծավալն ու մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որը վերոնշյալ զեկույցում առանցքային դեր ունեցող ցուցանիշներից է: Բարձր տնտեսական աճի արդյունքում էականորեն բարելավվել է երկրի մակրոտնտեսական միջավայրը, որը միաժամանակ զգալիորեն նպաստել է նաև մրցունակության մյուս հենասյուների ցուցանիշների բարելավմանը:

²⁴ <https://www.iksmedia.ru/news/5707448-Lish-izbrannve-ekonomiki-demonstrir.html>

²⁵ Տե՛ս The Global Competitiveness Report 2019, World Economic Forum: http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport2019.pdf , http://www.cdi.org.pe/pdf/IGC/2018/The_Global_Competitiveness_Report_2018.pdf <http://www3.weforum.org/docs/GCR2017-2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2017%E2%80%932018.pdf> , http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf http://www3.weforum.org/docs/gcr/2015-2016/Global_Competitiveness_Report_2015-2016.pdf , http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2014-15.pdf , http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf , http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2012-13.pdf , http://www3.weforum.org/docs/WEF_GCR_Report_2011-12.pdf , http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2010-11.pdf

2005-2008 թթ. «Մրցունակության համաշխարհային զեկույցն» ընդլայնել է իր աշխարհագրական ծածկույթը՝ ընդգրկելով ավելի մեծ թվով՝ 134 երկիր: 2008 թվականից հետո ՀՀ դիրքը ՄՀԶ-ում դրսևորել է առավել տատանողական վարքագիծ, սակայն դիրքի փոփոխության ընդհանուր միտումը դրական է: Տվյալ ժամանակահատվածում վատագույն դիրքը գրանցվել է 2010 թ., լավագույնը՝ 2019 թ.: Պետք է նշել, որ երկրների թվի աճով պայմանավորված փոփոխությունների ազդեցությունն այնքան էլ մեծ չէ. անկման պատճառ են հանդիսացել առանձին հենասյուների մասով փոփոխությունները: Մասնավորապես, 2009-2010 թթ. գրեթե բոլոր հենասյուներով անկում է արձանագրվել, սակայն դա հիմնականում պայմանավորված էր համաշխարհային ճգնաժամային իրավիճակով: Արձանագրված հաջորդ անկումը տեղի է ունեցել 2013-2014 թթ.: Այդ ժամանակահատվածում ՀՀ տնտեսության մրցունակությունը զգալի անկում է ապրել՝ պայմանավորված գրեթե բոլոր հենասյուների անկմամբ, բացի *ենթակատուցվածքներ, բարձրագույն կրթություն ու վերապատրաստում և տեխնոլոգիական պատրաստվածություն* հենասյուներից, իսկ նշված հենասյուներով գրանցված դրական տեղաշարժն այնքան էլ մեծ չէր: Այսպես, եթե դիտարկում ենք հորիզոնականների տեսանկյունից, ապա առաջընթացն ակնհայտ է, սակայն եթե դիտարկում ենք փոփոխությունն ըստ միավորների (1-7), ապա 3 հենասյուների՝ հորիզոնականներով գրանցած աճն անփոփոխ է թողել դրանք միավորների առումով: Այդ ժամանակահատվածում միավորներով դրական տեղաշարժ է գրանցվել միայն *շուկայի չափ* հենասյան պարագայում՝ անկախ մեկ հորիզոնականով իջնելու հանգամանքից: Բայց, ներկայացված իրավիճակի պարագայում անգամ, ՀՀ-ն տեղափոխվել է արդյունավետության վրա հիմնված փուլում գտնվող երկրների խումբ: Տեղափոխությունը պայմանավորված էր ՀՀ տնտեսության մրցունակության ավելի բարձր միավորներով, քանի որ ՀՀ-ն առաջինից երկրորդ փուլ անցման երկրների շարքում զիջում էր միայն 2 հենասյունով՝ *մակրոտնտեսական կայունություն և շուկայի չափ*: 2014 թվականից սկսած՝ ՀՀ դիրքը զեկույցում բարելավվել է: «Մրցունակության համաշխարհային զեկույցի» (ՄՀԶ) համաձայն ՀՀ դիրքի փոփոխություններն ավելի լավ պատկերացնելու համար ուսումնասիրենք ՀՀ դիրքը՝ ըստ առանձին 12 հենասյուների և տեսնենք, թե դրանցից յուրաքանչյուրի հետ կապված ինչ տատանումներ են գրանցվել 2011-2017 թթ. ընթացքում (հավելված 1): Մեթոդաբանության որոշակի փոփոխություններով պայմանավորված՝ 2018 և 2019 թվականների արդյունքները ներկայացված են առանձին (հավելված 2): Հավելված 1-ում ամփոփված տվյալները ցույց են տալիս, որ տատանումներ արձանագրվել են բոլոր հենասյուներով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել 2014-2015 թթ. արտաքին հատվածից փոխանցվող ցնցումներով, արժույթային տատանումներով, 2016 թ. պատերազմական իրավիճակով: 2005-2017 թթ. ընդգրկող ժամանակահատվածի սկզբի և վերջի արդյունքների համեմատությունից կարող ենք նկատել, որ դիրքի վատթարացում գրանցել են

հետևյալ հենասյուները՝ *ենթակատուցվածքներ, աշխատուժի շուկայի արդյունավետություն, շուկայի չափ*: Ընդհանուր առմամբ, վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ-ն բարելավել է իր դիրքերը 13 հորիզոնականով, իսկ վերջին տասը տարիների ընթացքում՝ 29 հորիզոնականով:

2019 թ. «Գլոբալ մրցունակության զեկույցի» հեղինակները Եվրասիական խմբում ընդգրկել են հետևյալ երկրները՝ Ռուսաստան, Մոլդովա, Ուկրաինա, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ղազախստան, Տաջիկստան և Ղրղզստան: 2019 թ. տվյալներով երկրների այս խմբում, նախորդ՝ 2018 թ. նկատմամբ, առաջընթաց են գրանցել Ղազախստանը (4 միավորով), Մոլդովան (2 միավորով), Ղրղզստանը (1 միավորով) և Հայաստանը (1 միավորով): Վատթարացում են գրանցել Վրաստանը (8 միավորով), Տաջիկստանը (2 միավորով) և Ուկրաինան (2 միավորով): Ռուսաստանը պահպանել է 2018 թ. դիրքը՝ մնալով խմբի առաջատարը: Աշխարհի բոլոր երկրների շարքում Ռուսաստանը 43-րդն է, Ղազախստանը՝ 55-րդը, Վրաստանը՝ 74-րդը, Ուկրաինան՝ 85-րդը, Մոլդովան՝ 86-րդը, Ղրղզստանը՝ 96-րդը, Տաջիկստանը՝ 104-րդը, և, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ն՝ 69-րդը: Զեկույցում ընդգրկված երկրների համար ԳՄԻ միջինացված ցուցանիշը 2019 թ. կազմում է 59.9 միավոր: Հայաստանի միջին ցուցանիշը 100 առավելագույնից կազմում է 61.3 միավոր, որը բարձր է համաշխարհային միջինից: Տարածաշրջանային հարևան Վրաստանի ցուցանիշը 60.6 միավոր է, որով այդ երկիրը վարկանշային ցանկում 74-րդն է: Հայաստանը, բացի Վրաստանից, մրցունակ է նաև Իրանի նկատմամբ (53.0 միավոր, 90-րդ հորիզոնական): Ադրբեջանը 62.7 միավորով զբաղեցնում է 58-րդ հորիզոնականը, իսկ Թուրքիան՝ 62.1-ով՝ 61-րդը: ԵՄՄ երկրների միջին վարկանշային գնահատականներն են՝ ՌԳ՝ 66.7, Ղազախստան՝ 62.9, Ղրղզստան՝ 54:

2019 թ. 12 հենասյուներից մի քանիսի մասով Հայաստանը զբաղեցրել է բավականին բարձր հորիզոնականներ, մյուսների մասով՝ ավելի ցածր: *Աշխատանքի շուկա* հենասյան մասով մեր երկրի գրանցած ամենաբարձր արդյունքը (141 երկրների շարքում) 32-րդ հորիզոնականն է, իսկ *շուկայի չափ* հենասյան մասով ամենացածր արդյունքը (141 երկրների շարքում)՝ 118-րդը: Ինչ վերաբերում է միավորներին, ապա պետք է նշել, որ Հայաստանն *ստորջապահության* առումով ստացել է ամենաբարձր միավորները (100-ից 81), *շուկայի չափի* առումով՝ ամենացածր միավորները (ընդամենը 38): Ըստ զեկույցի՝ մրցունակության տեսանկյունից Հայաստանի բացասական կողմերն են՝ կապիտալի շուկայի զարգացման ցածր մակարդակը, սոցիալական շուկայի ցածր մակարդակը, աշխատուժի շարժունակությունը երկրի ներքում, ՀՆԱ-ի փոքր ծավալը: Հայաստանը նաև ցածր հորիզոնականներ է զբաղեցնում նավահանգստային ծառայությունների արդյունավետության առումով (գնահատվել է երկրին ամենամոտ նավահանգիստը): Հայաստանի առավելություններն են՝ ցածր գնաճը, աշխատավարձի հարկման ցածր մակարդակը, բիզնես սկսելու համար պահանջվող կարճ ժամանակը, ՀՆԱ-ի նկատ-

մամբ վարկերի հարաբերակցության աճը, բնակչության՝ էլեկտրաէներգիայով ապահովվածությունը, օտարերկրացիներ վարձելու դժվարությունների բացակայությունը²⁶:

Ապրանքների շուկա հենասյան մրցունակության գնահատման համար օգտագործվում են այնպիսի ենթահամաթվեր, ինչպիսիք են ներքին մրցակցությունը, որն ընդգրկում է մրցակցության վրա հարկերի և սուբսիդիաների խեղաթյուրող ազդեցությունը, շուկայական գերակայության աստիճանը, ծառայությունների մրցակցության ցուցանիշները և առևտրի բացությունը, որն էլ, իր հերթին, ներառում է տուրքերի ու դրույքների հետ կապված ցուցանիշներ, ինչպես նաև սահմանային վերահսկողության արդյունավետությունը: ՀՀ-ն առավել բարենպաստ դիրքում է գտնվում առաջին ցուցանիշի՝ *ներքին մրցակցության* մասով:

Աշխատանքի շուկա հենասյան մրցունակության գնահատման համար էական նշանակություն ունեն ճկունությունը, մերիտոկրատիան (առավել ընդունակ և արժանի աշխատակիցների կողմից ղեկավարում) և մոտիվացիան: Այս ենթահամաթվերի կազմում ներառված լավագույն դիրք զբաղեցնող ցուցանիշներն են օտարերկրյա աշխատուժ վարձելու դյուրինությունը և աշխատանքային հարկի դրույքաչափը, մասնավորապես երկրորդ ցուցանիշի մասով ՀՀ-ն գրավում է առաջին հորիզոնականը:

Բարձր դիրք ունեցող հաջորդ հենասյունը գործարար ակտիվությունն է, որի հաշվարկի համար հիմք են ծառայում *վարչական պահանջներ* և *ձեռնարկարհրական մշակույթ* ենթահամաթվերը: Այս հատվածում լավագույն դիրք են զբաղեցնում բիզնես սկսելու արժեքը՝ 19-րդ հորիզոնական, բիզնես սկսելու ժամանակը՝ 8-րդ հորիզոնական, ձեռնարկատիրական ռիսկի նկատմամբ վերաբերմունքը՝ 28-րդ հորիզոնական, շրջադարձային գաղափարներ ընդունող ընկերությունները՝ 38-րդ հորիզոնական:

Ըստ դիրքի բարելավման՝ 2019 թ., նախորդ տարվա համեմատ, ՀՀ-ն լավագույն արդյունք է գրանցել *մակրոտնտեսական կայունություն* ենթահամաթվի դեպքում՝ բարելավելով իր դիրքը 25 հորիզոնականով: Հարկ է նշել, որ, նախորդ մեթոդաբանության համեմատ, ՀՄՀ 4.0-ում *մակրոտնտեսական կայունության* ենթահամաթիվը հաշվարկվում է երկու ցուցանիշների՝ գնաճի և պետական պարտքի միջոցով: Նախկինում *մակրոտնտեսական կայունության* ենթահամաթիվը հաշվարկվում էր՝ կիրառելով պետական բյուջեի պակասուրդը, համախառն խնայողությունները, գնաճը, պետական պարտքը և երկրի վարկանիշը: Գնաճը չափվում է սպառողական գների համաթվի միջին տարեկան տոկոսային փոփոխությամբ, և կայուն մակարդակ է համարվում 0.5%-ից 4.0% միջակայքը: Այն երկրները, որոնց գնաճը գտնվում է այդ միջակայքում, ստանում են առավելագույն 100 միավոր: Իսկ եթե փաս-

²⁶ Տե՛ս The Global Competitiveness Report 2019, World Economic Forum, http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport2019.pdf

տացի գնաճը դուրս է այդ միջակայքից, ապա հանվում են միավորներ՝ կայուն մակարդակից փաստացի գնաճի հեռավորության չափով: Հայաստանում 2017-2018 թթ. միջին գնաճը կազմել է 1.7%: 2019 թ. ՀՄՀ 4.0 գնկույցի համար որպես գնաճ ընդունվել է այդ ցուցանիշը, և քանի որ այն գտնվում է կայուն մակարդակում, Հայաստանը այս ցուցանիշով 2019 թ. ստացել է առավելագույն 100 միավոր և զբաղեցրել առաջին հորիզոնականը (մի շարք այլ երկրների հետ միասին): 2018 թ. Հայաստանն այս ցուցանիշով 97.9 միավորով 94-րդ հորիզոնականում էր:

Աղյուսակ 1.2-ում ներկայացվում են ՀՀ և ԵԱՏՄ անդամ երկրների դիրքերը 2019 թ. «Մրցունակության համաշխարհային զեկույցի» վարկանշավորման սանդղակում՝ ըստ առանձին հենասյուների:

Աղյուսակ 1.2

ԵԱՏՄ անդամ և ՀՀ հարևան երկրների դիրքը ՄՀԶ ում՝ ըստ առանձին հենասյուների, 2019 թ.²⁷

Երկիր	Հենասյուն*												
	Ինտերնյութներ	Ենթակառուցվածքներ	ՏՀՏ ընդունում	Մակրոարևմտալեզու կայունություն	Առաջնություն	Հմուտություններ	Ապրանքների շուկա	Աշխատանքի շուկա	Ֆինանսական համակարգ	Եռվայի չափ	Գործարար ակրիվություն	Նորարարական կայունություն	ՀՄՀ
Հայաստան	62	60	59	64	68	61	44	32	69	118	57	62	69
Ռուսաստան	74	50	22	43	97	54	87	62	95	6	53	32	43
Ղազախստան	64	67	44	60	95	57	62	25	104	45	35	95	55
Ղրղզստան	93	103	65	74	90	87	115	81	112	125	78	129	96
Վրաստան	43	73	55	84	87	46	48	37	91	104	58	91	74
Իրան	120	80	84	134	72	92	133	140	123	21	132	71	99
Թուրքիա	71	49	69	129	42	78	78	109	68	13	75	49	61
Ադրբեջան	49	38	73	103	98	48	23	21	96	67	23	68	58

* Կարմիր գույնը՝ վարագույն դիրք, կանաչը՝ լավագույն:

Ըստ աղյուսակի տվյալների՝ թեև ՀՀ-ն ոչ մի հենասյան գծով առաջատար չէ, սակայն ԵԱՏՄ անդամ երկրների շարքում առաջատար դիրք է զբաղեցնում *ինտերնյութներ, առողջություն, սպրանքների շուկա, ֆինանսական համակարգ* հենասյուների մասով: Մնացյալ հենասյուներով Հայաստանը բավականին հետ է ԵԱՏՄ երկրներից: Իսկ երբ ՀՀ-ն համեմատում ենք

²⁷ Տե՛ս The Global Competitiveness Report 2019, Klaus Schwab, World Economic Forum, http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport2019.pdf

միայն տարածաշրջանային երկրների՝ Վրաստանի, Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ, ապա նկատում ենք, որ այս դեպքում առաջատար է դառնում միայն մակրոտնտեսական կայունությամբ:

ԵՄՏՄ ընձեռած հնարավորությունները կարող են նպաստել ՀՀ դիրքի՝ առնվազն 4 հենասյուների գծով բարելավմանը՝ *սպրանքների շուկա, աշխատանքի շուկա, շուկայի չափ և նորարարական կարողություն: Ասպրանքների շուկայի արդյունավետություն* հենասյան տեսանկյունից, ՀՀ-ն լավագույն դիրքն է զբաղեցնում հենց ԵՄՏՄ անդամ երկրների շարքում և բավականին լավ դիրք՝ տարածաշրջանում: Աշխատանքի շուկա հենասյան մասով ՀՀ-ն երկրորդն է Ղազախստանից հետո՝ ԵՄՏՄ շրջանակներում և 3-րդը՝ դիտարկված բոլոր երկրների մեջ: Ըստ էության, այս հենասյունը տարեցտարի բարելավվում է, քանի որ բարձրանում է աշխատուժի որակը, մասնավորապես՝ կապված արտասահմանյան գործուղումների հետ: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիների աշխատանքային միգրացիան բավականին բարձր է, արգելքները՝ քիչ, ինչն էլ նպաստում է տվյալ հենասյան մրցունակության բարձրացմանը:

Հարկ է ընդգծել, որ ամենակարևոր հենասյուներից մեկի՝ *ֆինանսական համակարգի* մասով ԵՄՏՄ անդամ բոլոր պետությունների մեջ Հայաստանն առաջին հորիզոնականում է, իսկ տարածաշրջանում՝ երկրորդ՝ ընդամենը 1 միավորով զիջելով առաջատարին: Այս արդյունքը փաստում է, որ ՀՀ-ն ունի կայուն ֆինանսական համակարգ, ինչի ապացույցներից է նաև այն, որ 2000-ական թվականներից ի վեր ՀՀ ներթափանցած արտաքին ֆինանսատնտեսական ցնցումները չեն խաթարել երկրի ֆինանսական կայունությունը:

Այսպիսով, ամփոփելով վերլուծության այս հատվածը, կարող ենք արձանագրել, թե որոնք են ՀՀ մրցակցային համեմատական առավելություններն ու թերությունները:

ՀՀ մրցակցային առավելությունների շարքին կարելի է դասել գնաճի ցածր մակարդակը, աշխատավարձային հարկերի ցածր մակարդակը, մասնավոր հատվածի վարկեր/ՀՆԱ մակարդակը և դրա աճի միտումը, էլեկտրաէներգիայի հասանելիությունն ու բնակչության էլեկտրաֆիկացման մակարդակը, օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու դյուրինությունը և քիզնես սկսելու համար անհրաժեշտ կարճ ժամանակահատվածը:

ՀՀ մրցունակության մակարդակի բարձրացմանը խոչընդոտում են սոցիալական կապիտալի, կապիտալի շուկայի զարգացածության ցածր մակարդակը, աշխատուժի ցածր շարժունությունը երկրի ներսում, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) փոքր ծավալները և արտաքին շուկաներից տրանսպորտային կախվածությունը: Գնողունակության պարիստետով հաշվարկված ՀՆԱ ցուցանիշով Հայաստանը 141 երկրների շարքում 120-րդն է և ցածր հորիզոնականներ է զբաղեցնում նավահանգստային ծառայությունների արդյունավետությամբ:

1.3

ՀՀ արդյունաբերության մրցունակության վերլուծությունը՝ ըստ արդյունաբերության մրցունակության համաթվի

Արդյունաբերության մրցունակության համաթիվը (ԱՄՀ) (Competitive Industrial Performance Index (CIP)), որը հաշվարկվում է ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (United Nations Industrial Development Organization (UNIDO)) կողմից, սկսած 2003 թվականից, «ամենաերիտասարդ» համաթիվն է աշխարհի երկրների մրցունակության ամփոփ համաթվերի խմբում²⁸: Ըստ էության, այն ցույց է տալիս արդյունաբերության ոլորտում ավելացված արժեքի ստեղծման շարժը, այս կամ այն երկրի դիրքավորումը մշակող արդյունաբերության համաշխարհային դասակարգման սանդղակում: Համաթիվը նաև հնարավորություն է տալիս ըմբռնելու, թե այս կամ այն երկրում տնտեսական աճն իրականում ինչ գործոնների հաշվին է ձեռք բերվել: Այս իմաստով, ԱՄՀ-ի միջոցով հնարավոր է նաև գնահատել տնտեսական աճի որակը, տնտեսության կառուցվածքային փոփոխությունները: Համաթիվը բացառում է հանքահումքային ապրանքների, վերամշակման ցածր մակարդակ ունեցող ապրանքների արտադրության ազդեցությունները ՀՆԱ-ի իրական աճի գնահատումներում: *Մշակող արդյունաբերության մրցունակության համաթիվն*²⁹ արտացոլում է երկրների՝ մշակող արդյունաբերության ապրանքները մրցակցային մակարդակում արտադրելու և արտահանելու կարողությունը: Այն արտացոլում է UNIDO-ի փորձագետների այն տեսակետը, ըստ որի, իր բազմիմաստ բնույթից ելնելով, մրցունակությունը տնտեսության համար ավելի ամրողջական բնութագիր է, քան տնտեսական աճի ընթացիկ տեմպը³⁰: Մրցունակությունը բնութագրում է տնտեսության՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում աճի որոշակի տեմպերի հասնելու կարողությունը: Այսպիսով, *արդյունաբերական մրցունակության համաթիվը* կենտրոնանում է մշակող արդյունաբերության զարգացման վրա՝ միևնույն ժամանակ նկատի ունենալով դրա շարժընթացի ազդեցությունը երկարաժամկետ աճի տեմպերի վրա:

Համաթիվի հեղինակները ձգտում են մեթոդաբանության առավելագույն պարզության՝ միաժամանակ մերժելով ցանկացած սուբյեկտիվ տվյալ, այդ թվում՝ հետազոտության տվյալները: Վարկանիշը կառուցելիս օգտագործվում են 8 ցուցանիշներ, որոնք բաշխված են 3 խմբերում: Վարկանիշի կառուցման մեթոդաբանությունը ենթադրում է դրա օբյեկտիվությունը և կենտրոնացումը բարձր տեխնոլոգիական ոլորտների վիճակի գնահատման վրա:

²⁸ St'u B. Мировов, Индекс конкурентоспособности ЮНИДО и болезни российской экономики, <https://issek.hse.ru/press/97147261.html>


²⁹ <https://review.uz/post/uzbekistan-vklyuchen-v-reyting-indeksa-konkurentosposobnosti-promshlennosti-sip-unido>

³⁰ <https://issek.hse.ru/press/97147261.html>

Սա, իր հերթին, թույլ է տալիս *արդյունաբերական մրցունակության համաթիվն* օգտագործել որպես պետական կարգավորման ազդեցության որակը գնահատելու չափանիշ:

Յուրաքանչյուր ազգային տնտեսության համաթվի արժեքը տատանվում է 0-ից 1 միջակայքում, որտեղ 1-ը ներկայացնում է կատարյալ վիճակը: 2020 թ. լավագույն երեք երկրներն ունեն հետևյալ արժեքները՝ Գերմանիա՝ 0,471, Չինաստան՝ 0,372 և Կորեայի Հանրապետություն՝ 0,349³¹: Սա արտացոլում է այն փաստը, որ ոչ մի երկիր CIP-ի բոլոր ութ ցուցանիշներով առաջատար չէ: «ԱՄՀ-2020» վարկանիշում ՀՀ-ն զբաղեցրել է 103-րդ հորիզոնականը՝ 0.012 ցուցանիշով³², իսկ նախորդ՝ 2018 թ. գեկույցում, եղել է 99-րդ տեղում (ցուցանիշը՝ 0.0128)³³:

1993-2018 թթ. ՀՀ ՀՆԱ-ի և ԱՄՀ-ի շարժընթացների համեմատությունից պարզ է դառնում, որ, ընդհանուր առմամբ, այդ ցուցանիշների փոփոխությունների միջև կա որոշակի համադրելիություն (գծապատկեր 2): Տեսանելի է, որ տնտեսական աճի և անկման ժամանակահատվածներն ուղեկցվում են ԱՄՀ-ի համապատասխան աճով և նվազմամբ:



Գծապատկեր 1.2

ՀՀ տնտեսական աճի և ԱՄՀ-ի շարժընթացը 1993-2018 թթ. ժամանակահատվածում³⁴

³¹ https://mineconomy.gov.uz/uploads/%D0%98%D0%BD%D0%B4%D0%B5%D0%BA%D1%81_%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BA%D1%83%D1%80%D0%B5%D0%BD%D1%82%D0%BE%D1%81%D0%BF%D0%BE%D1%81%D0%BE%D0%B1%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8_%D0%BF%D1%80%D0%BE%D0%BC%D1%8B%D1%88%D0%BB%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8_2020.pdf


³² <https://review.uz/post/uzbekistan-vklvuchen-v-revting-indeksa-konkurentosposobnosti-promshlennosti-sip-unido>

³³ <https://stat.unido.org/cip/>

³⁴ Այս և մյուս գծապատկերների տվյալները վերցված են ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպության (UNIDO) վիճակագրական տվյալների շտեմարանից՝ <https://stat.unido.org/cip/> և/կամ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազայից՝ <https://armstat.am>

1991-1994 թթ. ՀՀ ՀՆԱ-ի կտրուկ՝ շուրջ 60% անկումն ուղեկցվել է երկրի ԱՄՀ-ի նշանակալի նվազմամբ և այդ ցուցանիշի գծով համաշխարհային դասակարգման ցանկում ՀՀ զբաղեցրած տեղի (վարկանիշի) անկմամբ:


Հետագա տարիներին, չնայած տնտեսական աճի որոշակի վերականգնմանը, ԱՄՀ-ն շարունակել է նվազել, ինչը տրամաբանական է, քանի որ 1990-ականները, տրանսպորտային շրջափակման, հումքի մատակարարումների և պատրաստի արտադրանքի վաճառքի շուկաների կորստի պատճառով, ՀՀ արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների ճնշող մեծամասնության համար ճգնաժամային են եղել (գծապատկեր 1.3): 2000-ական թվականների սկզբից ՀՀ արդյունաբերության ոլորտում նկատվում է որոշակի դրական տեղաշարժ: Մինչ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը (2008-2009 թթ.), ՀՀ տնտեսությունը երկնիշ աճ է գրանցել՝ առավելապես շինարարության և դրան կապակցված շինանյութերի արդյունաբերության ոլորտների աճով պայմանավորված: Շինարարության ոլորտի աճը պայմանավորված էր ինչպես մասնավոր հատվածի ներդրումներով, այնպես էլ պետական բյուջեի կապիտալ ծախսերի և դոնոր կազմակերպությունների նվիրատվությունների աճով, որոնք ուղղվում էին առավելապես ենթակառուցվածքներում ներդրումներին: Արդյունքում երկիր էին ներհոսում արտաքին մեծածավալ դրամական փոխանցումներ, որոնք էլ նպաստեցին նաև ՀՀ հիպոթեքային շուկայի ձևավորմանը և զարգացմանը: Հետագայում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, ԱՄՀ-ն դրսևորել է դանդաղ, ոչ համաչափ աճի միտում, որը դարձյալ ընդհատվել է 2020 թ.: «Արդյունաբերության մրցունակության համաթիվ – 2020» վարկանիշում ՀՀ-ն զբաղեցրել է 103-րդ հորիզոնականը՝ 0.012 ցուցանիշով, իսկ նախորդ՝ 2018 թ. զեկույցում եղել է 99-րդ տեղում՝ 0.0128 ցուցանիշով:



Գծապատկեր 1.3 | ՀՀ ԱՄՀ ի և դրա գծով ՀՀ վարկանիշի շարժընթացը 1990-2018 թթ.

Վերլուծությունները ցույց են տալիս, որ անգամ 2000-ականների երկնիշ տնտեսական աճի ժամանակահատվածում, ՀՀ մշակող արդյունաբերության մրցունակության բարձրացման առումով, էական տեղաշարժեր չեն գրանցվել:

Այսպես, մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ի մեջ շեշտակիորեն նվազել է (գրեթե 2 անգամ). եթե 2004 թ. ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ կազմել է 25.6%, ապա 2008-ին այն նվազել է մինչև 14.2% (գծապատկեր 1.4): Հետագայում, ՀՆԱ-ի մեջ շինարարության ոլորտի մասնաբաժնի նվազմանը զուգընթաց, մշակող արդյունաբերության մասնաբաժինն սկսել է ավելանալ և 2020 թ. կազմել է ՀՆԱ-ի շուրջ 22%-ը:




Գծապատկեր 1.4

ՀՀ ՀՆԱ-ի ծավալների և մշակող արդյունաբերության՝ ՀՆԱ ու մասնաբաժնի շարժընթացը 2004-2020 թթ.

Վերը նկարագրված գործընթացներն արտացոլված են ՀՀ ԱՄՀ-ի ու դրա առանձին բաղադրիչների փոփոխություններում: Արդյունաբերության մրցունակությունը, առաջին հերթին, գնահատվում է բնակչության մեկ շնչի հաշվով *արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքի համաթվի* (MVA_{pc}), ինչպես նաև *բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արտահանման համաթվի* (MX_{pc}) միջոցով: Ցուցանիշների այս խմբի ներգործությունը ՀՀ ԱՄՀ-ի շարժընթացի վրա ունեցել է միջին մակարդակի ազդեցություն (գծապատկեր 1.5):


Հատկանշական է, որ 1990-1991 թթ. ՀՀ ԱՄՀ-ն և արդյունաբերության ոլորտում բնակչության մեկ շնչի հաշվով ավելացված արժեքի ստեղծման ցուցանիշները գտնվել են միևնույն մակարդակի վրա: Հետագայում, սակայն, բնակչության մեկ շնչի հաշվով ավելացված արժեքի ստեղծման ցուցանիշը գրեթե կրկնակի բարձր է եղել, քան ԱՄՀ-ն: 1990-2018 թթ. ԱՄՀ-ն տատանվել է 0.007-0.013-ի միջակայքում, իսկ MVA_{pc} -ը՝ 0.008-0.022-ի սահմաններում: Դրան հակառակ, ԱՄՀ-ի համեմատ, շատ ավելի ցածր մակարդակի վրա է գտնվել MX_{pc} ցուցանիշը, որը տատանվել է 0.003-0.015 միջակայքում:



Գծապատկեր 1.5

ՀՀ ԱՄՀ-ի և արդյունաբերական արտադրանքի ու արտահանման կարողության համաթվերի շարժընթացը 1990-2018 թթ.

Ուսումնասիրվող ժամանակահատվածում *արդյունաբերության տեխնոլոգիական խորության և արդիականացման ենթահամաթվի* ցուցանիշները³⁵, ի տարբերություն առաջին ենթահամաթվի ցուցանիշների, ունեցել են փոփոխությունների գրեթե նույն հետագիծը, ինչ ԱՄՀ-ն (գծապատկեր 1.6):



Գծապատկեր 1.6


ՀՀ ԱՄՀ-ի և Արդյունաբերության տեխնոլոգիական խորությունը և արդիականացումը ներկայացնող համաթվերի փոփոխությունները 1990-2018 թթ.

Այս զարգացումները փաստում են, որ ՀՀ արդյունաբերության ոլորտը վերջին մեկուկես տասնամյակում որակական առումով բացասական փոփոխություններ է կրել: Դա հատկապես վերաբերում է ոլորտի բազմազանեցվածության (դիվերսիֆիկացվածության) նվազմանը, մեծ ավելացված արժեք

³⁵ ՀՆԱ-ի մեջ վերանշաղկող արդյունաբերության ավելացված արժեքի մասնաբաժնի համաթիվ (MVA_{sh}), մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրությունների ավելացված արժեքի մասնաբաժնի համաթիվ ($MHVA_{sh}$), արդյունաբերականացման արդյունավետության համաթիվ (IND_{int}):

ստեղծող ենթաուղորտների և արտադրությունների էական կրճատմանը: Մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ փոքր է բարձրտեխնոլոգիական արտադրությունների մասնաբաժինը: Ճիշտ է, վերջին տարիներին INDInt-ի գծով որոշ դրական փոփոխություններ արձանագրվել են, այդուհանդերձ, լուրջ որակական փոփոխություններ դեռևս առկա չեն:

ՀՀ ԱՄՀ երրորդ խմբի ցուցանիշները վերաբերում են համաշխարհային տնտեսության մեջ երկրի արդյունաբերության ոլորտի գրաված տեղի տարբեր ասպեկտներին, որոնք դիտարկվող ժամանակահատվածում տարբեր փոփոխություններ են կրել: 5 բաղադրիչ ունեցող³⁶ այդ խմբի ցուցանիշների փոփոխությունները երկարաժամկետում ներկայացված են գծապատկեր 1.7-ում:



Գծապատկեր 1.7


ՀՀ ԱՄՀ-ի և համաշխարհային տնտեսության վրա ՀՀ արդյունաբերության ազդեցության համաթվերի շարժընթացը 1990-2018 թթ.

ՀՀ արտահանման մեջ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման մասնաբաժնի համաթիվը (MX_{sh}) 1990-2018 թթ. շարունակել է մնալ հարաբերականորեն բարձր մակարդակի վրա՝ 0.631-0.930, ինչը ԱՄՀ-ի բոլոր ենթացուցիչների մեջ ամենաբարձրն է (գծապատկեր 1.7, ձախ առանցք): Մշակող արդյունաբերական արտադրանքի ընդհանուր արտահանման մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման մասնաբաժնի համաթիվը (MHX_{sh}) դիտարկվող ժամանակահատվածում տատանվել է 0.106-0.437 միջակայքում, իսկ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման որակի համաթիվը (MXQual) տատանվել է 0.406-0.668 միջակայքում (գծապատկեր 1.7, ձախ առանցք): Ինչ վերաբերում է ար-

³⁶ Համաշխարհային արդյունաբերական ավելացված արժեքի մեջ երկրի տնտեսության մասնաբաժնի համաթիվ (ImWMA), Արդյունաբերական (մշակող) արտադրանքի համաշխարհային առևտրում տնտեսության մասնաբաժնի համաթիվ (ImWMT), Արտահանման մեջ արդյունաբերական (մշակող) արտադրանքի արտահանման մասնաբաժնի համաթիվ (MXsh), Արդյունաբերական (մշակող) արտադրանքի ընդհանուր արտահանման մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման մասնաբաժնի համաթիվ (MHXsh), Արդյունաբերական (մշակող) արտադրանքի արտահանման որակի համաթիվ (MXQual):

դյունաբերության մրցունակության երրորդ ենթահամաթվի մնացյալ երկու ցուցանիշներին (համաշխարհային արդյունաբերական ավելացված արժեքի մեջ երկրի տնտեսության մասնաբաժնի համաթիվ՝ ImWMA և մշակող արդյունաբերության արտադրանքի համաշխարհային առևտրում տնտեսության մասնաբաժնի համաթիվ՝ ImWMT), ապա դրանց գծով փոփոխությունները և ազդեցություններն էական չեն:

ՀՀ տնտեսության, մասնավորապես՝ արդյունաբերության ոլորտի առաջանցիկ զարգացման ու դրա տեխնոլոգիական արդիականացման ակնկալիքները, առնվազն վերջին 6 տարիներին, հիմնականում կապված են եղել նաև ԵԱՏՄ անդամակցության հետ: Ակնկալվում էր, որ Մաքսային միությանն անդամակցությունն ու շուրջ 170 միլիոն բնակչություն ունեցող տարածաշրջանային շուկայում միասնական մաքսային պայմաններով առևտրատնտեսական գործունեություն ծավալելու հեռանկարը՝ աշխատանքի, կապիտալի, տեխնոլոգիաների և այլ ռեսուրսների ազատ փոխանակման, շուկաների ու կարգավորումների միասնականացման, գործարար մշակույթի և տնտեսավարման պայմանների ներդաշնակեցման հնարավորություններից օգտվելը, թույլ կտար էապես բարելավել տնտեսության մրցունակությունը և ամրապնդել երկրի մրցակցային դիրքը համաշխարհային շուկայում: Սակայն վերլուծությունները ցույց են տալիս, որ այդ ակնկալիքների զգալի մասն այդպես էլ մնում է չիրականացված (գծապատկեր 1.8):



Գծապատկեր 1.8

ԵԱՏՄ երկրների ԱՄՀ շարժընթացը 1990-2018 թթ.

Այսպես, Ռ-Դ արդյունաբերության մրցունակության մակարդակն անհամեմատ ավելի բարձր է, քան Հայաստանինը և Ղրղզստանինը: Թեև ցուցանիշների միջև այդ խզումն արդեն առկա էր 1990 թ., սակայն վերջին մեկուկես տասնամյակում այն ավելի է խորացել: Ըստ UNIDO-ի³⁷ արդյունաբերու-

³⁷ St'u Организация объединенных наций по промышленному развитию, ежегодный доклад ЮНИДО 2019 год, 2020, <https://www.unido.org/sites/default/files/files/2020-5/Annual%20Report%202019%20%28RUS%29.pdf>

թյան մրցունակության համաթվի՝ Հայաստանին առավելապես բնորոշ են «միջինից ցածր», իսկ Ղրղզստանին՝ «ցածր» վարկանշային դիրքավորումները: Ռուսաստանը 1990-1991 թթ. ունեցել է արդյունաբերության մրցունակության «բարձր» վարկանշային դիրք, հետագայում այն որոշակիորեն նվազել է, ու ՌԴ-ն դիրքավորվել է «միջինից բարձր» որակական գնահատման միջակայքում:

ԵԱՏՄ անդամ մյուս երկու երկրները՝ Ղազախստանը և Բելառուսը, *արդյունաբերության մրցունակության համաթիվ* վարկանիշում դիտարկվող ժամանակաշրջանում զբաղեցրել են «միջին» կամ «միջինից բարձր» վարկանշային դիրք: Բելառուսն իր արդյունաբերության մրցունակության դիրքը, կարելի է ասել, մշտապես կայուն է պահել՝ դիրքավորվելով UNIDO-ի ցանկի «միջինից բարձր» գնահատական ենթադրող միջակայքում, իսկ Ղազախստանը դիտարկվող ժամանակահատվածում հիմնականում դիրքավորվել է մրցունակության «միջին» մակարդակ ենթադրող հորիզոնականներում՝ առանձին տարիներին բարձրանալով «միջինից բարձր» վարկանշավորման տիրույթ:

2020 թ. *արդյունաբերության մրցունակության համաթիվով* ԱՊՀ երկրների զբաղեցրած հորիզոնականներն են՝ Ռուսաստան՝ 32-րդ (ցուցիչը՝ 0.097), Բելառուս՝ 47-րդ (ցուցիչը՝ 0.063), Ղազախստան՝ 68-րդ (ցուցիչը՝ 0.035), Ուկրաինա՝ 69-րդ (ցուցիչը՝ 0.035), Ուզբեկստան՝ 92-րդ (ցուցիչը՝ 0.017), Ադրբեջան՝ 120-րդ (ցուցիչը՝ 0.008), Մոլդովա՝ 11-րդ (ցուցիչը՝ 0.01), Ղրղզստան՝ 122-րդ (ցուցիչը՝ 0.008) և Տաջիկստան՝ 129-րդ (ցուցիչը՝ 0.005)³⁸: Աշխարհում 2018 թ. ԱՄՀ միջին ցուցանիշը կազմել է 0.067³⁹:

ՀՀ ՀՆԱ-ի և ԱՄՀ-ի ցուցանիշների միջև որոշակի համադրելիության պարագայում, այնուամենայնիվ, տնտեսական աճը միշտ չէ, որ ուղեկցվել է ԱՄՀ-ի համապատասխան աճով:

1990-ականներին՝ տնտեսական աճի որոշակի վերականգնման փուլում, ԱՄՀ-ն նվազել է, 2000-ականների դրական տեղաշարժից հետո, ինչպես նաև հետճգնաժամային տարիներին, արձանագրվել է համաթվի դանդաղ, ոչ համաչափ աճման միտում, որը ընդհատվել է՝ առողջապահական շուկի հետևանքով: ՀՀ ԱՄՀ-ի և դրա առանձին բաղադրիչների փոփոխությունները հիմնականում զուգամիտվում են: ՀՀ արդյունաբերության մրցունակության մակարդակը բնութագրող ցուցանիշները համաշխարհային վարկանշավորման սանդղակում դեռևս բավականին ցածր են: Դա պայմանավորված է արդյունաբերության կառուցվածքային և որակական անբարենպաստ փոփոխություններով՝ արդյունաբերության բազմազանեցվածության անկմամբ, մեծ ավելացված արժեք ստեղծող արդյունաբերական արտադրությունների էական կրճատմամբ, մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ

³⁸ <https://review.uz/post/uzbekistan-vklyuchen-v-reyting-indeksa-konkurentosposobnosti-promshlennosti-sip-unido>, <https://www.belvpo.com/113907.html/>

³⁹ <https://stat.unido.org/country/ARM.pdf>

բարձրտեխնոլոգիական արտադրանքի փոքր տեսակարար կշռով: Թեև վերջին 3-4 տարիներին արդյունաբերության ոլորտում որոշ դրական տեղաշարժեր կան, սակայն կտրուկ առաջընթաց ապահովել դեռևս չի հաջողվել:

ԵԱՏՄ երկրներն իրենց տնտեսական և տեխնոլոգիական զարգացման մակարդակներով շարունակում են զգալիորեն տարբերվել միմյանցից: Այդ խզումը վերջին տարիներին խորանում է: ԱՊՀ երկրների շարքում նույնպես առկա է էական շեղում: Միայն ՌԴ-ն է աչքի ընկնում ԱՄՀ-ի համաշխարհային միջինից բարձր ցուցանիշով:

1.4

Ընդհանուր գործոնային արտադրողականության և արտադրության կազմակերպման որակի գնահատումը ՀՀ-ում

Մասնագիտական գրականության մեջ տնտեսության արդյունավետության գնահատմանն անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, որոնք գնահատումը դիտարկել են տարբեր տեսանկյուններից, 'ույնիսկ' ավելի մանրամասն վերլուծության նպատակով, հասկացության մեջ տարանջատել են մի քանի բաղադրիչ: Այսպես, Դ. Հադոնը արդյունավետությանը վերագրել է երեք հիմնական հատկություն՝ տեխնիկական, տնտեսական և բաշխման⁴⁰: Լ. Մելեցկին և Մ. Ստանիկովան եվրոպական երկրների օրինակով վերլուծել են արդյունավետությունը՝ վերջինս բնորոշելով որպես մրցակցային ներուժի մակարդակի արտացոլում⁴¹:

Ընդհանուր գործոնային արտադրողականության և արտադրության կազմակերպման որակի չափման տեսականորեն հիմնավորված և տարածված ցուցանիշներից մեկը *Մալմբյուսթի արտադրողականության համաթիվն* է, որն ուսումնասիրության բովանդակության տեսանկյունից առանձնանում է այլ գնահատականների շարքում: Համաթիվն առաջին անգամ ներկայացվել է 1953 թ. շվեդ տնտեսագետ և վիճակագիր Սթեն Մալմբյուսթի կողմից՝ որպես սպառողական ռեսուրսների մասին վերլուծության մեջ որակական ցու-

⁴⁰ St' u D. Hawdon, Efficiency, performance and regulation of the international gas industry - a bootstrap DEA approach. Energy Policy: 31/11, 2003, էջ 1167-1178, https://scholar.google.com/scholar?hl=ru&as_sdt=0%2C5&q=D.+Hawdon%2C+Efficiency%2C+performance+and+regulation+of+the+international+gas+industrv+-+a+bootstrap+DEA+approach.+Energy+Policy, [https://doi.org/10.1016/s0301-4215\(02\)00218-5](https://doi.org/10.1016/s0301-4215(02)00218-5)

⁴¹ St' u L. Melecky, M. Stanickova, National Efficiency Evaluation of Visegrad Countries in Comparison with Austria and Germany by Selected DEA Models. In: International Conference on Mathematical Methods in Economics, 2012, էջ 575-580, https://scholar.google.com/scholar?hl=ru&as_sdt=0%2C5&q=L.+Melecky%2C+M.+Stanickova%2C+National+Efficiency+Evaluation+of+Visegrad+Countries+in+Comparison+with+Austria+and+Germany+by+Selected+DEA+Models.+In%3A+International+Conference+on+Mathematical+Methods+in+Economics, <http://doi.org/10.7441/ioc.2012.03.05>

ցանկիչ, որը հետագայում բավականին հայտնի է դարձել և կիրառվել է այլ հետազոտողների շրջանում: Մալմքվիսթն առաջինն էր, ով համաթվային ցուցանիշի հաշվարկի հիմքում դրեց հեռավորության գնահատմամբ ֆունկցիա (distance function)⁴²: 1982 թ. Դ. Քեյվարը և այլք այն առաջարկեցին որպես տվյալների պարփակման եղանակով վերլուծության հենք⁴³ և արտադրողականության չափման իրենց գաղափար: Վերջիններիս և Ռ. Ֆարեի արդյունավետության չափման մոտեցումների միավորման միջոցով Ֆարեն և այլք Մալմքվիսթի արտադրողականության համաթվի մեջ տարանջատեցին տեխնիկական արդյունավետության փոփոխությունների և տեխնոլոգիայի սահմանի փոփոխությունների գաղափարները⁴⁴:

Համաթիվը սովորաբար կիրառվում է ժամանակի ընթացքում արտադրողականության փոփոխության չափման նպատակով և տրոհվում է արդյունավետության փոփոխության և տեխնոլոգիական փոփոխության ենթահամաթվերի: Առաջինը վերաբերում է գործոնների արդյունավետության և որոշում ընդունող միավորի կողմից առկա գործոնների օպտիմալ օգտագործման փոփոխությանը, այնուհետ՝ գործոնային արդյունավետության փոփոխությանը (ԳԱՓ), երկրորդը՝ նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում արտադրության արդյունավետության փոփոխությանը, այլ կերպ ասած՝ տեխնոլոգիական առաջընթացին (այսուհետ՝ ՏԱՓ): Մալմքվիսթի ընդհանուր համաթվի այսպիսի տարանջատումը մասնագիտական գրականության մեջ այժմ հանդես է գալիս որպես ընդհանուր համաձայնեցված մոտեցում: Հաշվարկն իրականացվում է ստատիկ պայմաններում խմբերի համեմատությունների հիման վրա⁴⁵: Ընդ որում՝ համաթիվը կիրառվում է ինչպես ոլորտային, այնպես էլ տարածաշրջանային գնահատումների նպատակով, այսինքն՝ դրա միջոցով արտադրողականությունը կարելի է գնահատել է ինչպես կազմակերպության, այնպես էլ տնտեսության առանձին ոլորտների կամ ամբողջ երկրի մասշտաբով⁴⁶:

⁴² St'u W. E. Diewert, The early history of price index research, NBER working paper series: 2713, 1988, էջ 52, https://www.nber.org/system/files/working_papers/w2713/w2713.pdf

⁴³ St'u D. W. Caves, L. R. Christensen, W. E. Diewert, The economic theory of index, input, output and productivity, *Econometrica*: 50/6, 1982, էջ 1393–1414, https://scholar.google.com/scholar?hl=ru&as_sdt=0%2C5&q=++D.+W.+Caves%2C+L.+R.+Christensen%2C+E.+W.+Diewert%2C+The+economic+theory+of+index+numbers+and+the+measurement+of+input%2C+output%2C+and+productivity, <https://doi.org/10.2307/1913388>


⁴⁴ St'u R. Fare, S. Grosskopf, M. Norris, et al., Productivity growth, technical progress and efficiency change in industrialized countries, *Am Econ Rev*: 84/1, 1994, էջ 66–83:

⁴⁵ St'u A. S. Camanho, R. G. Dyson, Data Envelopment Analysis and Malmquist Indices for Measuring Group Performance, *Journal of Productivity Analysis*: 26:35–49, 2006, էջ 36:

⁴⁶ St'u F. Dai, G. Liu, R&D efficiency and productivity growth: A Malmquist index analysis of High-Tech industries in China. In: International Conference on Management Science and Engineering, 2009, էջ 1866–1872, <https://doi.org/10.1109/icmse.2009.5317726>. S. Sharma, V. Thomas, Inter-country R&D efficiency analysis: An application of data envelopment analysis. *Scientometrics*: 76/3, 2008, էջ 483–501, <https://doi.org/10.1007/s11192-007-1896-4>. W. CH. Lu, T. K. Liu, Malmquist indices of R&D productivity growth in taiwanese ic-design industry. *Global journal of business research*: 4/1, 2010, S. Park, Evaluating

1995-2019 թվականներն ընդգրկող և 123 երկիր ու երկրների խմբի (ներառյալ աշխարհը) որպես մեկ որոշում ընդունող միավոր պանելային տվյալների հիման վրա հաշվարկվել է Մալմքվիսթի ընդհանուր գործոնային արտադրողականության (ԸԳԱ) համաթիվը: Հաշվարկների համար տեղեկատվական բազա են հանդիսացել Համաշխարհային բանկի և Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալները: Հաշվարկների հիմքում ընդգրկվել են ՀՆԱ-ն (2010 թ. հաստատուն գներով)⁴⁷ որպես արտադրության համախառն արդյունք, հիմնական կապիտալի համախառն կուտակումը (2010 թ. հաստատուն գներով)⁴⁸ և աշխատանքային ռեսուրսները⁴⁹ որպես արտադրության գործոններ կամ ինչպես աշխատանքի բնույթն է ենթադրում՝ տնտեսական ռեսուրսներ:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում իրականացվող հետազոտական գործունեությունը ենթադրում է մի շարք նոր վիճակագրական ծրագրային փաթեթների կիրառում: Մալմքվիսթի համաթվի վերաբերյալ մեր կողմից իրականացված ուսումնասիրության տեխնիկական լուծումները տրվել են այդ ծրագրերից մեկի (DEAP Ver 2.1⁵⁰) միջոցով:



Գծապատկեր 1.9

Գործունային և տեխնիկական արդյունավետությունների միջին արժեքների կետային քարտեզը⁵¹

the efficiency and productivity change within government subsidy recipients of a national technology innovation research and development program. R&D Management: 45/5, 2015, էջ 549-568, <https://doi.org/10.1111/radm.12097>. J. Y. Lee, Global Trends of Productivity Growth: Evidence from the Malmquist Index, Journal of International Economic Studies: 12/1, 2008, էջ 120-122, Российский Гуманитарный Научный Фонд, Оценка влияния санкций на экономику РФ: Карточка проекта, 2015:

⁴⁷ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD>

⁴⁸ <https://data.worldbank.org/indicator/NE.GDI.FTOT.KD>

⁴⁹ <https://ilostat.ilo.org/>

⁵⁰ https://economics.uq.edu.au/cepa/software?at-field_uq_structured_content=0#at-field_uq_structured_content

⁵¹ Տեղեկատվության աղբյուրը՝ ՀԲ և ԱՄԿ տվյալներ, հաշվարկները՝ հեղինակային:

Գծապատկեր 1.9-ում ներկայացված են ուսումնասիրված երկրների Մալմբրվիսթի ԸԳԱ համաթվի առաջին աստիճանի տարանջատման միջին արժեքները, որոնք յուրաքանչյուր երկրի՝ դիտարկվող ժամանակահատվածի միջին երկրաչափական են: Իսկ առանձնացված թվերով ներկայացված են արդյունավետության համապատասխան տեսակի միջին մեծությունը՝ ավելի քան 200 երկրի համար:

Աշխարհի մակարդակով, դիտարկվող ժամանակահատվածում, տեխնիկական արդյունավետության փոփոխությունը, ընդհանուր առմամբ, նվազման ուղղությամբ է՝ նվազել է 4%-ով, մինչդեռ ԳԱՓ-ը դրական է գրեթե նույն չափով: Դրան հակառակ՝ ԳԱՓ-ի ցրվածությունն ավելի մեծ է, մինչդեռ ՏԱՓ-ը հիմնականում տատանվում է 1-ին միջակայքում: ՏԱՓ-ի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2008 թ.՝ աճելով 11.4%-ով, իսկ նվազագույնը՝ 2017 թ.: Հետաքրքիր է, որ Մալմբրվիսթի ԸԳԱ համաթվի ցուցանիշն իր առավելագույն մակարդակը նույնպես դրսևորել է 2008 թ, իսկ ամենացածրը՝ 2018 թ.: Չնոտանանք, որ քննարկվող բոլոր ցուցանիշներն արտացոլում են դիտարկվող տարվա արդյունավետության փոփոխությունները՝ նախորդի համեմատ: Նշենք նաև, որ ԳԱՓ-ի առավելագույն մակարդակը գրանցվել է 2017 թ., իսկ ամենացածրը՝ 1999 թ.: Ուսումնասիրության արդյունքների միջին արժեքներն ամբողջությամբ ներկայացված են հավելվածներում:


Դիտարկենք ԵԱՏՄ անդամ երկրների ԳԱՓ և ՏԱՓ համաթվերը և փորձենք համեմատականներ տանել դրանց միջև:

Դիտարկվող ժամանակահատվածում, ըստ ԸԳԱ փոփոխության, չկան ընդգծված առաջատարներ կամ հետնապահներ: ՀՀ ԸԳԱ փոփոխության կտրուկ տատանումներ տեղի են ունեցել 2002 և 2011 թվականների ընթացքում, որոնցից առաջինի դեպքում բացասական փոփոխությունը կազմել է ավելի քան 20%, իսկ 2011 թ.՝ դրականը՝ 25.2%: Նկատեք նաև, որ եթե ԵԱՏՄ անդամ երկրների ԸԳԱ փոփոխությունները որոշակիորեն համընկնում են մինչև ԵԱՏՄ ձևավորումը, ապա դրանից հետո նշված երկրների ԸԳԱ փոփոխությունները գրեթե նույնական են, թեպետ վերջին դիտարկման դեպքում նշված ցանկում միայն Հայաստանն է դրական արդյունք գրանցել՝ ԸԳԱ 4.6% աճով (գծապատկեր 1.10):

Հավելենք նաև, որ ՀՀ՝ Մալմբրվիսթի ԸԳԱ համաթիվը միության անդամ երկրների շրջանակում լավագույնը եղել է 2007, 2009, 2011 և, ինչպես արդեն նշեցինք, 2019 թվականներին, իսկ նվազագույնը՝ միայն 2002-ին: Այդ տարվա ԸԳԱ շուրջ 25% նվազման հիմնական «պատճառը» եղել է ներդրումների շուրջ 33.2% աճը (չնչին չափով ավելացել է նաև աշխատուժը, որը զգալիորեն գերազանցում է դրա հիման վրա ձևավորված տնտեսական աճը (13.2%):


Ի լրումն ՀՀ Մալմբրվիսթի ԸԳԱ համաթվի համեմատական վերլուծության՝ սույն ցուցանիշը դիտարկել ենք 1 շնչի հաշվով և ճշգրտված գներով ՀՆԱ-ի, Հայաստանին մոտ ցուցանիշ (14257 ԱՄՆ դոլար⁵²) գրանցած երկրների համաթվերը՝ 2018 և 2019 թվականների համար (գծապատկեր 1.11):

⁵² <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.PP.CD>



Գծապարկեր 1.10

ԵԱՏՄ անդամ պետությունների ընդհանուր գործոնային արդյունավետությունը 2000-2019 թթ.⁵³



Գծապարկեր 1.11

ՀՀ և համարյակի պետությունների (ըստ 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի) ընդհանուր գործոնային արդյունավետությունը 2000-2019 թթ.⁵⁴


Երկրների այս խմբում նույնպես, ըստ գնահատված ցուցանիշի, չկա ընդգծված առաջատար կամ հետնապահ: Կարելի է նկատել, որ այս ցանկում միայն Ուկրաինան է, որը դիտարկվող ժամանակահատվածում մինչև 30% տատանումներ է գրանցել, ընդ որում՝ ոչ մեկ անգամ: Դիտարկված երկրների խմբում նույնպես ՀՀ-ն նվազագույն ցուցանիշ է արձանագրել 2002 թ., այն նվազագույն է եղել նաև 2004, 2005 և 2015 թվականներին: 2004-2005 թթ. բացասական ցուցանիշ ունենալու և խմբում ամենացածրը լինելու պատճառը նույնն է, ինչ 2002 թ. (ԵԱՏՄ համեմատության մեջ), իսկ 2015 թ. նկատելի բացասական տեղաշարժն (0.984) առավելապես պայմանավորված էր ոչ թե հենց այդ տարվա ենթահամաթվի ցածր մակարդակով, այլ նախորդ՝ 2014 թ. և՛ ԳԱՓ, և՛ ՏԱՓ բարձր ցուցանիշներով: Սրա հետևանքով էլ 2015 թ.

⁵³ Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՅ և ԱՄԿ տվյալներ, հաշվարկները՝ հեղինակային:

⁵⁴ Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՅ և ԱՄԿ տվյալներ, հաշվարկները՝ հեղինակային:

ցուցանիշը, նախորդ տարվա համեմատ, բացասական է դարձել և այս երկրների շարքում՝ ամենացածրը: Երկրների այս խմբում ՀՀ-ն առաջատար եղել է 2007, 2011, 2017 և 2018 թվականներին (գծապատկեր 1.11):

ՀՀ Մալմբրիսթի ԸԳԱ համաթվի շարժընթացը բացատրելու համար դիտարկենք նաև համաթվի բաղադրիչները (գծապատկեր 1.12): ՀՀ Մալմբրիսթի ընդհանուր համաթվի տեղաշարժն առավելապես պայմանավորված է ԳԱՓ-ի, այսինքն՝ ռեսուրսների և դրանց կառավարման արդյունավետության փոփոխությամբ: Այդ փոփոխությունն էլ իր հերթին պատճառաբանվում է ավելի շատ գուտ արդյունավետության փոփոխությամբ, որը տատանվում է 0.788-1.255 միջակայքում, մինչդեռ ԳԱՓ-ի մյուս բաղադրիչի՝ մասշտաբից արդյունավետության փոփոխության տեղաշարժը դիտարկվող ժամանակահատվածում 0.983-1.068 միջակայքում է:



Գծապատկեր 1.12

ՀՀ արդյունավետությունը 2000-2019 թթ.՝ ըստ Մալմբրիսթի ԸԳԱ համաթվի բաղադրիչների⁵⁵

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ գրանցած առավելագույն արժեքը 1.172 է՝ 2011 թվականին: Նշանակում է, որ երկիրն այդ տարվա ընթացքում, 2010-ի համեմատությամբ, բարելավել է իր ԸԳԱ-ն 17.2%-ով, այն դեպքում, երբ ամբողջ աշխարհի ԸԳԱ ցուցանիշը նույն տարվա համար բացասական է՝ -11.3%: Նույնպիսի՝ աշխարհի համար հաշվարկված ցուցանիշի հետ էական տարբերություն կա նաև վերջին 20 տարիներին գրանցած ՀՀ ամենացածր համաթվի (2002 թ.՝ 0.896) պարագայում, երբ ՀՀ-ի բավականին մեծ բացասական ցուցանիշին հակադրվում է համաշխարհային նույն ցուցանիշի՝ մեծ դրական փոփոխությունը՝ 1.027:

Արտադրության արդյունավետության գնահատման մեթոդները ներառում են նաև տնտեսաչափական մոտեցումներ, որոնցից մասնագիտական շրջանակներում ամենատարածվածը ստոխաստիկ սահմանի վերլուծու-

⁵⁵ Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ և ԱՄԿ տվյալներ, հաշվարկները՝ հեղինակային:

թյունն է, որը հիմնված է արտադրության սահմանի, այսինքն՝ որոշում կայացնող միավորի (ՈԿՄ) արտադրության ներուժային մակարդակի հայեցակարգի վրա: Տեսության համաձայն՝ արտադրական ֆունկցիան ներկայացնում է հնարավոր առավելագույն արդյունքը, այսինքն՝ իրական սահմանը՝ գործոնների տրված համախմբության օգտագործման պայմաններում: Իրական ցուցանիշների շեղումներն այս սահմանից կարող են մեկնաբանվել որպես արտադրության անարդյունավետություն: Ստոխաստիկ սահմանի վերլուծության տնտեսաչափությունը ռեգրեսիոն գնահատումների շրջանակներում ներկայացնում է արտադրության սահմանի գնահատման մեթոդ, որը հնարավորություն է տալիս գնահատելու արտադրության անարդյունավետությունը⁵⁶:

Ստոխաստիկ սահմանի արտադրական ֆունկցիան առաջադրվել է 1977 թվականին՝ երկու աշխատություններում^{57, 58}, ընդ որում՝ միմյանցից անկախ: Հեղինակները գնահատումն իրականացրել են միջնորդային տվյալների հիման վրա:

Վերջին տասնամյակների ընթացքում հրապարակվել են բազմաթիվ հետազոտություններ՝ նվիրված ստոխաստիկ սահմանի վերլուծության (ՍՄՎ) միջոցով արդյունավետության և արտադրողականության փոփոխության գնահատմանը⁵⁹, առաջարկվել են նոր մոտեցումներ ու մեկնաբանումներ դրա շրջանակներում⁶⁰, արտադրական ֆունկցիայի սահմանը գնահատվել է նաև պանելային տվյալների⁶¹ հիման վրա, իսկ հետագայում՝ ժամանակային շարքերի օրինակով^{62, 63}:

Արդյունավետության գնահատման այս մոտեցման վերջին աշխատանքներից կարելի է առանձնացնել 2019 թ. ՏՀԶԿ անդամ 34 երկրների օրինակով իրականացված ուսումնասիրությունը, որում բացահայտվել են դրանց՝ տնտեսական զարգացման որոշիչները և վերլուծվել է ռեսուրսների արդյու-

⁵⁶ St' u Ch. Cornwell, P. Schmidt, Stochastic Frontier Analysis and Efficiency Estimation, The Econometrics of Panel Data, 2008, էջ 697, <https://www.researchgate.net/publication/226451530>

⁵⁷ St' u D.J. Aigner, C.A.K. Lovell, P. Schmidt, Formulation and Estimation of Stochastic Frontier Production Function Models, Journal of Econometrics, 6, 1977, էջ 21- 37:

⁵⁸ St' u W. Meeusen, J. van den Broeck, Efficiency Estimation from Cobb- Douglas Production Functions With Composed Error, International Economic Review: 18, 1977, էջ 435-444:

⁵⁹ St' u S. C. Kumbhakar, C. A. K. Lovell, Stochastic Frontier Analysis. New York, NY: Cambridge University Press, 2000:

⁶⁰ St' u W. H. Greene, Fixed and Random Effects in Stochastic Frontier Models. Journal of Productivity Analysis: 23/1, 2004, էջ 7-32, <http://dx.doi.org/10.1007/s1123-004-8545-1>

⁶¹ St' u D. Miljkovic, S. Shaik, The Impact of Trade Openness on Technical Efficiency in U.S. Agriculture Agribusiness & Applied Economics Report: No. 660, 2010 Department of Agribusiness and Applied Economics, Agricultural Experiment Station, North Dakota State University, Fargo, ND 58108-6050:

⁶² St' u J. G. Djokoto, Technical Efficiency of Agriculture in Ghana: A Time Series Stochastic Frontier Estimation Approach, Journal of Agricultural Science, Vol. 4, No. 1, 2012, <http://dx.doi.org/10.5539/ias.v4n1p154>

⁶³ St' u G. E. Battese, T. J. Coelli, Frontier Production Functions, Technical Efficiency and Panel Data: With Application to Paddy Farmers in India, Journal of Productivity Analysis: 3, 1992, էջ 153-169:

նավեռ օգտագործման մակարդակը: Պանելային տվյալների տնտեսաչափական մոդելավորման հիման վրա անցկացվել է ստոխաստիկ սահմանի վերլուծություն՝ Կոր-Դուգլասի և տրանսլոգարիթմական ֆունկցիոնալ կախվածություններով (2003-2012 թթ. տվյալների հիման վրա): Հետազոտության եզրակացությունն այն է, որ տնտեսական աճի բարձր մակարդակ ունեցող երկրները ցուցաբերում են արդյունավետության բարձր վարկանիշ: Այսինքն, արձանագրվել է դրական կախվածություն տնտեսական աճի և տեխնիկական արդյունավետության մակարդակների միջև⁶⁴: Այս գնահատմամբ՝ Լյուքսեմբուրգն ու ԱՄՆ-ը դիտարկվել են որպես ամենաբարձր վարկանիշ ունեցող երկրներ, իսկ Չինիս և Մեքսիկան ամենացածր հորիզոնականներում են:

Այսպիսով, ստոխաստիկ սահմանի միջոցով թողարկման արդյունավետության չափման գաղափարը, հանդիսանալով արտադրական ֆունկցիայի՝ տեսական ընթրոնումների հիման վրա իրատեսական չափումների իրականացման փորձ, բազում տնտեսագետների և ֆինանսիստների (և ոչ միայն) կողմից բացառիկ ուշադրության արժանացավ:

ՀՀ ՀՆԱ-ի, իրական ներդրումների և զբաղվածների թվաքանակի եռամսյակային ժամանակային շարքի հիման վրա ստոխաստիկ սահմանի մոդելի միջոցով փորձ է կատարվել գնահատելու Հայաստանի արտադրական ֆունկցիան և մակրոմակարդակում երկրի թողարկման անարդյունավետությունը: Ուսումնասիրության շրջանակում ընդգրկվել են ՀՀ 2000-2020 թթ. եռամսյակային տվյալները: Թեև սույն մոդելի կիրառական գրականությունն առավել կենտրոնացած է պանելային ուսումնասիրությունների վրա, այնուամենայնիվ, մեր որոշումն ընդունվել է հոգուտ ժամանակային շարքի, քանզի մոդելը պանելային տվյալների օրինակով հաշվարկելն արժեքավոր է միայն խոշոր տարածաշրջանային բաժանում ունեցող տարածքների կամ մեծ երկրների համար: Իսկ ՀՀ-ն ո՛չ այդպիսի երկիր է, ո՛չ էլ ապահովված է տվյալների համապատասխան ծածկույթով: Տեղեկատվական հենքը ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներն են, մասնավորապես՝ իրական ՀՆԱ-ն, իրական ներդրումները և զբաղվածների թվաքանակը: Մոդելում ներառվել է նաև արտադրության ծավալների փոփոխության ժամանակային միտումները և ցուցանիշների «ինտերցիան» նկարագրող փոփոխական:

Գնահատումն իրականացվել է Stata վիճակագրական ծրագրի միջոցով⁶⁵: Կոր-Դուգլասի արտադրական ֆունկցիայում որպես գործոններ ընդգրկված իրական ներդրումների և զբաղվածության էլաստիկության գործակիցները համապատասխանաբար 0.33 և 0.64 են: Այսինքն, Հայաստանում իրականացվող ներդրումների 1% փոփոխությունը կհանգեցնի երկրում թողարկվող ՀՆԱ-ի միջինը 0.33% փոփոխության, իսկ զբաղվածների թվաքա-

⁶⁴ Stéu H. Fuente-Mella, A.M. Vallina-Hernandez, R. Fuentes-Solis, Stochastic analysis of the economic growth of OECD countries, *Economic Research-Ekonomska Istraživanja*: 33/1, 2019, էջ 2189-2202, <https://doi.org/10.1080/1331677X.2019.1685397>

⁶⁵ <https://www.stata.com/>

նակի 1% փոփոխությունը գրեթե կրկնակի մեծ ազդեցություն ունի արդյունքի ծավալի վրա՝ ներդրումների համեմատ միջինը 0.64% (այսպիսի վարքագիծ դրսևորվում է գործոններից մեկի հաստատուն մնալու պայմաններում), այն է՝ այլ հավասար պայմաններում:

Աղյուսակ 1.3

Ստոխաստիկ սահմանի մոդելի արդյունքը՝ ՀՀ օրինակով⁶⁶

Log likelihood = 139.5342 Prob > chi2 = 0.0000
 Wald chi2(3) = 2.78e+06

logY	Coef.	Std. Err.	z	P> z	[95% Conf. Interval]
Frontier					
logK	.3315547	.0142363	23.29	0.000	.3036521 .3594574
logL	.6385137	.0235421	27.12	0.000	.592372 .6946554
quarter	.0117247	.0002097	55.91	0.000	.0113137 .0121358
Usigma					
_cons	-5.053209	.2045827	-24.70	0.000	-5.454184 -4.652234
Vsigma					
_cons	-8.516055	.5962172	-14.28	0.000	-9.684619 -7.347491
sigma_u	.07993	.0081761	9.78	0.000	.0654092 .0976743
sigma_v	.0141502	.0042183	3.35	0.001	.0078888 .0253812
lambda	5.648697	.0105602	534.90	0.000	5.627989 5.669394

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի արտադրությունը ՀՀ-ում իրականացվել է 80-98% արդյունավետությամբ, միջինը՝ 94%: Եթե 2000-2002 թթ. արդյունավետությունը շուրջ 10 տոկոսային կետով աճել է, ապա մինչև 2007 թ. պահպանվել է հարաբերական կայուն մակարդակ: Ընդ որում՝ հենց այս ընթացքում դիտարկվող ժամանակահատվածի համար գրանցվել է արդյունավետության՝ եռամսյակային կտրվածքով ամենաբարձր մակարդակը՝ 2003 թ. 4-րդ եռամսյակում՝ 99.3%:


2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ու ՀՀ տնտեսական անկումն էապես արտացոլվել են ՀՀ տնտեսության արդյունավետության վրա. ՀՆԱ-ի անկումը 2009 թ. կազմել է ավելի քան 14 տոկոսային կետ: Այսպիսի խոր անկման պայմաններում էլ արձանագրվել է վերջին 20 տարվա ընթացքում ՀՀ ՀՆԱ-ի արտադրության անարդյունավետության ամենաբարձր մակարդակը՝ 15.1%, իսկ եռամսյակային կտրվածքով այն ավելի բարձր է՝ շուրջ 20% (2010 թ. 3-րդ եռամսյակ):

⁶⁶ Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ ՖՆ, հաշվարկները՝ հեղինակային:



Գծապատկեր 1.13 | ՀՀ ՀՆԱ-ի թողարկման արդյունավետությունը 2000-2020 թթ.

ՀՆԱ-ի արդյունավետության այսպիսի կտրուկ անկմանը հետևել է հարաբերականորեն երկարատև՝ մինչև 2017 թվականը ներառյալ, բարելավումը: Այս ընթացքում գրանցվել է թողարկման արդյունավետության առավելագույն՝ 98.3% մակարդակ:



Գծապատկեր 1.14 | ՀՀ ՀՆԱ-ի թողարկման արդյունավետությունը 2018-2020 թթ.⁶⁷

Գծապատկեր 1.14-ում ներկայացվել են ՀՆԱ-ի արտադրության արդյունավետության ցուցանիշի զարգացումները վերջին 3 տարիներին՝ եռամսյակներով: 2018-2019 թթ. արդյունավետության ցուցանիշը տատանվել է 95-99%-ի միջակայքում: Սակայն 2020 թ. առաջին երեք եռամսյակներին, պայմանավորված COVID-19 համավարակով, ՀՀ ՀՆԱ-ի արտադրության արդյունավետությունը նվազել է 9 տոկոսային կետով, իսկ 4-րդ եռամսյակում համավարակի հետևանքներին գումարվել են նաև Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները, և ցուցանիշը նվազել ևս 1.3%-ային կետով:

Այսպիսով, դիտարկվող ժամանակահատվածի համար ՀՀ ՀՆԱ-ի արտադրության արդյունավետությունն ընդգծված տատանողական վարքագիծ է դրսևորել և յուրաքանչյուր տասը տարին մեկ կտրուկ անկում է ապրում, որից հետո սկսում է դանդաղ վերականգնումը մինչև որոշակի մակարդակ: 2000-2019 թթ. ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականությունն աճել է

⁶⁷ Տեղեկատվական հենքը՝ ՀՀ ՖՆ, հաշվարկները՝ հեղինակային:

միջինում 1.2%-ով: Երկրի ԸԳԱ փոփոխությունը դիտարկվող ժամանակահատվածում առավելապես պայմանավորվել է գործունային արդյունավետության փոփոխությամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է հիմնականում զուտ արդյունավետության փոփոխությամբ: Վերջին 20 տարիների ընթացքում երկրի տեխնիկական արդյունավետության կտրուկ և խոր անկման երկու դեպքերն էլ որոշ վերապահումներով պայմանավորված չեն եղել ներքին խնդիրներով: Պետք է դասեր քաղել պատմությունից, առավել պատրաստված լինել մարտահրավերներին, քայլեր ձեռնարկել հատկապես ՀՀ տնտեսության՝ արտաքին շուկերի նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու ուղղությամբ: Հայաստանի առջև ծառայած խնդիրները համակարգային լուծումների կարիք ունեն:

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՀՀ արդյունաբերության ոլորտի ընդհանուր բնութագիրը

Արդյունաբերության ոլորտում, ըստ ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի⁶⁸, առանձնացվում են գործունեության հետևյալ խոշոր ենթաօլորտները՝

- հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում (բաժին B),
- մշակող արդյունաբերություն (բաժին C),
- էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (բաժին D),
- ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում (բաժին E):


Դասակարգումը, ըստ էության, համապատասխանում է ՄԱԿ-ի *միջազգային սրահարար* ոլորտային դասակարգչին⁶⁹: Ըստ դասակարգչի՝ B բաժնում՝ հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, ներառվում են քարածխի և գորշ ածխի, անմշակ նավթի, բնական գազի, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանումը: C բաժինը (մշակող արդյունաբերություն) ներառում է ՀՀ արտահանման մեջ նշանակալի սննդամթերքի, խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը, ինչպես նաև մանածագործական արտադրատեսակների արտադրությունը, հագուստի, կաշվե արտադրատեսակների արտադրությունը: Այս բաժնում է ընդգրկված նաև քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների, դեղագործական արտադրանքի, հիմնական մետաղների, մետաղե արտադրատեսակների, արդյունաբերության ավելի փոքր մաս կազմող համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի, էլեկտրական սարքավորանքի, մեքենաների և կահույքի արտադրությունը: D բաժինը ենթադրում է էլեկտրականության և գազի արտադրություն ու բաշխում, ինչպես նաև գոլորշու և լավորակ օդի մատակարարում, իսկ E բաժինը՝ ջրի և թափոնների հավաքում ու մշակում, ջրի բաշխում, թափոնների վնասազերծում և ոչնչացում⁷⁰:

⁶⁸ Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2013 թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրաման:

⁶⁹ Տե՛ս The International Standard Industrial Classification of All Economic Activities (ISIC), Rev.4, Statistical Papers, Series M No. 4/Rev.4, United Nations, New York, 2008, <https://unstats.un.org/unsd/publications/catalogue?selectID=396>

⁷⁰ Առավել մանրամասն տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2013 թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանը, հավելված:

ՀՀ տնտեսության իրական հատվածի ոլորտային հենասյուներն են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն և շինարարությունը: 2012-2020 թվականներին արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում տատանվել է 16-20%-ի միջակայքում՝ 2020 թ. կազմելով 19,6%⁷¹:



Գծապատկեր 2.1

ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ըստ տնտեսության հատվածների, 2012-2020 թթ.⁷²

Վիճակագրական տվյալները փաստում են, որ տնտեսության առաջնային հատվածը⁷³ չունի վառ ընդգծված գերակշռություն:


Վերջին տարիներին, ընդհանուր առմամբ, արդյունաբերության անընդհատ աճ է գրանցվել. 2019 թ. արդյունաբերության ոլորտի աճի տեմպերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, արագացել են: Աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ հանքագործական և մշակող արդյունաբերության աճի վերականգնման⁷⁴: 2020 թ. COVID 19-ով և 44-օրյա պատերազմով պայմանավորված ճգնաժամի հետևանքով արդյունաբերական արտադրանքի ծավալը նվազել է 1,6%-ով կամ 33 մլրդ ՀՀ դրամով:

⁷¹ Հաշվարկների աղբյուրը՝ <https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>

⁷² ՀՀ ԿԲ <https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>

⁷³ Տնտեսության առաջնային հատվածը ներկայանում է երկու բաղկացուցիչով՝ 1. գյուղատնտեսություն, անասնաբուծություն և ձկնորսություն, 2. հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում: Երկրորդային հատվածում ներառված են մշակող արդյունաբերությունը, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը, ջրամատակարարումը, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը, շինարարությունը, երրորդային հատվածում ներառված են հետևյալները՝ մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում, տեղեկատվություն և կապ, ֆինանսական և սպասարկողական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործունեություն, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն, վարչարարական և օժանդակ գործունեություն, պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական սպասարկություն, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում, մշակույթ, զվարճություններ և հանգիստ, սպասարկման այլ ծառայություններ:

⁷⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 11-12, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_121.pdf



Գծապատկեր 2.2

ՀՀ արդյունաբերության կառուցվածքը 2006-2020 թթ.
(ըստ ավելացված արժեքի, մլն ՀՀ դրամ)^{75 76}


2021 թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալներով արդյունաբերության աճը կազմել է 1.0%, որն առավելապես եղել է հանքարդյունաբերության 3.3% աճի հաշվին: Մշակող արդյունաբերությունը հունվար-օգոստոս ամիսներին շարունակել է անկում գրանցել՝ տախտոկ տարվա համեմատ նվազելով 1.2%-ով:

Տարածքային առումով արդյունաբերական կենտրոններ են համարվում ք. Երևանը, Սյունիքի, Արարատի և Կոտայքի մարզերը: Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում 2006-2020 թթ. ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում Երևանին՝ 39.7%, որին հաջորդում են Սյունիքի, Արարատի և Կոտայքի մարզերը՝ համապատասխանաբար 15.7, 10.1 և 10.8%:

Արդյունաբերական արտադրանքի մեջ Սյունիքի մարզի զգալի տեսակարար կշիռը պայմանավորված է *հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում ենթատղորդի* մեծ մասնաբաժնով, որը 2019 թ. ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի 81,6%-ը: Արարատի մարզի պարագայում, արդյունաբերական արտադրանքի հիմնական մասն ապահովել է մշակող արդյունաբերությունը, որը 2019 թ. կազմել է մարզի արդյունաբերական արտադրանքի 95,9%-ը, իսկ վերջինիս մեջ բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմել ծխախոտի արտադրությունը:


⁷⁵ Տե՛ս ՀՀ ՎԿ, Վիճակագրություն, այլ տվյալների բազաներ:

⁷⁶ Մեթոդաբանական տարբերությունից ելնելով՝ 2006-2007 թթ. ներկայացվել է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում՝ ըստ ՏԳՏԴՀ (NACE 1.1) դասակարգման, իսկ 2008 թվականից դիտարկվել է ՏԳՏԴ (NACE 2) դասակարգմամբ:



Գծապատկեր 2.3 | Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ք. Երևանում և մարզերում 2006-2020 թթ. (միջին ցուցանիշ), %⁷⁷

Ոլորտում զբաղվածների առումով ՀՀ տնտեսության մեջ արդյունաբերությունը երրորդ տեղում է՝ ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներից հետո: Դիտարկվող՝ 2006-2020 թթ. ընդգրկող ժամանակահատվածում արդյունաբերության ոլորտում զբաղվածների մասնաբաժինը գրեթե չի փոխվել՝ միջինը կազմելով 11.9%: Ոլորտում զբաղվածները կենտրոնացած են առավելապես մշակող արդյունաբերության ենթաոլորտում, որը 2006-2019 թթ. կազմել է արդյունաբերությունում զբաղվածների 70.9%-ը, իսկ ընդհանուր տնտեսությունում զբաղվածների՝ շուրջ 8.5%-ը (գծապատկեր 2.4):




Գծապատկեր 2.4 | Զբաղվածները՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների, %⁷⁸

⁷⁷ Տե՛ս ՀՀ ՎԿ, վիճակագրական տվյալների բազաներ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2007-2020 թթ.:

⁷⁸ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2007-2020 թթ.:


ՀՀ տնտեսության երկրորդային հատվածի 2012-2020 թթ. վերլուծությունը փաստում է, որ ՀՀ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռն աճել է 16.5%-ային կետով՝ գրեթե ամբողջությամբ ի հաշիվ շինարարության մասնաբաժնի նվազման: Եթե քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների, դեղագործական արտադրանքի, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի, էլեկտրական սարքավորանքի արտադրությունները դիտարկենք որպես բարձր տեխնոլոգիական, ապա 2020 թ. դրանց համախառն բաժինը մշակող արդյունաբերության ընդամենը 4.8%-ն է կազմում:




Գծապատկեր 2.5

ՀՀ տնտեսության երկրորդային հատվածի կառուցվածքը 2012-2020 թթ.

Մշակող արդյունաբերության կառուցվածքը մինչճգնաժամային և հետճգնաժամային փուլերում ներկայացված է գծապատկեր 2.6-ում:





Գծապատկեր 2.6 | ՀՀ մշակող արդյունաբերության 2007 թ.⁷⁹ և 2020 թ.⁸⁰ կառուցվածքը

Ինչպես տեսնում ենք, և՛ ճգնաժամից առաջ, և՛ հետո մշակող արդյունաբերության կառուցվածքում գերակշռում է սննդամթերքի⁸¹, խմիչքի, հիմնային մետաղների արտադրությունը: ՀՀ մշակող արդյունաբերության մեջ 2020 թ. դրությամբ մեծ մասնաբաժին ունեն սննդամթերքի արտադրությունը՝ 39.04%, խմիչքների արտադրությունը՝ 11.52%, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 11.30%, հիմնային մետաղների՝ 13.15% և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 5.40%: Այս չորս ոլորտները միասին 2020 թ. ապահովել են մշակող արդյունաբերության 75%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում որոշակի կառուցվածքային տեղաշարժեր են եղել, ընդ որում՝ հիմնային մետաղների արտադրության կշիռը նվազել է, փոխարենն ավելացել է ծխախոտի արտադրության կշիռը: Իսկ մյուս երկու ոլորտները շարունակել են պահպանել իրենց գերակշռությունը: Մշակող արդյունաբերության մեջ կառուցվածքային տեղաշարժերի երկարաժամկետ միտումների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ վերոնշյալ ենթաոլորտները մշակող արդյունաբերության հենասյուներն են, որոնց գումարային մասնաբաժինը մշակող արդյունաբերության ոլորտում տատանվում է 70-80%-ի միջակայքում: Այս հանգամանքն առավել քան խոցելի է դարձնում արդյունաբերության ոլորտը կառուցվածքային տեսանկյունից, քանի որ նշված արտադրություններն առավելապես հիմնված են գյուղատնտեսական հումքի և

⁷⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 15, https://www.armstat.am/file/article/sv_12_07a_121.pdf

⁸⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 12, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_121.pdf

⁸¹ Հարկ է նկատի ունենալ, որ 2007 թ. դասակարգմամբ սննդամթերքի արտադրության մեջ դիտարկվում է նաև խմիչքի արտադրությունը:

բնական ռեսուրսների պարզ օգտագործման վրա, այլ կերպ ասած՝ հումքի առաջնային մշակում ենթադրող գործունեության ոչ բարդ տեսակներ են: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ մշակող արդյունաբերությունը բավական խոցելի է կառուցվածքի առումով, քանի որ դրա մեկ երրորդից ավելին ապահովում է սննդի արդյունաբերությունը, իսկ էլեկտրական սարքավորումների արտադրությունն ապահովում է մշակող արդյունաբերության առավելագույնը 2%-ը (2020 թ.՝ 1.6%): Բավական լուրջ է նաև ոլորտի տեխնիկական վերազինման և արդիական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը, որի ներկայիս մակարդակը հանգեցնում է արդյունաբերական արտադրանքի մրցունակության խնդիրների:

2.2

ՀՀ արտահանման շարժընթացի և կառուցվածքի վերլուծությունը


Արտահանման ծավալներն ու կառուցվածքը ժամանակակից աշխարհում մեծ կարևորություն ունեն երկրների մրցունակության բարձրացման, տնտեսական աճի և զարգացման տեսանկյունից: Հետևաբար, արտահանման ծավալների և կառուցվածքի վրա ազդող գործոնների վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ արտահանման աճին ուղղված տնտեսական քաղաքականության փոփոխությունների համար, ինչն էլ կնպաստի տնտեսության մրցունակության բարձրացմանը:

2020 թ. համավարակի և դրանով պայմանավորված սահմանափակումների, ինչպես նաև պատերազմի հետևանքով ՀՀ արտահանման ծավալները զգալիորեն կրճատվեցին, ինչն արտահայտվեց գրեթե բոլոր ապրանքախմբերի արտահանման ծավալների կրճատմամբ: Սակայն արտահանման կառուցվածքում նույնպես տեղի ունեցան որոշակի փոփոխություններ, որոնք, իհարկե, կարող էին դիտարկվել որպես ժամանակավոր փոփոխություններ, որոնց ազդեցությունը կվերանար ՀՀ և գործընկեր երկրների տնտեսությունների վերականգնման դեպքում: Արդյունաբերական արտադրանքի արտահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության չափի գնահատումը և ավելացման հնարավորությունների բացահայտումը երկրի տնտեսության խոցելիության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացման գործում կարող են զգալի նպաստ ունենալ՝ պայմանավորված արտաքին շուկաներում կտրուկ գնային տատանումներով, ինչպես նաև միջազգային շուկաների կառուցվածքային և ծավալային փոփոխություններով:

Այս առումով, անհրաժեշտ էր իրականացնել ՀՀ արտահանման ծավալների երկարաժամկետ վերլուծություն՝ կենտրոնանալով մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների, աճի և դրանց վրա ազդող գործոնների ուսումնասիրության վրա: Վերլուծությունն իրականաց-

վել է 2000-2020 թթ. համար՝ նպատակ ունենալով բացահայտել ինչպես արտահանման պատմականորեն ձևավորված կառուցվածքը և փոփոխությունների երկարաժամկետ միտումները, այնպես էլ վերջին տարիների զարգացումները և նշանակալի փոփոխությունները:

Եթե 2000-2020 թթ. ընդգրկող ժամանակահատվածից հանենք 2008-2009 թթ., 2014-2015 թթ. և 2020 թ. ճգնաժամերը, ապա ՀՀ արտահանման ծավալների աճի միջին տեմպն այդ ընթացքում կազմել է տարեկան 19.2%, ինչի արդյունքում աճել է նաև ապրանքների արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ 2020 թ. հասնելով 20.1%-ի: Սակայն ՀՀ արտահանման կառուցվածքը զարգացման գրեթե բոլոր ժամանակահատվածներում աչքի է ընկնել ապրանքային կենտրոնացվածության բավական բարձր աստիճանով: Այսպես, արտահանման կառուցվածքում պատմականորեն զգալի կշիռ են ունեցել 4 ապրանքախմբեր՝ «հանքահումքային արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», որոնց գումարային կշիռն ընդհանուր արտահանման կառուցվածքում 2000-2020 թթ. կազմել է շուրջ 80%:



Գծապարկեր 2.7

ՀՀ արտահանումը՝ ըստ 20 ապրանքախմբերի, 2000-2020 թթ., հազ. ԱՄՆ դոլար


2018-2020 թթ. վերոնշյալ ապրանքախմբերի ընդհանուր կշիռը փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 77%, ինչը պայմանավորված է եղել հիմնականում «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի կշիռների նվազմամբ (գծապատկեր 2.7):

Արտահանման կառուցվածքում մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանումն առանձնացնելու համար ընդհանուր արտահանման ծավալներից դուրս են բերվել գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտների արտադրանքի արտահանման ծավալները⁸²: Այդ պարագայում, մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման մասնաբաժինն ընդհանուր արտահանման կառուցվածքում 2000-2020 թթ. կազմել է միջինը 31.2%, սակայն տատանողական վարքագիծ է ունեցել: Անընդմեջ աճի ամենաերկար՝ հետձգնաժամային ժամանակահատվածում (2010-2018 թթ.), մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման մասնաբաժինը աճել է ավելի քան երկու անգամ՝ 2018 թ. հասնելով 41.2%-ի, այնուհետև 2019 և 2020 թթ. նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 39.3 և 35.1%:



Գծապատկեր 2.8

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կշիռը, %



Գծապատկեր 2.9

Արդյունաբերության ոլորտի հիմնական 4 ապրանքախմբերի արտահանման ծավալները, մլն ԱՄՆ դոլար

Մշակող արդյունաբերության ոլորտի ապրանքների արտահանման կառուցվածքում ևս գերակշռում են չորս ապրանքախմբեր՝ «պատրաստի մնողի արտադրանք», «մանածագործական իրեր», «սարքեր և ապարատներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», որոնց գումարային կշիռը

⁸² Մասնավորապես՝ հանվել են արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի 1-3, 5, 14-15, 17 և 21-րդ բաժիններին դասվող ապրանքների արտահանման ծավալները:

մշակող արդյունաբերության արտահանման կառուցվածքում կազմում է շուրջ 90%, իսկ ընդհանուր արտահանման կառուցվածքում՝ ավելի քան 30%: Նշված ապրանքախմբերի արտահանման ծավալների աճի տեմպը պատմականորեն ամենաբարձրն է մյուս բոլոր ապրանքախմբերի համեմատ, որը, սակայն, դանդաղել է 2018-2019 թվականներին:

2018-2019 թթ. աճի տեմպի արագացում է գրանցվել միայն «սարքեր և ապարատներ» ապրանքախմբի արտահանման մասով, ինչի հաշվին այդ ապրանքախմբի կշիռը զգալիորեն աճել է՝ 2019 թ. հասնելով 9.2%-ի՝ նախորդ տարվա 5.3%-ի դիմաց:

Մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման մյուս ապրանքախմբերի շարքում վերջին տարիներից աճի տեմպի արագացում է գրանցվել միայն «պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ», «թուղթ և թղթից իրեր» և «իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերի արտահանման ծավալի մասով, սակայն դրանց գումարային կշիռը փոքր է և ունի նվազման միտում՝ 2018-2019 թթ. կազմելով միջինը 3.4% (աղյուսակ 2.1):

Աղյուսակ 2.1

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման աճի տեմպը

Աճը, %	2016	2017	2018	2019	2020	2010-2019	2018-2019
Պատրաստի սննդի արտադրանք	28.1	25.8	5.5	16.1	-12.8	21.3	10.8
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	15.9	69.9	-2.8	7.2	-3.8	18.9	2.2
Պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	1.6	10.8	38.8	-4.5	16.3	6.6	17.2
Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	59.0	27.6	32.7	-36.8	-40.4	21.0	-2.1
Փայտ և փայտյա իրեր	20.5	51.7	-17.9	-41.8	-46.3	18.9	-29.9
Թուղթ և թղթից իրեր	-1.1	-17.3	14.0	2.6	-9.5	6.8	8.3
Մանածագործական իրեր	41.6	40.6	65.5	-24.8	-21.6	39.0	20.4
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	57.8	15.9	58.2	-42.0	15.2	17.3	8.1
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	27.0	5.0	51.1	-34.0	25.6	6.1	8.6
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	35.5	97.0	5.4	2.3	-2.5	14.7	3.8
Սարքեր և ապարատներ	25.9	20.2	34.1	82.0	-36.3	32.0	58.0
Տարբեր արդյունաբերական ապր.	77.0	183.3	-40.1	-55.4	41.7	51.0	-47.8
ԸՆԴԱՄԵՆԸ	30.7	34.1	16.0	5.1	-15.3	19.5	10.5

«Պատրաստի սննդի արտադրանքի» արտահանման միտումները գերազանցապես պայմանավորված են «ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ», «ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ» ապրանքատեսակների արտահանմամբ, որոնց ընդհանուր կշիռը կազմում է «պատրաստի սննդի արտադրանքի» ընդհանուր ծավալի 88%-ը (աղյուսակ 2.2):

«Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի կառուցվածքը և միտումները

	2017			2018			2019			2020		
	Կշիռը	Աճը	Նպաստումը	Կշիռը	Աճը	Նպաստումը	Կշիռը	Աճը	Նպաստումը	Կշիռը	Աճը	Նպաստումը
Պատրաստի սննդամթերք մսից և ծովամթերք	0.8	32.4	0.2	1.2	65.8	0.5	1.2	18.5	0.2	1.5	7.5	0.1
Շաքար և շաքարից պատրաստված հրուշակեղեն	0.3	13.3	0.0	0.2	-17.8	0.0	0.1	-22.2	0.0	0.1	-12.8	0.0
Կակաո և դրանից պատրաստված մթերք	2.0	222.2	1.8	2.9	52.0	1.1	2.9	14.1	0.4	2.4	-27.4	-0.8
Պատրաստի բուսական արտադրանքից	0.2	-21.7	-0.1	0.2	14.5	0.0	0.2	-11.7	0.0	0.3	41.9	0.1
Բանջարեղենի, մրգերի, կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերք	4.6	26.8	1.2	4.9	11.6	0.5	4.1	-2.0	-0.1	6.0	28.0	1.2
Սննդամթերքի տարբեր տեսակներ	0.6	32.4	0.2	0.6	5.9	0.0	0.6	14.6	0.1	1.1	65.3	0.4
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ	46.1	37.5	15.8	41.5	-5.0	-2.3	45.6	27.6	11.5	42.8	-18.2	-2.3
Սննդային արդյունաբերության մնացորդներ և թափոններ, պատրաստի կերեր՝ կենդանիների համար	0.0	-95.8	-0.1	0.0	80.1	0.0	0.0	8.3	0.0	0.2	2,197.2	0.2
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	45.4	13.5	6.8	48.4	12.5	5.7	45.2	8.5	4.1	45.5	-12.3	-6
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0	25.8	25.8	100.0	5.5	5.5	100.0	16.1	16.1	100.0	-12.8	-12.8

«Մանածագործական իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները պայմանավորում են հիմնականում հազուստի և հազուստի պարագաների, ինչպես նաև տրիկոտաժե հազուստի արտահանումը, որոնց կշիռը մանածագործական իրերի արտահանման ծավալում կազմում է շուրջ 95%: Ընդ որում, ընդհանուր մանածագործական իրերի արտահանման աճի տեմպը 2017 և 2018 թթ. եղել է բավականին բարձր՝ կազմելով համապատասխանաբար 40.6 և 65.5%, սակայն 2019 թ. գրանցվել է արտահանման ծավալի անկում 24.8%-ով: 2020 թ. ապրանքախմբի արտահանման ծավալը շարունակել է նվազել՝ կապված համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամի հետ:

«Սարքեր և ապարատներ» ապրանքախմբի արտահանման կառուցվածքում ներառված են օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, բժշկական, ճշգրիտ և այլ գործիքներ ու ապարատներ, ինչպես նաև բոլոր տեսակի ժամացույցները և դրանց մասերը: Այս ապրանքախմբի արտահանման ծավալները նույնպես դրսևորել են բարձր աճի տեմպ, որը 2017 և 2018 թթ. կազմել է համապատասխանաբար 20.2 և 34.1%, իսկ 2019 թ. ավելի է արագացել՝ կազմելով շուրջ 82%: Բարձր աճի տեմպի շնորհիվ կտրուկ մեծացել է նաև այս ապրանքախմբի մասնաբաժինը մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման մեջ՝ 2019 թ. հասնելով 9.2%-ի:

«Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի կազմում ներառված են «միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական սարքեր, դրանց մասերը», ինչպես նաև «էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, դրանց մասերը, ձայնագրման ու ձայնավերարտադրության ապարատուրա, հեռուստատեսային պատկերի և ձայնի գրառման և վերարտադրության ապարատուրա, դրանց մասերն ու պարագաները»: Այս ապրանքախմբերի աճի տեմպը նույնպես բավականին արագ է եղել՝ 2017-2019 թթ. կազմելով միջինում տարեկան 34.9%:

Այսպիսով, ՀՀ արտահանման կառուցվածքում մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման մասնաբաժինը չենք կարող բավարար համարել (2018-2019 թթ. կազմել է շուրջ 40.2%), իսկ կառուցվածքի առումով առկա է կենտրոնացվածության բարձր աստիճան: Բացի դրանից, արտահանման կառուցվածքում գերակշռում են ցածր արժեքով և քիչ տեխնոլոգիատար արտադրատեսակները, որոնց արտահանումից գներացվում է ցածր ավելացված արժեք: Հետևաբար, արտահանման ծավալների աճի, կառուցվածքի բարելավման նպատակով անհրաժեշտ է մի կողմից՝ բացահայտել արդեն իսկ արտահանվող արտադրատեսակների արտահանման ծավալների աճի տեմպի արագացման հնարավորությունները, մյուս կողմից՝ մշակել ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացմանն ուղղված արդյունավետ գործիքակազմ, որը կնպաստի առավել տեխնոլոգիատար և բարձր ավելացված արժեք ունեցող արտադրատեսակների արտադրության և արտահանման ծավալների աճին: Այդ տեսանկյունից, անհրաժեշտ է առավել

մանրամասն ուսումնասիրել «սարքեր և ապարատներ» ապրանքախմբի աճի գործոնները (քանի որ այն, ունենալով համեմատաբար փոքր կշիռ, վերջին տարիներին դրսևորել է բավականին բարձր աճի տեմպ) և բացահայտել այդ ապրանքախմբի մրցունակության բարձրացման հնարավորությունները:

2.3

ՀՀ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատումը

Արտահանման ծավալների վրա ազդող գործոնների շարքում հիմնականում ներառվում են ինչպես ներքին տնտեսական, այնպես էլ արտաքին պահանջարկը բնութագրող գործոնները, քանի որ վերլուծությունները փաստում են, որ նույնիսկ եթե երկրները բարենպաստ պայմաններով հասանելիություն ունեն արտասահմանյան շուկաներին՝ արտահանելու իրենց ապրանքները, դա դեռևս բավարար չէ, քանի որ ներքին շուկայի համար արտադրանք թողարկող կազմակերպությունների մրցունակությունը հաճախ չի բավարարում նոր արտաքին շուկաներում ապրանքներն իրացնելու համար⁸³:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա ազդող գործոնների գնահատմանն ուղղված աշխատանքների շարքին է դասվում Ե. Սումիյաթի⁸⁴ կողմից իրականացված հետազոտությունը, որի շրջանակում գնահատվել են մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների վրա ՀՆԱ-ի, փոխարժեքի և օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ազդեցությունները Ինդոնեզիայի օրինակով: Վերջինիս արդյունքները վկայում են, որ ՀՆԱ-ի աճը նշանակալի ազդեցություն է ունենում արտահանման ծավալների վրա, սակայն փոխարժեքի և ՕՈՒՆ-երի ազդեցությունը նշանակալի չէ: Նմանօրինակ հետազոտություն⁸⁵ ավելի վաղ կատարվել էր Քենիայի տնտեսության օրինակով, որտեղ ուսումնասիրվել էին մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա ՕՈՒՆ-երի, իրական արդյունավետ փոխարժեքի, առևտրի բացության, առևտրի պայմանների և ՀՆԱ-ի ազդեցությունները: Վերջինիս արդյունքները ցույց են

⁸³ St'u **Supper E.**, Is There Effectively a Level Playing Field for Developing Country Exports?, Policy Issues in International Trade and Commodities, Study Series No. 1, UNCTAD/ITCD/TAB/2, 2001,

Fugazza M., Export Performance and its Determinants: Supply and Demand Constraints, Policy Issues in International Trade and Commodities, Study Series No. 26, UNCTAD/ITCD/TAB/27, 2004, Redding S, Venables A, Geography and Export Performance: External Market Access and Internal Supply Capacity, NBER Working Paper 9637, 2003:

⁸⁴ St'u **Sumiyati E.E.**, Factors Affecting Manufacturing Exports, Journal of Economics, Business, and Accountancy Ventura, Vol. 23, No. 2, August – November 2020, էջ 254 -266, 2020:

⁸⁵ St'u **Matiy A.K., Matundura E.**, Analysis of Macroeconomic Factors Affecting the Performance of Manufactured Exports in Kenya, The International Journal of Business & Management, Vol 7 Issue 9, էջ 133-156, 2019:

տալիս, որ նշված բոլոր գործոններն արտահանման վրա ունեն նշանակալի ազդեցություն:

Ռ. Անանդի և մյուսների⁸⁶ կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ արտահանման առաձգականությունը փոխարժեքից կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք են, օրինակ, ապրանքների շուկայական մրցունակությունը և աշխատանքի շուկայի սահմանափակումները, որոնք փոխարժեքի արժեզրկման դեպքում կարող են խոչընդոտել արտահանման ծավալների աճը: Մյուս կողմից, կազմակերպությունների՝ ապրանքների բազմազանեցման կարողությունը փոխարժեքի նկատմամբ արտահանման ծավալների առաձգականությունը մեծացնող գործոն է:

Հայ հետազոտողների ուսումնասիրությունները կառուցվում են առավելապես ՀՀ տնտեսության մրցունակությունն ապահովող հիմնական արդյունաբերական ապրանքախմբերի արտահանման վրա իրական փոխարժեքի ազդեցության գնահատման խնդիրների շուրջ⁸⁷: Էմպիրիկ վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ իրական փոխարժեքի և արտադրողականության փոփոխության միտումների միջև առկա է հստակ կապ, ինչն ընդգծում է իրական փոխարժեքի՝ որպես մրցունակության ապահովման գործոնի կարևորությունը: Այս առումով, ՀՀ տնտեսության վերաբերյալ վերլուծություններում գնահատված են իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությունները արդյունաբերական արտադրանքի արտահանման և ՀՀ տնտեսության մրցունակության վրա: Սակայն ներքին տնտեսական (առաջարկի) և արտաքին պահանջարկի գործոնների ազդեցությունների վերաբերյալ ուսումնասիրությունները, կարծես, գնահատված չեն: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտություն է առաջանում առանձին հետազոտությամբ գնահատելու ՀՀ մշակող արդյունաբերության արտադրանքի վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները, որի արդյունքները կարող են նպաստել ՀՀ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ընդլայնմանն ու տնտեսության մրցունակության աճին ուղղված տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը գնահատվել է տնտեսաչափական մոդելներով՝ երկու մոտեցմամբ: Առաջին մոտեցմամբ՝ արտահանման ծավալների վրա ազդող գործոնների ազդեցության չափը գնահատվել է բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելների միջոցով, որը թույլ է տվել գնահատել մակրոտնտեսական գործոնների ազդեցությունն ու նշանակալիու-

⁸⁶ St' u Anand R., Perrelli R., Zhang B., South Africa's Exports Performance: Any Role for Structural Factors?, IMF Working Paper, WP/16/24, 2016:

⁸⁷ Տե՛ս Ք. Զ. Վարդանյան, Գ. Ա. Ավագյան, ՀՀ վճարային հաշվեկշիռի վերլուծությունը և դրա վրա իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցության գնահատումը, «Բանբեր ՀՊՏՀ», «Տնտեսագետ», 2012, Եր., N 4 (28), էջ 28-40, Լ. Կ. Մխիթարյան, Իրական փոխարժեքը և ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքի փոփոխությունները, «Բանբեր ՀՊՏՀ», թիվ 3(39), «Տնտեսագետ», Եր., 2015, էջ 60-73:

թյունը: Երկրորդ մտտեցմամբ՝ կառուցվել և գնահատվել են կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիվ մոդելներ, որոնց օգնությամբ հնարավոր է եղել ուսումնասիրել արդյունաբերական արտադրանքի արտահանման և դրա վրա ազդող գործոնների կապը (փոխազդեցությունները)՝ հաշվի առնելով ներգործությունները, ինչը հնարավորություն է տվել գնահատելու նաև մակրոտնտեսական գործոնների ազդեցության տևողությունը:

Որպես արտահանման ծավալների վրա ազդող մակրոտնտեսական գործոններ՝ գծային ռեգրեսիայի մոդելներում կիրառվել են ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալների իրական աճը՝ որպես առաջարկի գործոն, գործընկեր երկրների տնտեսական աճը՝ որպես պահանջարկի գործոն և իրական փոխարժեքը: Ընդ որում, արտաքին պահանջարկը և փոխարժեքը տարբերվում են առանձին մոդելներում՝ պայմանավորված կախյալ փոփոխականի արտահանման աշխարհագրական ուղղություններով: Հիմնական արդյունքները պարունակող ռեգրեսիայի մոդելները ներկայացված են հաջորդիվ:

Ընդհանուր արդահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Exp_t^{total} = \beta_1 Exp_{t-1}^{total} + \beta_2 InA_t^{total} + \beta_3 REER_{t-1} + \beta_4 Y_{t-1}^f + \varepsilon_t \quad (1)$$

Մշակող արդյունաբերական արտադրանքի արդահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Exp_t^{manuf} = \beta_1 InA_t^{manuf} + \beta_2 REER_t^{rub} + \beta_3 Y_t^f + \varepsilon_t \quad (2)^{89}$$

Պարտասարի սննդի արտադրանքի արդահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը.

⁸⁸ որտեղ՝ կախյալ փոփոխականը՝ Exp_t^{total} -ը, արտահանման ընդհանուր ծավալն է, InA_t^{total} -ը՝ ընդհանուր արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը, $REER_{t-1}$ -ը՝ իրական արդյունավետ փոխարժեքը, իսկ Y_{t-1}^f -ը՝ արտաքին արդյունավետ պահանջարկը: Վերջինս ներկայացնում է ՀՀ հիմնական տնտեսական գործընկեր երկրների՝ Ռուսաստանի, Եվրոպական միության, Շվեյցարիայի, Չինաստանի և ԱՄՆ-ի տնտեսական աճերի միջին կշռված արժեքը: Արտաքին պահանջարկի հաշվարկման համար որպես կշիռներ հիմք են ընդունվել ՀՀ-ից արտահանման ծավալների կշիռները:

⁸⁹ որտեղ՝ կախյալ փոփոխականը՝ Exp_t^{manuf} -ը, մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալի եռամսյակային աճն է, InA_t^{manuf} -ը՝ մշակող արդյունաբերության ավելացված արժեքի իրական եռամսյակային աճը, $REER_t^{rub}$ -ը՝ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի իրական փոխարժեքը: Նկատենք, որ այս մոդելում կիրառվել է ոչ թե իրական արդյունավետ փոխարժեքը, այլ ՌԴ ռուբլու նկատմամբ իրական փոխարժեքը, քանի որ մշակող արդյունաբերության արտադրանքի զգալի մասն արտահանվում է ՌԴ: Հարկ է նշել, որ իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությունը մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների վրա գնահատվել է տարբեր մոդելներով, սակայն նշանակալի կապ չի գտնվել:

$$Exp_t^{food} = \beta_1 Exp_{t-1}^{food} + \beta_1 Exp_{t-2}^{food} + \beta_1 Ind_t^{manuf} + \beta_2 REE_t^{rusb} + \beta_3 Y_t^{rus} + \varepsilon_t \quad (3)^{90}$$

Մասնաձագործական արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Exp_t^{tex} = \beta_1 Exp_{t-1}^{tex} + \beta_2 Ind_t^{manuf} + \beta_3 REE_t^{rusb} + \beta_4 Y_t^{rus} + \beta_5 Y_{t-1}^{rus} + \beta_5 Y_{t-2}^{rus} + \varepsilon_t \quad (4)^{91}$$

Կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիվ (SVAR) մոդելները կառուցվել են ռեգրեսիոն մոդելներում կիրառված ժամանակային շարքերի միջոցով: Սակայն, եթե ռեգրեսիոն մոդելներում փոփոխականները ներկայացված էին որպես լոգարիթմական եռամսյակային տարբերություններ (եռամսյակը նախորդ եռամսյակի նկատմամբ), ապա SVAR մոդելների դեպքում հաշվարկվել են լոգարիթմական տարբերությունները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ: Հետևաբար, ազդեցության գործակիցները կարող են տարբերվել: Կառուցվածքային մոդելների միջոցով գնահատումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները արտահանման ծավալների վրա՝ դրանց միջև արտածին (էկզոգեն) և ներծին (էնդոգեն) փոխառնչությունները հաշվի առնելով:

SVAR մոդելի կառուցման համար նախ գնահատվել է կրճատ տեսքով VAR մոդելը, որն ունի հետևյալ արտահայտությունը.

$$Y_t = \beta_0 + \beta_1 Y + u_t \quad (5)$$

Արտածին փոփոխականների շոկերի նկատմամբ արտահանման ծավալների արձագանքը գնահատելու նպատակով անհրաժեշտ է կրճատ տեսքով VAR մոդելում ներառել A մատրիցը՝ հետևյալ ձևով.

$$A * Y_t = \beta_0 + \beta_1 Y_{t-1} + u_t \quad (6)$$

Այնուհետև, SVAR մոդելի կառուցման համար A մատրիցում անհրաժեշտ է ներմուծել սահմանափակումներ, ինչը կատարվել է Չոլեսկիի մեթո-

⁹⁰ որտեղ՝ կախյալ փոփոխականը՝ Exp_t^{food} -ը, պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալի եռամսյակային աճն է, իսկ Y_t^{rus} -ը՝ ՌԴ տնտեսական եռամսյակային աճը: Այս մոդելի դեպքում, նախորդների համեմատ, փոխվել է արտաքին պահանջարկի փոփոխականը, որը պայմանավորված է պատրաստի սննդի արտադրանքի արտահանման աշխարհագրական կառուցվածքով:

⁹¹ որտեղ՝ կախյալ փոփոխականը՝ Exp_t^{tex} -ը, մասնաձագործական արտադրանքի արտահանման ծավալի եռամսյակային աճն է: Վերջինիս վրա արտաքին պահանջարկը, մասնավորապես՝ ՌԴ տնտեսական աճը, ունի երկարաժամկետ ազդեցություն՝ մնալով նշանակալի շուրջ երեք եռամսյակ:


⁹² որտեղ՝ Y-ը փոփոխականների վեկտորն է, β_0 -ը՝ հաստատունների վեկտորը, β_1 -ը՝ գործակիցները մատրիցը, իսկ u_t -ը՝ մոդելի սխալների վեկտորը:


դով: Այդ դեպքում անհրաժեշտություն է առաջանում որոշելու դիտարկվող փոփոխականների հերթականությունը: Այսինքն, Y վեկտորում փոփոխականները պետք է դասավորվեն *ամենաարտադինից ամենասերժին* սկզբունքով, որը ներկայացված է աղյուսակ 2.3-ում:

SVAR մոդելներում կիրառված փոփոխականները և դրանց հերթականությունը | Աղյուսակ 2.3

Ընդհանուր արտահանման մոդել	Մշակող արդյունաբերության արտահանման մոդել	Պարտադրի սննդի արտադրանքի արտահանման մոդել	Մանածագործական արտադրանքի արտահանման մոդել
$Y = \begin{bmatrix} Y^f \\ Ind^{total} \\ RER \\ Exp^{total} \end{bmatrix}$	$Y = \begin{bmatrix} Y^f \\ Ind^{manuf} \\ RER^{rub} \\ Exp^{manuf} \end{bmatrix}$	$Y = \begin{bmatrix} Y^{rub} \\ Ind^{manuf} \\ RER^{rub} \\ Exp^{food} \end{bmatrix}$	$Y = \begin{bmatrix} Y^{rub} \\ Ind^{manuf} \\ RER^{rub} \\ Exp^{tex} \end{bmatrix}$

Գծային ռեգրեսիայի հավասարման միջոցով արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները գնահատելու համար արտահանման կառուցվածքի վերլուծության հիման վրա առանձնացվել են ընդհանուր արտահանման, մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման, պատրաստի սննդի արտադրանքի արտահանման և մանածագործական արտադրանքի արտահանման ցուցանիշների ժամանակային շարքերը՝ եռամսյակային կտրվածքով, որոնք ներկայացված են գծապատկեր 2.10-ում:





Գծապատկեր 2.10

Մոդելներում կիրառված արտահանման ծավալների եռամսյակային ժամանակային շարքերը՝ սեզոնայնությունից ազատված և լոգարիթմված տեսքով

Նկարագրված մոդելների գնահատման ամփոփ արդյունքները ներկայացված են աղյուսակ 2.4-ում, իսկ առավել մանրամասն արդյունքները, ինչպես նաև մոդելների որակի ստուգման թեստերը՝ հավելված 5-ում:

Արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելների հիմնական արդյունքները **Աղյուսակ 2.4**

Մոդելը		Առաջարկի գործոնի ազդեցությունը	Փոխարժեքի ազդեցությունը	Արդարին պահանջարկի ազդեցությունը	Մոդելի դերեր-միասնացիայի գործակիցը (R ²)
Ընդհանուր արտահանում	Ազդեց. գործակիցը	0.98	-0.28	5.25	0.53
	Նշանակալիությունը (p-value)	0.0004	0.0003	0.0000	
Մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանում	Ազդեց. գործակիցը	0.65	-0.62	4.65	0.42
	Նշանակալիությունը (p-value)	0.0040	0.0029	0.0069	
Պատրաստի սննդի արտադրանքի արտահանում	Ազդեց. գործակիցը	1.08	-0.50	7.61	0.65
	Նշանակալիությունը (p-value)	0.0001	0.0086	0.0000	
Մանածագործական արտադրանքի արտահանում	Ազդեց. գործակիցը	0.99	-0.017	6.92	0.38
	Նշանակալիությունը (p-value)	0.098	0.5878	0.0395	

Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրված բոլոր մակրոտնտեսական գործոնները նշանակալի ազդեցություն ունեն արտահանման շարժընթացի վրա: Ներքին տնտեսությունում արդյունաբերության աճի, ինչպես նաև արտաքին պահանջարկի աճի 1.0 տոկոսային կետ արագացումը դրական է ազդում ընդհանուր արտահանման ծավալների վրա՝ համապատասխանաբար 0.98 և 5.25 տոկոսային կետով: Իրական արդյունավետ փոխարժեքի 1.0 տոկոսային կետով արժևորման արագացումը արտահանման աճի վրա ունենում է 0.28 տոկոսային կետով բացասական ազդեցություն: Ընդ որում, ինչպես կարելի է սկստել (1) հավասարումից, փոխարժեքի ազդեցությունը տեղի է ունենում 1 եռամսյակ ուշացումով:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների վերոնշյալ ուղղությունները պահպանվում են, սակայն արտաքին պահանջարկի ազդեցությունը թույլ է, իսկ փոխարժեքինը՝ մեծ:

Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների աճի վրա արտաքին պահանջարկի 1.0 տոկոսային կետով արագացումն ունենում է 7.61 տոկոսային կետով դրական ազդեցություն, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի 1.0 տոկոսային կետով արժևորումը՝ 0.5 տոկոսային կետով բացասական ազդեցություն: Արդյունաբերության աճի 1.0 տոկոսային կետով արագացումը պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների աճն արագացնում է 1.08 տոկոսային կետով: Ընդ որում, պատրաստի սննդի արտադրանքի արտահանումն ունի նշանակալի իներցիա, այսինքն՝ նախորդ երկու եռամսյակների արտահանման ծավալներն ազդեցություն են ունենում ներկա եռամսյակի արտահանման վրա:

Մանածագործական արտադրանքի արտահանման ծավալների աճի վրա ներքին արտադրության և փոխարժեքի գործոնների ազդեցությունները նշանակալի չեն, թեև պահպանում են վերոնշյալ ուղղությունները: Նշանակալի է միայն արտաքին պահանջարկի ազդեցությունը, որի 1.0 տոկոսային կետով աճը հանգեցնում է մանածագործական արտադրանքի արտահանման ծավալների 6.92 տոկոսային կետով աճին:

SVAR մոդելների գնահատման արդյունքները և շոկերին արձագանքների ֆունկցիաները ներկայացված են հավելված 6-ում: Գնահատման արդյունքները հիմնականում համադրելի են ռեգրեսիոն մոդելներով ստացված արդյունքներին: Մասնավորապես, SVAR մոդելների միջոցով գնահատված մակրոտնտեսական գործոնների՝ արտահանման ծավալների վրա ազդեցությունների ուղղությունները համադրելի են ռեգրեսիոն մոդելների միջոցով ստացված արդյունքների հետ: Սակայն SVAR մոդելների գնահատումը թույլ է տալիս պատկերացում կազմելու ազդեցությունների տևողության և շարժընթացի վերաբերյալ, ինչը լրացուցիչ և կարևոր տեղեկատվություն է արտահանման շարժընթացն ուսումնասիրելու տեսանկյունից:

Ընդհանուր արտահանման ծավալների վրա առաջարկի (արդյունաբերության աճի) և պահանջարկի (գործընկեր երկրների տնտեսական աճի) գործոններն ունեն դրական ազդեցություն, իսկ փոխարժեքի արժևորումը՝ բացասական, ինչը սպասելի էր (հավելված 6-ի գծապատկեր 1): Մակայն արտահանման ծավալների վրա առավել երկարատև ազդեցություն է ունենում արդյունաբերության աճը, որի մեկ ստանդարտ շեղման չափով շուրջ 2ուրջ 4.2% աճը, հանգեցնում է արտահանման ծավալների շուրջ 5.6% աճի: Ընդ որում, արդյունաբերության աճի շուրջ մարում է բավականին արագ՝ շուրջ 3 եռամսյակում, իսկ դրական ազդեցությունն արտահանման ծավալների վրա պահպանվում է մոտ 6-8 եռամսյակ: Գործընկեր երկրների տնտեսական աճի ազդեցության գործակիցը ՀՀ արտահանման ծավալների վրա թեև բարձր է (արտաքին պահանջարկի շուրջ 1.0% աճը հանգեցնում է արտահանման շուրջ 6.4% աճի), սակայն ազդեցությունը երկարաժամկետ չէ. շուրջ մարելուն պես, արտահանման վրա դրական ազդեցությունը նույնպես մարում է: Ինչ վերաբերում է իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությանը, ապա ազդեցության գործակիցն ավելի փոքր է, քան վերոնշյալ երկու գործոնները (փոխարժեքի շուրջ 3.3% արժևորումը հանգեցնում է արտահանման 0.64% նվազման) և, միևնույն ժամանակ, ունի առավել կարճատև ազդեցություն:

Մշակող արդյունաբերության արտադրանքի վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցություններն ունեն նույն շարժընթացը (հավելված 6-ի գծապատկեր 2): Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման դեպքում արդյունաբերության աճի և փոխարժեքի ազդեցություններն ավելի փոքր են և կարճաժամկետ (հավելված 6-ի գծապատկեր 3): Մինչդեռ, արտաքին պահանջարկը, թեև նույնպես կարճատև, սակայն զգալի ազդեցություն է ունենում պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների վրա:

Մանածագործական արտադրանքի ապրանքախմբում ներառված ապրանքատեսակների արտահանման ծավալների վրա ՀՀ արդյունաբերության աճի և փոխարժեքի ազդեցությունների ուղղությունները պահպանվում են, սակայն ազդեցության գործակիցները նշանակալի չեն: Հետևաբար, այս ապրանքախմբի արտահանման ծավալները հիմնականում կախված են արտաքին պահանջարկի տատանումներից (հավելված 6-ի գծապատկեր 4):

Իրականացված վերլուծությունների արդյունքում կարող ենք փաստել, որ արտահանման ծավալների շարժընթացի վրա մակրոտնտեսական գործոնները՝ ՀՀ արդյունաբերության իրական աճը, գործընկեր երկրներում տնտեսական աճի և իրական փոխարժեքի փոփոխությունը, ունեն նշանակալի ազդեցություն, ինչը համահունչ է մասնագիտական գրականությունում այլ երկրների համար արված հետազոտությունների արդյունքներին: Միևնույն ժամանակ, իրականացված հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մակրոտնտեսական գործոնների շարքում արտահանման ծավալների վրա առավել նշանակալի և երկարատև ազդեցություն է ունենում առաջարկի գործոնը՝ ՀՀ արդյունաբերական արտադրանքի աճը: Իսկ պահան-

ջարկը և փոխարժեքը, թեև սույնպես նշանակալի են, սակայն ավելի կարճատև: Հատկանշական է, որ գործընկեր երկրների տնտեսական աճի՝ ՀՀ արտահանման վրա ազդեցության գործակիցը բավական մեծ է, ինչը հիմնականում պայմանավորված է գործընկեր երկրների տնտեսությունների խոշոր ծավալներով:

Վերոնշյալ ազդեցությունները պահպանվում են նաև մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ուսումնասիրության դեպքում: Սակայն մշակող արդյունաբերության արտադրանքի դեպքում արտահանման վրա արտաքին պահանջարկի ազդեցության գործակիցն ավելի թույլ է՝ 4.65՝ ընդհանուր արտահանման 5.25-ի փոխարեն, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալներն ավելի մեծ կախվածություն ունեն արտաքին պահանջարկից: Հարկ է նշել նաև, որ մշակող արդյունաբերության արտահանման ծավալների վրա նշանակալի ազդեցություն է ունենում ոչ թե իրական արդյունավետ փոխարժեքի կամ ԱՄՆ դոլարի նկատմամբ իրական փոխարժեքի, այլ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ փոխարժեքի իրական փոփոխությունը: Դա պայմանավորված է ՀՀ արտահանման աշխարհագրական կենտրոնացվածությամբ:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կառուցվածքում ամենամեծ կշիռ ունեցող սպրանքախմբի՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների վրա ՀՀ արդյունաբերության աճի և արտաքին պահանջարկի աճի գործակիցներն ավելի մեծ ազդեցություն ունեն, քան ընդհանուր մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման դեպքում, իսկ փոխարժեքի ազդեցություն՝ ավելի փոքր:

2.4

ՌԴ-ում ՀՀ արտահանելի ապրանքների գնային մրցունակության գնահատումը

ՌԴ-ն Հայաստանի Հանրապետության համար, անկասկած, ամենամեծ տնտեսական հետաքրքրություն ներկայացնող երկիրն է, նախ՝ որպես ռազմավարական դաշնակից, ապա նաև՝ որպես ԵԱՏՄ անդամ երկիր: ԵԱՏՄ-ի՝ ՀՀ-ին ընձեռած հնարավորությունները բացահայտելու, մասնավորապես՝ դեպի ՌԴ ՀՀ արտահանման ներուժը գնահատելու համար սույն հետազոտության շրջանակներում վերլուծվել են ՌԴ ներմուծման կառուցվածքը և շարժընթացը, կատարվել է Ռուսաստանի ներքին սպառողական գների մշտադիտարկում, ուսումնասիրվել է հայկական արտադրության ապրանքների դիրքավորումը և մրցունակությունը ռուսական շուկայում, վեր են հանվել հայկական ապրանքների՝ դեպի Ռուսաստան արտահանման խոչընդոտ-

ները, առաջարկվել են քայլեր, որոնք կարող են աշխուժացնել հայ-ռուսական առևտրաշրջանառությունը:

Չնայած ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից ՌԴ-ի նկատմամբ 2014 թ. սահմանված տնտեսական պատժամիջոցների պատճառած վնասներին՝ երկիրը մնում է աշխարհի խոշորագույն տնտեսությունների տասնյակում: Արևմտյան պատժամիջոցներին հաջորդող ժամանակահատվածում ՌԴ արտաքին առևտրի զարգացումները միտված են եղել իրավիճակի կայունացմանը և պատժամիջոցներով պայմանավորված հարվածների մեղմմանը: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ ՌԴ արտաքին առևտրաշրջանառության ծավալները, պայմանավորված պատժամիջոցներով, նվազել են մինչև 2016 թ. (471,3 մլրդ ԱՄՆ դոլար), իսկ հետագա երեք տարիներին սկսել են վերականգնվել, և նկատվում է կորցրածը հետ բերելու և իրավիճակը որոշակիորեն շտկելու համապատկեր: Այդուհանդերձ, դիտարկումները ցույց են տալիս, որ նշված ժամանակահատվածում հնարավոր չի եղել լիովին վերականգնել նախքան պատժամիջոցներն ընկած ժամանակահատվածի արտաքին առևտրաշրջանառության ծավալները: Իսկ արդեն 2020 թ. արտաքին առևտրաշրջանառության ծավալը նորից անկում է ապրել՝ համավարակի ազդեցությամբ տնտեսության բազմաթիվ ոլորտների ու բնագավառների անկման հետևանքով թողարկումների ու վաճառքների կրճատումների ազդեցությամբ:

Հետազոտության նպատակների տեսանկյունից հետաքրքիր է, թե ինչպիսի շարժընթաց է արձանագրել Ռուսաստանի Դաշնության ներմուծումը 2014 թ.՝ այդ երկրի նկատմամբ կիրառված պատժամիջոցների գործադրումից ի վեր: Ակնհայտ է, որ պատժամիջոցների գործոնը որոշակիորեն փոխել է ինչպես ներմուծման աշխարհագրությունը, այնպես էլ՝ կառուցվածքն ու ծավալները: Բնականաբար, ՌԴ ներմուծման հոսքերը վերակողմնորոշվել են դեպի ավելի խոշոր ոչ արևմտյան գործընկեր երկրները: Այդ ցանկի առաջին հորիզոնականը զբաղեցնում է Չինաստանը: 2014-2020 թթ. ժամանակահատվածում Չինաստանից ՌԴ-ի ներմուծման մասնաբաժինը ընդհանուր ներմուծման մեջ ավելացել է 6 տոկոսային կետով՝ 17.7%-ից հասնելով 23.7%-ի: Բացարձակ առումով, Չինաստանից դեպի Ռուսաստան 2015-2020 թթ. ներմուծման ծավալներն ավելացել են շուրջ 57 տոկոսով՝ 34.9 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով շուրջ 54.9 մլրդ ԱՄՆ դոլարի: Թեև Չինաստանից ՌԴ-ի ներմուծման բացարձակ ծավալները շարունակում են աճել առաջանցիկ տեմպերով, այդուհանդերձ, ՌԴ ընդհանուր ներմուծման մեջ Չինաստանի մասնաբաժինը 2020 թ. և 2021 թ. առաջին կիսամյակում ունեցել է նվազման միտում: Կարելի է ենթադրել, որ դրա պատճառը պատժամիջոցների գործադրումից ի վեր ՌԴ Կառավարության կողմից մշակված և կիրառված՝ ներմուծման փոխարինման լայնամասշտաբ ծրագրերն են, որոնք սկսել են արդյունք տալ, այդ թվում՝ այն արտադրատեսակների գծով, որոնք ներմուծվում են Չինաստանից:

Ռ-Դ արտաքին առևտրաշրջանության շարժընթացը 2014-2021 թթ.
(հազ. ԱՄՆ դոլար)⁹³

	Առկրաշրջա- նատություն	Արդահանում	Ներմուծում	Հաշվամնացորդ
2014	793,553	501,947	291,606	210,341
2015	530,428	345,932	184,495	161,437
2016	471,264	287,709	183,555	104,154
2017	587,546	359,081	228,464	130,617
2018	692,616	451,775	240,841	210,934
2019	674,279	426,317	247,961	178,356
2020	571,913	338,184	233,730	104,454
2021 (հունվար- հունիս)	347,010	209,368	137,641	71,727

Ռուսաստանի Դաշնության՝ ներմուծման գծով երկրորդ գործընկերը Գերմանիան է, որի մասնաբաժինը Ռուսաստանի ընդհանուր ներմուծման մեջ 2014-2020 թթ. ժամանակահատվածում կրճատվել է 1.4 տոկոսային կետով՝ 2014 թ. 11.5%-ից 2020 թ. նվազելով մինչև 10.1%: Պատժամիջոցների հետևանքով Գերմանիայից Ռուսաստան արտահանումը բացարձակ առումով կրճատվել է շուրջ 9 մլրդ ԱՄՆ դոլարով: Պատժամիջոցների կիրառման պայմաններում զգալիորեն կրճատվել է նաև Ռուսաստանի ներմուծումն ԱՄՆ-ից՝ 0.8 տոկոսային կետով:

Նշված ժամանակահատվածում Ռ-Դ ներմուծման մեջ իրենց հարաբերական մասնաբաժինները պահպանել են Իտալիան, Կորեան, Ղազախստանը: Ռուսաստանի ներմուծման մեջ ավելացել է Բելառուսի մասնաբաժինը, որը Ռ-Դ ներմուծման կառուցվածքում առաջատար տասնյակի երկրներից է: Այս երկրի մասնաբաժինը Ռ-Դ ներմուծման կառուցվածքում 2014 թ. 4.3%-ից 2020 թ. հասել է 5.4%-ի: Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից Ռուսաստանի ներմուծման մեջ զգալի մասնաբաժին ունեցող երկրների 10-յակի մեջ մտնում են միայն Բելառուսը և Ղազախստանը (հավելված 7): Սակայն ԵԱՏՄ անդամ մյուս երկրները (Հայաստան, Ղրղզստան) ևս իրենց տնտեսությունների և արտահանման ծավալների համեմատ ռուսական շուկան դիտարկում են որպես որոշիչ և առաջնահերթ ուղղություն: Այս տեսակետից, կարելի է ասել, որ Ռուսաստանը Հայաստանի Հանրապետության գլխավոր առևտրային գործընկերն է, որի շուկան պահանջարկ է ներկայացնում ավելացված արժեքի հարաբերականորեն մեծ մասնաբաժին ունեցող հայկական արտադրության ապրանքների նկատմամբ: Դրանով հանդերձ, ՀՀ արտահանման կառուցվածքն ու աշխարհագրությունը մեծապես պայմանավորված են ներմուծող երկրների ներմուծման կառուցվածքով, ինչը վերաբերում է հատկապես Ռուսաստանի Դաշնության ներմուծման ապրանքային կառուցվածքին և դրա բաշխմանը:

⁹³ Աղբյուրը՝ <https://customs.gov.ru/statistic>

Ըստ ապրանքային խմբերի երկնիշ դասակարգման Ռ-Դ ներմուծման կառուցվածքի փոփոխությունները 2015-2021 թթ. (%)⁹⁴

Աղյուսակ 2.6

Դասիչը	Ապրանքախմբերը	2015	2016	2017	2018	2019	2020	2021 (հունվար-մայիս)
01-24	Պարենային ապրանքներ և գյուղատնտ. հումք (բացառությամբ տեքստիլ արդյունաբերության)	14.5	13.7	12.7	12.4	12.2	12.8	12.0
25-27	Հանքային արտադրանք (աղ, քարեր, շինանյութ, ցեմենտ և այլն)	2.7	1.8	2.0	2.1	2.1	1.9	1.8
27	Վառելիքաէներգետիկ ապրանքներ	1.6	0.8	0.9	1.0	0.9	0.8	0.8
28-40	Քիմիական արդյունաբերության արտադրանք, կաուչուկ	18.6	18.5	17.7	18.3	19.6	18.3	18.4
41-43	Կաշվե հումք, չվերամշակված մորթի և դրանցից պատրաստվածքներ	0.5	0.4	0.5	0.5	0.5	0.4	0.4
44-49	Փայտյա և ցելյուլոզա-թղթե պատրաստվածքներ	2.0	1.9	1.6	1.6	1.5	1.5	1.4
50-67	Գործվածքեղեն, տեքստիլ արտադրանք և կոշիկեղեն	5.9	6.0	6.0	6.2	6.2	6.3	5.7
71	Թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստվածքներ	0.3	0.2	0.3	0.3	0.4	0.3	0.4
72-83	Մետաղներ և դրանցից պատրաստվածքներ	6.4	6.2	6.9	7.2	7.3	6.8	6.7
84-90	Մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	44.8	47.4	48.6	47.3	46.2	47.6	49.6
68-70, 91-97	Այլ ապրանքներ	4.2	3.9	3.8	4.0	3.9	3.9	3.7

Դիտարկումները ցույց են տալիս, որ վերջին 6-7 տարիներին Ռուսաստանի ներքին շուկայում կառուցվածքային տեղաշարժերի մի զգալի մասը պատժամիջոցների հետևանք է: Դրանով հանդերձ, Ռուսաստանի Դաշնության ներմուծման կառուցվածքի մի զգալի մասը չի փոխվում, ինչը, մեծ հաշվով, պայմանավորված է նրա արտահանման մեջ հանքահումքային ոլորտի, հատկապես՝ էներգակիրների գերակշռությամբ, ինչպես նաև ներմուծման մեջ մեքենասարքավորումների և տրանսպորտային միջոցների ներմուծման մեծ մասնաբաժնով: Աղյուսակ 2.6-ում ներկայացված է Ռ-Դ ներմուծման կառուցվածքը 2015-2021 թվականների համար (2021 թ. տվյալները մինչև մայիս ամիս ներառյալ)՝ ըստ Ռ-Դ վիճակագրական կոմիտեի տվյալների:

Ռ-Դ ներմուծման մեջ գերակշիռ ներկայացվածություն ունի «մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ» ապրանքախումբը (դասիչ-միջակայքը՝ 84-90), որն արժեքային արտահայտությամբ կազմում է ներմուծման գրեթե կեսը: Ընդ որում, 2014 թվականից կիրառված պատժամիջոցների

⁹⁴ Աղբյուրը՝ <https://customs.gov.ru/statistic>

մի գգալի մասը վերաբերում է հենց այս ապրանքախմբին, որի նպատակը, առաջին հերթին, Ռուսաստանի համար կենսական նշանակության հանքահումքային ոլորտը և վերամշակող արդյունաբերությունը հիմնական կապիտալ կամ ներդրումային ապրանքներից զրկելն է, ինչը, ի վերջո (ըստ կիրառվող պատժամիջոցների տրամաբանության) պետք է թուլացներ Ռուսաստանի տնտեսությունը և երկրի իշխանություններին հարկադրեր գիշումների գնալ նախևառաջ Ղրիմի և քաղաքական բնույթի այլ հարցերում: Սակայն կիրառվող պատժամիջոցների գործադրման ողջ ժամանակահատվածում վերոնշյալ ապանքախմբի տեսակարար կշիռը ՌԴ ներմուծման ընդհանուր կառուցվածքում ոչ միայն չի նվազել, այլև ավելացել է: Այսպես, եթե 2014 թ. «մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ» ապրանքախմբի տեսակարար կշիռը ՌԴ ներմուծման մեջ կազմել է 44.8%, 2020 թ.՝ 44.7%, ապա 2021-ի առաջին կիսամյակի արդյունքներով այդ ապրանքախմբի տեսակարար կշիռը ՌԴ ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 49.6%: Ակնհայտ է, որ ՌԴ ներմուծման մեջ, պատժամիջոցներով պայմանավորված, արևմտյան երկրներից նշված ապրանքախմբի կրճատումը լրացվել է այլ երկրներից ներմուծման ավելացման, ինչպես նաև ներքին արտադրության ընդլայնման հաշվին:

ՌԴ ներմուծման կառուցվածքում երկրորդ հորիզոնականը, ըստ տեսակարար կշռի, զբաղեցնում է «քիմիական արդյունաբերության արտադրանք, կաուչուկ» (դասիչ-միջակայքը՝ 28-40) ապրանքախումբը: Դիտարկվող ժամանակահատվածում ՌԴ ներմուծման կառուցվածքում տվյալ ապրանքախմբի մասնաբաժինը կայուն է մնացել:

ՌԴ ներմուծման կառուցվածքում իր նշանակությամբ ու մասնաբաժնով երրորդ ապրանքախումբը «պարենային ապրանքներ և գյուղատնտեսական հումք (բացառությամբ տեքստիլ արդյունաբերության)» ապրանքախումբն է (դասիչ-միջակայքը՝ 01-24): Այս ապրանքախմբի մեջ մտնող մի շարք ապրանքներ մինչև պատժամիջոցների գործադրումը ՌԴ-ն ներմուծում էր եվրոպական երկրներից ու ԱՄՆ-ից: Սակայն պատժամիջոցների գործադրումը ՌԴ-ին ստիպեց ոչ միայն հրաժարվել այդ ապրանքներից, այլև դրանց գծով կիրառել հակամիջոցներ՝ արգելելով իր նկատմամբ այլ ապրանքատեսակների գծով պատժամիջոցներ կիրառող երկրներից սննդամթերքի և գյուղատնտեսական հումքի ներմուծումը: Ըստ ռուսական փորձագետների գնահատումների՝ արևմտյան պատժամիջոցների գործադրման առաջին 2.5 տարվա ընթացքում Ռուսաստանին հաջողվել է շուրջ 4 մլրդ ԱՄՆ դոլարի ներմուծվող ապրանքներ փոխարինել՝ ներքին գյուղատնտեսական արտադրության ավելացման հաշվին: Ընդ որում, արդեն 2019 թ. կեսերին Ռուսաստանին հաջողվել էր պարենամթերքի ներմուծումը կրճատել 31,2%-ով⁹⁵:

⁹⁵https://ru.xpert.ru/%D0%98%D0%BC%D0%BF%D0%BE%D1%80%D1%82%D0%BE%D0%B7%D0%B0%D0%BC%D0%B5%D1%89%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%B2_%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8

Ռուսաստանի ներմուծման կառուցվածքում իր նշանակությամբ չորրորդ ապրանքախումբը «գործվածքեղեն, տեքստիլ արտադրանք և կոշիկեղեն»-ն է (դասիչ-միջակայքը՝ 50-67), որը նաև զգալի հետաքրքրություն է ներկայացնում հայ արտադրողների համար: Պատժամիջոցների կիրառումից հետո ապրանքային այս խմբի ներմուծման մասնաբաժինը չի նվազել, նույնիսկ ավելացել է:

ՌԴ ներմուծման կառուցվածքի ու շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից ապրանքների և ծառայությունների ներմուծումը կազմում է Ասկախ պետությունների համագործակցության անդամ երկրներից ներմուծման էական ու ծանրակշիռ մասը: Այնուամենայնիվ, 2015-2021 թթ. ԱՊՀ անդամ երկրներից ներմուծման մասնաբաժինը ՌԴ ընդհանուր ներմուծման մեջ նվազել է, իսկ ԵԱՏՄ մասնաբաժինը՝ աճել: Այսպես, եթե 2015 թ. ԱՊՀ երկրների մասնաբաժինը Ռուսաստանի ներմուծման մեջ կազմել է 11.5%, իսկ ԵԱՏՄ-ինը՝ 7.6%, ապա 2020 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 10.7 և 8.0% (հավելված 7):

Վերը նշված իրողությունների համատեքստում, դեպի Ռուսաստան ՀՀ արտահանման կառուցվածքը և շարժընթացը դիտարկելիս ՌԴ-ն Հայաստանի համար շարունակում է մնալ հարաբերականորեն մեծ ավելացված արժեք ունեցող ապրանքների (հետևաբար՝ ավելի բարձր եկամուտ ապահովող) արտահանման հիմնական շուկա: Ընդ որում՝ վերջին տարիներին հիմնական արտահանվող արտադրատեսակների մեծ մասի գծով շարժընթացը աճող է: Քառանիշ դասակարգմամբ՝ շուրջ մեկուկես տասնյակ ապրանքախմբերի գծով Հայաստանից արտահանման ընդհանուր ծավալի ավելի քան երեք քառորդը բաժին է ընկնում ռուսական շուկային: Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության տվյալների՝ 2020 թ. Հայաստանից ՌԴ արտահանվող հիմնական ապրանքատեսակները վերամշակված սնունդն ու միրգ-բանջարեղենն են՝ հետևյալ ապրանքախմբերի տեսքով՝ «լոլիկ թարմ կամ պաղեցրած» (ՀՀ-ից ընդհանուր արտահանման 99.9%-ը), «այլ թարմ սրգեր» (99.9%), «ծիրան, բայ, կեռաս, դեղձ» (99.0%), «խաղող թարմ կամ չորացրած» (95.5%), «ձուկ թարմ կամ պաղեցրած» (98.1%), «պանիր և կաթնաշոռ» (88.7%), «ջրեր՝ բնական կամ արհեստական հանքային, գազավորված կամ չգազավորված, չքաղցրացրած, սառույց և ձյուն» (81%), «էթիլային սպիրտ, բնափոխված, սպիրտային թուրմ, լիկյոր և այլ սպիրտային ըմպելիք» (76.8%), «շոկալադե և շոկոլադից պատրաստված այլ սնունդ» (70.4%) «գինի խաղողի՝ բնական» (51%): ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում դեպի ՌԴ արտահանման մասնաբաժին էական մաս են կազմում նաև «ադամանդ» (63.1%), «ձեռնոց, թաթման, միտենկա տրիկոտաժե» (99.6%), ինչպես նաև տղամարդու և կանացի հագուստը, կոշիկեղենը և տրիկոտաժեղենը (ըստ ապրանքախմբերի՝ ՀՀ-ից այս ապրանքների արտահանման 20-60%-ը) (հավելված 8): Հայաստանը վերը նշված ապրանք-

քախմբերի գծով դեպի ՌԴ արտահանման մեծ ներուժ ունի, որը շահեկանորեն կարելի է իրացնել խելամիտ տնտեսական քաղաքականության և պետական կարգավորումների ու արդյունավետ գործիքակազմերի կիրառման պարագայում:

Ակնհայտ է, որ ՀՀ-ից ՌԴ որոշակի ապրանքախմբերի արտահանման տպավորիչ ծավալները և դրանց աճող շարժընթացը վկայում են, որ մեր ապրանքներն առավել քան մրցունակ են ՌԴ շուկայում: Այս հանգամանքը երևում է ռուսական շուկայի համապատասխան սեզոններում ապրանքախմբերի գնային դիտարկումից, ինչպես նաև Հայաստանում նույն ապրանքախմբերի գնագոյացման ու դեպի ռուսական շուկա դրանց արտահանման պարագայում վերջնական գնակազմավորման հաշվարկից, համադրումներից և վերլուծություններից (հավելված 9):

Դիտարկումները ցույց են տալիս, որ ՀՀ-ից առավել բարձր մաքսային արժեք ունեցող արտահանվող պատրաստի արտադրանքի մեջ միայն մի քանի ապրանքների գծով է ՌԴ-ի մասնաբաժինը փոքր: Մասնավորապես, ՀՀ-ից ադամանդ արտահանվում է հիմնականում Բելգիա և Կանադա, ծխախոտ և սպիրտային որոշ խմիչքներ արտահանվում են Իրաք: Ի դեպ, այս շուկան ՀՀ-ի համար վերջերս է բացահայտվել, և ծխախոտի արտահանումը վերջին 5-6 տարիների ընթացքում է մեծ թափ առել: Հայաստանից այդմիևն նրբաթիթեղ գերազանցապես արտահանվում է ԱՄՆ, էլեկտրաէներգիա՝ գրեթե ամբողջությամբ՝ Իրան, ցեմենտ՝ գրեթե ամբողջությամբ՝ դեպի Վրաստան, հազուստ և հազուստի պարագաներ՝ մասամբ Իտալիա:

Ավելի քան 17 միլիոն քառ. կմ տարածք ունեցող ՌԴ-ն ընդգրկում է 11 ժամային գոտի, իսկ արևմուտքից արևելք երկարությունն ավելի քան 10 000 կմ է: ՌԴ տարածքի մեծությունից, բնակչության անհամաչափ տեղաբաշխումից, խոշոր քաղաքների միջև մեծ հեռավորությունից, տարբեր քաղաքների միջև գների մեծ տարբերությունից (միևնույն ապրանքի գինը տարբեր քաղաքներում կարող է տատանվել մինչև 3-4 անգամ) և այլ հանգամանքներից ելնելով՝ ՀՀ-ի նման փոքր երկրից դեպի Ռուսաստան արտահանումը պետք է «թիրախավորված» լինի, ինչը ենթադրում է ընտրված չափանիշներով, արտահանման տեսանկյունից տնտեսապես առավել շահավետ քաղաքներ արտահանման կազմակերպում: Օրինակ, Ռուսաստանն ունի 100 հազար և ավելի բնակչությամբ 169 քաղաք, որոնցից կարելի է ընտրել 250 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքները, որոնք գտնվում են Երևանից մինչև 3000 կմ հեռավորության վրա: Որպես հեռավորության ընտրության հիմնավորում կարող է լինել հետևյալը. ապրանքների՝ մեծ հեռավորությամբ (օրինակ՝ 3000 կմ-ից ավելի) արտահանման դեպքում ապրանքի միավորի վերջնական արժեքի մեջ բեռնափոխադրման արժեքը ավելի մեծ է, ինչի հետևանքով փոքրանում է շահույթի մարժան:

ՌԴ ներմուծման և ՀՀ արտահանման կառուցվածքների վերլուծության հիման վրա առանձնացվել են այն հիմնական ապրանքները, որոնց գծով

առավել շահավետ է երկկողմ առևտուր խորացնելը: Հաշվարկի տրամաբանությունն այսպիսին է. հայկական արտադրության ապրանքները ՀՀ սահմանից մինչ Ռուսաստանի Դաշնության վերջնական սպառողներին հասնելը միջին հաշվով թանկանում են շուրջ 60%-ով: Սրա պատճառը հիմնականում բեռնափոխադրման խնդիրներն են և ռուսական շուկայի առանձին հատվածներում կենտրոնացվածության բարձր մակարդակը:

Թեև Ռուսաստանում համանման և հայկականի հետ համադրելի ապրանքների միջին գների հետ համեմատություններ անելիս առաջանում են նույնականացման որոշ խնդիրներ, այդուհանդերձ, ներկայացվել են ՌԴ-ում ներքին մանրածախ գները (հիմնված սպառողական զամբյուղի վրա)՝ ըստ ՀՀ-ի համար արտահանման առումով կարևոր նշանակություն ունեցող 25 քաղաքների: Հավելվածներ 9 և 10-ում ներկայացված հաշվարկները ցույց են տալիս, որ մեծ ավելացված արժեք ունեցող, ոչ մեծ թվով ՀՀ արտադրության ապրանքներն են միայն, որ գնային առումով դեռևս մրցունակ չեն ռուսական շուկայում. խոսքը գազավորված ըմպելիքների և հանքային ջրերի, բնական մեղրի, կաթնաշոռի և երշիկեղենի մասին է:

**ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ**

**3.1 ՀՀ-ում արդյունաբերական
կազմակերպությունների հիմնական
ցուցանիշների վրա ազդող գործոնների
վերլուծությունը**


ՀՀ-ում արդյունաբերական կազմակերպությունների թողարկման ծավալների, իրացման շուկաների, աշխատողների քանակի և արտադրողականության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսության ոլորտների, հրապարակվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի տարեկան և կիսամյակային «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագրերում⁹⁶: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են ՀՀ-ում արդյունաբերական կազմակերպությունների նշյալ ցուցանիշները 2010-2019 թվականներն ընդգրկող ժամանակահատվածի համար:

Վերոնշյալ տեղեկագիրը 2019 թ. համար ներառում է 3179 կազմակերպությունների տվյալներ, որոնցից 2788-ը գործում է մշակող արդյունաբերության ոլորտում: Դրանց զգալի մասը՝ շուրջ 55.5%-ը, փոքր ձեռնարկություններ են (10-ից 50 աշխատող ունեցող)⁹⁷, շուրջ 35%-ը՝ միկրոձեռնարկություններ (մինչև 10 աշխատող ունեցող), 5.1%-ը՝ միջին (50-ից 100 աշխատող ունեցող), իսկ 4.4%-ը՝ խոշոր ձեռնարկություններ (100-ից ավելի աշխատող ունեցող): Ընդ որում, փոքր և միկրոկազմակերպությունների կշիռները զգալիորեն փոխվել է 2019 թ.: Այսպես, միկրոձեռնարկությունները 2010-2018 թթ. կազմել են կազմակերպությունների ընդհանուր թվի միջինը 58.4%-ը, իսկ 2019 թ.՝ 35%-ը, իսկ փոքր ձեռնարկությունները՝ 34.3%-ը՝ 2019 թ. 55.5%-ի փոխարեն: Այդպիսի փոփոխությունը կարող է բացատրվել հարկային վարչարարության բարելավմամբ, հետևաբար՝ չգրանցված աշխատակիցների թվի նվազմամբ, ինչի արդյունքում աճել է կազմակերպությունների աշխատակից-

⁹⁶ Տեղեկագրերը պատրաստվում են արդյունաբերական կազմակերպությունների՝ ներառյալ անհատ ձեռնարկատերերի կողմից ՀՀ ՎԿ-ին տրամադրված վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մշտադիտարկման մեջ չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի ծավալի գնահատման հիման վրա:

⁹⁷ Ըստ չափերի՝ կազմակերպությունների բաժանումն իրականացվել է հետևյալ մոտեցմամբ՝ մինչև 10 աշխատող ունեցող կազմակերպությունները դասվել են միկրոձեռնարկությունների շարքին, 10-ից 50 աշխատող ունեցողները՝ փոքրերի, 50-ից 100-ը՝ խոշոր, իսկ 100-ից ավելի աշխատող ունեցող կազմակերպությունները՝ խոշորների շարքին:

ների միջին տարեկան թվաքանակը, և շատ կազմակերպություններ միկրո-յից անցել են փոքրերի խումբ:




Գծապատկեր 3.1

Մշակող արդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների կազմը՝ ըստ աշխատողների թվաքանակի, %⁹⁸

Եթե մշակող արդյունաբերության ոլորտում գործող կազմակերպությունների կառուցվածքը դիտարկենք արտադրության և արտահանման ծավալների տեսանկյունից, ապա այն զգալիորեն տարբերվում է աշխատողների թվով պայմանավորված դասակարգումից: Այսպես, 2019 թվականին կազմակերպությունների ընդհանուր թվի միայն 4.4%-ն է խոշոր, սակայն դրանց բաժին է ընկնում ընդհանուր արտադրանքի ծավալի շուրջ 27%-ը: Միջին կազմակերպություններին բաժին է ընկնում ընդհանուր արտադրանքի 24.5%-ը, իսկ փոքրերին՝ 32.4%-ը: Միկրոձեռնարկությունները, որոնց մասնաբաժինը կազմում է ընդհանուրի 35%-ը, արտադրում են ընդհանուր արտադրանքի շուրջ 16.5%-ը: Այս դեպքում ևս, կազմակերպությունների կառուցվածքը 2019 թ. զգալիորեն փոխվել է փոքր և միջին կազմակերպությունների մասնաբաժնի ավելացման ուղղությամբ:


Արտահանման ծավալների մասնաբաժինները, ըստ կազմակերպությունների չափերի, 2010–2019 թթ. նույնպես զգալի փոփոխությունների են ենթարկվել, սակայն այս դեպքում փոփոխությունները ոչ միայն 2019 թվականին են՝ նախորդ տարիների նկատմամբ, այլև դիտարկվող ողջ ժամանակահատվածում: 2016 թվականից սկսած՝ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների մեջ խոշոր կազմակերպությունների կշիռը շարունակաբար նվազել է՝ 2015 թ. 67.8%-ից 2019 թ. հասնելով 31.3%-ի: Փոխարենը, նույն ժամանակահատվածում զգալիորեն աճել է միջին ձեռնարկությունների մասնաբաժինը՝ 25.0%-ից մինչև 53.8%:

⁹⁸ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման» տարեկան վիճակագրական տեղեկագրեր:



Գծապատկեր 3.2

Մշակող արդյունաբերության թողարկման ծավալը՝ ըստ կազմակերպությունների չափի, %




Գծապատկեր 3.3

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալները՝ ըստ կազմակերպությունների չափի, %

Հատկանշական է, որ միջին կազմակերպությունների մասնաբաժինը ընդհանուր արդյունաբերական կազմակերպությունների քանակի մեջ վերջին տարիներին չի ավելացել, հետևաբար՝ դրանց և՛ թողարկման, և՛ արտահանման ծավալների հարաբերական աճը խոսում է վերջիններիս գործունեության ընդլայնման և արդյունավետության աճի մասին: Գծապատկեր 3.4-ում արտացոլված են մեկ աշխատողին բաժին ընկնող թողարկման ծավալների փոփոխությունները՝ ըստ տարիների և ըստ կազմակերպությունների չափերի: Այդ տվյալները հաշվարկված են որպես թողարկման ծավալների և աշխատողների միջին տարեկան թվաքանակի հարաբերակցություն (սակայն արտադրողականությունը ստանալու համար անհրաժեշտ էր կիրառել մեկ աշխատողին բաժին ընկնող ավելացված արժեքը), և դրանք վկայում են այն մասին, որ միջին և միկրոձեռնարկությունների արդյունավետությունը վերջին տարիներին աճել է՝ հանգեցնելով և՛ թողարկման, և՛ արտահանման ծավալներում դրանց դերի բարձրացմանը:

ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակվող ցուցանիշները հնարավորություն են տալիս նաև ուսումնասիրելու յուրաքանչյուր ոլորտի արտադրանքի ընդհանուր իրացման մեջ արտահանման մասնաբաժինները: Այսպես, 2010-2019 թթ. միջին տվյալների համաձայն՝ արտադրված արտադրանքի արտահանման մեծ մասնաբաժիններ են ունեցել դեղագործական արտադրանքի, համակարգչային և էլեկտրոնային արտադրանքի, խմիչքների և հագուստի արտադրությունները, որոնց ավելի քան 50%-ն արտահանվել է: Ընդ որում, այդ ապրանքների հիմնական արտահանման ուղղությունը ԱՊՀ երկրներն են: Դեպի այլ երկրներ արտահանման մեծ ծավալներ են ապահովել կաշվե

արտադրատեսակների, ծխախոտի և հիմնային մետաղների արտադրանքները, որոնց արտահանման մասնաբաժինը ընդհանուր իրացման մեջ կազմել է համապատասխանաբար՝ 34.2, 31.2 և 30.7%:



Գծապարկեր 3.4

Մեկ աշխատողին բաժին ընկնող թողարկումը՝ ըստ կազմակերպության չափերի, մլն ՀՀ դրամ, 2010-2019 թթ.

Ցածր արտահանման մասնաբաժիններ ունեն թղթի արտադրության, պոլիգրաֆիական, ինչպես նաև «մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում» (այս խումբը զգալի չափով կազմված է նորոգման և տեղադրման աշխատանքներից) ոլորտների արտադրությունները (գծապարկեր 3.5):



Գծապարկեր 3.5

Ընդհանուր վաճառքի ծավալներում արտահանման կշիռները՝ ըստ ոլորտների և արտահանման աշխարհագրության, %

Արդյունաբերական կազմակերպությունների արտադրության ծավալների վրա ազդող գործոնները, ինչպես նաև դրանց փոխկապակցվածությունները և փոխազդեցությունները գնահատելու նպատակով, «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագրերում առկա տվյալների հիման վրա, կառուցվել են պանելային ռեգրեսիոն մոդելներ:

Աղյուսակ 3.1-ում ներկայացված են արտադրության անվանական ծավալների (L_Prod_n) վրա արտադրողականության⁹⁹ (L_Productivity), աշխատողների միջին թվաքանակի (Emp_Average) և ընդհանուր վաճառքի ծավալներում արտահանման կշռի (Exp_share) ազդեցությունների գնահատման ամփոփ տվյալները:

Աղյուսակ 3.1

Արդյունաբերական կազմակերպությունների արտադրության ծավալների վրա գործոնների ազդեցության գնահատման ամփոփ տվյալները (բոլոր կազմակերպությունների տվյալները)

```
Fixed-effects (within) regression                Number of obs   =    1,617
Group variable: Sectors                         Number of groups =     211

R-sq:                                           Obs per group:
  within = 0.6501                               min       =     1
  between = 0.8705                              avg       =     7.7
  overall = 0.6647                              max       =     9

corr(u_i, Xb) = 0.2098                         F(3,1403)       =   868.97
                                                Prob > F        =   0.0000
```

D.L_Prod_n	Coef.	Std. Err.	t	P> t	[95% Conf. Interval]	
Emp_Average						
Dl.	.0016363	.0002786	5.87	0.000	.0010899 .0021827	
L_Productivity						
Dl.	.8209564	.0164725	49.84	0.000	.7886431 .8532697	
Exp_share						
Dl.	.0045173	.0006478	6.97	0.000	.0032466 .0057881	
_cons	.0335973	.0109669	3.06	0.002	.0120841 .0551106	
sigma_u	.41073043					
sigma_e	.43826543					
rho	.46760164	(fraction of variance due to u_i)				

F test that all u_i=0: F(210, 1403) = 1.63 Prob > F = 0.0000

⁹⁹ Մոդելներում արտադրողականությունը մեկ աշխատողին բաժին ընկնող թողարկումն է:

Բոլոր տվյալները վերցվել են լոգարիթմական տեսքով, և շարքերի ստացիոնարությունն ապահովելու համար հաշվարկվել են դրանց առաջին տարբերությունները: Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ արտադրության ծավալների վրա բոլոր ներառված գործոններն ունեն նշանակալի դրական ազդեցություն: Սակայն հատկանշական է, որ արտադրողականության ազդեցության գործակիցը՝ 0.79, էականորեն բարձր է մյուս գործոնների՝ արտահանման կշռի՝ 0.006, աշխատողների թվաքանակի՝ 0.0014, գործակիցների պայմաններում: Դա նշանակում է, որ պատմականորեն արդյունաբերական արտադրանքի ծավալների աճը գերազանցապես պայմանավորված է եղել մեկ աշխատողին բաժին ընկնող թողարկման ծավալների աճով, իսկ աշխատողների թվաքանակի ավելացումն ունեցել է բավական փոքր ազդեցություն: Ընդ որում, արդյունքները գրեթե չեն տարբերվի, եթե կազմակերպությունների ցանկում թողնենք միայն արտադրանքի ավելի քան 10%-ն արտահանողներին:

Աղյուսակ 3.2

Արտադրության ծավալների վրա ազդեցությունների գնահատման ամփոփ տվյալները (միայն արտահանող ճյուղեր (որոնք արտահանում են արտադրանքի 10%-ից ավելին))

Fixed-effects (within) regression	Number of obs	=	1,020
Group variable: Sector	Number of groups	=	131
R-sq:	Obs per group:		
within = 0.6683	min =		1
between = 0.9098	avg =		7.8
overall = 0.6822	max =		9
	F(3, 886)	=	595.13
corr(u_i, Xb) = 0.2193	Prob > F	=	0.0000

D.L_Frod_n	Coef.	Std. Err.	t	P> t	[95% Conf. Interval]
L_Productivity					
D1.	.7996506	.0197092	40.57	0.000	.7609685 .8383328
Exp_share					
D1.	.0057726	.0007004	8.24	0.000	.0043981 .0071472
Emp_Average					
D1.	.0014276	.0002854	5.00	0.000	.0008675 .0019877
_cons	.0350554	.013844	2.53	0.012	.0078845 .0622263
sigma_u	.4088617				
sigma_e	.43926861				
rho	.46419432	{fraction of variance due to u_i}			

F test that all u_i=0: F(130, 886) = 1.48

Prob > F = 0.0009

Հաջորդ փուլում իրականացվել է արտահանման վրա ազդող գործոնների վերլուծություն: Այդ դեպքում մոդելներում որպես կախյալ փոփոխական է ներառվել ընդհանուր արտադրանքի ծավալներում արտահանման կշիռը, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ աշխատողների միջին թվաքանակը, արտադրողականությունը և ընդհանուր իրացման ծավալները: Այս դեպքում, սակայն, ստացված գնահատականները որոշակիորեն շեղվում են սպասվածից: Մասնավորապես, արտադրողականության և աշխատողների թվաքանակի աճը բացասաբար է ազդում արտահանման կշռի վրա, իսկ ընդհանուր իրացման ծավալը՝ դրական: Ընդ որում, արտահանման կշռի վրա արտադրողականության ազդեցության գործակիցը նշանակալի է: Գրեթե նույն արդյունքն ստացվում է նաև այն դեպքում, երբ մոդելում ներառվում են միայն արտահանող կազմակերպությունները, որոնք արտահանում են իրենց արտադրանքի առնվազն 10%-ը:

Աղյուսակ 3.3

Արտահանման կշռի վրա ազդեցությունների գնահատման արդյունքները (բոլոր կազմակերպությունների տվյալները)

Fixed-effects (within) regression		Number of obs	=	1,615		
Group variable: Sectors		Number of groups	=	209		
R-sq:		Obs per group:				
within	= 0.0521	min	=	1		
between	= 0.0000	avg	=	7.7		
overall	= 0.0500	max	=	9		
corr(u_i, Xb) = -0.0491		F(3,1403)	=	25.70		
		Prob > F	=	0.0000		
D.Exp_share	Coef.	Std. Err.	t	P> t	[95% Conf. Interval]	
Emp_Average Dl.	-.0154349	.0112849	-1.37	0.172	-.0375721	.0067022
L_Productivity Dl.	-3.277576	.9299895	-3.52	0.000	-5.101896	-1.453256
L_Sales Dl.	7.783388	.9528249	8.17	0.000	5.914273	9.652503
_cons	.8148065	.4426199	1.84	0.066	-.0534616	1.683075
sigma_u	10.986409					
sigma_e	17.6476					
rho	.27931103	(fraction of variance due to u_i)				
F test that all u_i=0: F(208, 1403) = 0.95			Prob > F = 0.6674			

պությունների գործունեության վերաբերյալ որակական և քանակական մեծ ծավալի տեղեկատվություն: Հարցման արդյունքների մշակման հիման վրա նախանշվել են ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացման ուղիները և ներկայացվել են պետական քաղաքականության միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ:

Հարցմանը մասնակցել է մշակող արդյունաբերության ոլորտում գործող 74 կազմակերպություն: Հարցման ընտրանքն իրականացվել է շերտավորված ընտրանքի (stratified sampling) մեթոդով, որի համար օգտագործվել է ՀՀ արդյունաբերական կազմակերպությունների քանակի և դրանց թողարկման ծավալների վերաբերյալ ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակվող տեղեկատվությունը:

Մրցունակության գնահատումն իրականացվել է AHP (The analytic hierarchy process)¹⁰⁰ մեթոդի միջոցով, որը ենթադրում է մրցունակությունը պայմանավորող բոլոր գործոնների աստիճանակարգության կառուցում և թույլ է տալիս քայլ առ քայլ գնահատել և բացահայտել այդ գործոնների ազդեցությունները ընդհանուր մրցունակության վրա: AHP մեթոդի հիման վրա կառուցված՝ արդյունաբերական կազմակերպությունների մրցունակությունը պայմանավորող գործոնների 4 մակարդակ ունեցող աստիճանակարգային համակարգը ներկայացված է հավելված 11-ում, որի մակարդակները և դրանցում ներառված գործոնների ընտրությունը կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա¹⁰¹: 4-րդ մակարդակի գործոնների վերաբերյալ տեղեկատվությունն ստացվել է հարցման միջոցով:

Հարցմամբ հավաքագրված տեղեկատվությունը բաղկացած է երկու բաժիններից՝


- կազմակերպությունների և դրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվություն,
- ներքին և արտաքին շուկաներում մրցունակության բարձրացմանը խոչընդոտող գործոնների վերաբերյալ տեղեկատվություն:

Կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը նպատակ է ունեցել ըստ իրենց առանձնահատկությունների տարանջատելու կազմակերպությունները՝ մրցունակության բարձրացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվությունն առավել թիրախային դարձնելու համար:

¹⁰⁰ Տե՛ս **Fariborz Y. Partovi**, Determining What to Benchmark: An Analytic Hierarchy Process Approach, International Journal of Operations & Production Management, Vol. 14 Iss 6, էջ 25-39, 1994:

¹⁰¹ Տե՛ս **Moonhyang Oh, Seongseop Kim & Aejoon Lee**, Development of an Evaluation Scale for Inter-Country Tourism Industry Competitiveness using the Delphi Technique and Analytic Hierarchy Process, International Journal of Tourism Sciences, 2013, 13:2, 1-32, DOI: 10.1080/15980634.2013.11434671, **Sajee B. Sirikrai, John C.S. Tang**, Industrial competitiveness analysis: Using the analytic hierarchy process, Journal of High Technology Management Research 17 (2006) 71-83, 2006, <http://www.mineco04.ru/razvitie-predprinimatelstva-v-respublike-altav/%D0%90%D0%BD%D0%BA%D0%B5%D1%82%D0%B0%20%D0%B4%D0%BB%D1%8F%20%D1%80%D1%83%D0%BA%D0%BE%D0%B2%D0%BE%D0%B4%D0%B8%D1%82%D0%B5%D0%BB%D0%B5%D0%B9.pdf>


Հարցմանը մասնակցած կազմակերպությունների շարքում մեծ տեսակարար կշիռ ունեն սննդամթերքի արտադրության ոլորտում գործող կազմակերպությունները՝ շուրջ 27%, հագուստի արտադրության ոլորտում գործող կազմակերպությունները՝ շուրջ 18.9%, ինչը համապատասխանում է շերտավորված ընտրանքի (stratified sampling) մեթոդով հաշվարկված կազմակերպությունների անհրաժեշտ քանակին:



Գծապատկեր 3.6

Հարցմանը մասնակցած կազմակերպությունները՝ ըստ գործունեության ոլորտի

Հարցմանը մասնակցող կազմակերպությունների շարքում ներառված են տարբեր ժամանակահատվածներում գործունեություն իրականացրած կազմակերպություններ, ինչը մեծացնում է ստացված արդյունքների արժեքը, քանի որ տեղեկատվություն է պարունակում հնարավորինս լայն շրջանակի վերաբերյալ (գծապատկեր 3.7):




Գծապատկեր 3.7

Հարցմանը մասնակցած կազմակերպությունները՝ ըստ գործունեության ժամանակահատվածի


Ըստ շրջանառության ծավալների՝ կազմակերպությունների շարքում 32.4%-ը կազմում են միկրոձեռնարկությունները՝ մինչև 25 մլն ՀՀ դրամ շրջա-

նառությամբ, իսկ 35.1%-ը՝ 115-ից 1 մլրդ ՀՀ դրամ շրջանառություն ունեցող կազմակերպությունները: Բացի դրանից, հարցաթերթիկը պարունակում է նաև կազմակերպության աշխատողների թվաքանակի վերաբերյալ հարց, ինչը հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացում կազմելու հարցմանը մասնակցող կազմակերպությունների չափի վերաբերյալ (գծապատկեր 3.9):



Գծապատկեր 3.8


Հարցմանը մասնակցած կազմակերպությունները՝ ըստ շրջանառության ծավալների



Գծապատկեր 3.9


Հարցմանը մասնակցած կազմակերպությունները՝ ըստ աշխատողների թվաքանակի

Հարցման արդյունքում ստացված կարևոր տեղեկությունների շարքում անհրաժեշտ է առանձնացնել կազմակերպությունների արտադրանքի իրացման կառուցվածքում արտահանման կշռի վերաբերյալ տվյալները, որոնց արդյունքները ներկայացված են գծապատկեր 3.10-ում: Ընդ որում, արտահանող կազմակերպություններից շուրջ 48%-ի համար հիմնական արտահանման շուկան Ռուսաստանի Դաշնությունն է: Սակայն պետք է նշել, որ հարցմանը մասնակցած կազմակերպությունների շարքում կան նաև ԵԱՏՄ այլ երկրներ (12%) և ԵՄ երկրներ (12%) արտահանող կազմակերպություններ, հետևաբար՝ արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման խոչընդոտներին առնչվող տեղեկատվությունը վերաբերում է նաև այդ երկրներին:



Գծապարկեր 3.10

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների արտադրանքի իրացման կառուցվածքում արտահանման կշիռը




Գծապարկեր 3.11

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների արտահանման հիմնական շուկաները


Բացի ընկերությունների հիմնական բնութագրերից, հարցման միջոցով տեղեկություն է հավաքագրվել նաև ընկերությունների կողմից կիրառվող ներդրումային ռազմավարությունների վերաբերյալ, որի նպատակն է եղել պարզել, թե որքան են ընկերությունները ներդրումներ կատարում հետազոտությունների և զարգացման, նոր տեխնոլոգիաների յուրացման, մարքեթինգի և մարդկային կապիտալի զարգացման մեջ:

Արդյունքները ցույց են տալիս, որ ընկերությունների մեծ մասը վերը նշված ուղղությունների վրա ծախսում է իր ընդհանուր ծախսերի 10%-ից պակաս, իսկ հետազոտությունների և զարգացման ուղղությամբ հարցված ընկերությունների ավելի քան 33%-ը ծախսեր չի կատարում ընդհանրապես: Նոր տեխնոլոգիաների կիրառման համար ծախսեր չկատարող ընկերությունները կազմում են ընդհանուր հարցվածների 17.1%-ը, իսկ այն ընկերությունները, որոնք ներդրումներ չեն կատարում մարդկային կապիտալում (չափված աշխատակիցների վերապատրաստման ծախսերով) կազմում են ընդհանուրի 25%-ը:




Գծապարկեր 3.12

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների կողմից իրենց գործունեության ոլորտին առնչվող հետազոտությունների իրականացման ուղղությամբ տարեկան ծախսվող գումարները (խնդրում ենք ներկայացնել որպես %՝ ընդհանուր տարեկան ծախսերի նկատմամբ)




Գծապարկեր 3.13

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների կողմից նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ կատարվող տարեկան ծախսերը (խնդրում ենք ներկայացնել որպես %՝ ընդհանուր տարեկան ծախսերի նկատմամբ)



Գծապարկեր 3.14

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների կողմից բրենդի զարգացման և մարքեթինգի վրա կատարվող ծախսերը՝ մեկ տարվա կտրվածքով (խնդրում ենք ներկայացնել որպես %՝ ընդհանուր տարեկան ծախսերի նկատմամբ)




Գծապատկեր 3.15

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների կողմից աշխատողների վերապատրաստումներին ուղղվող ծախսերը՝ մեկ տարվա կտրվածքով (խնդրում ենք ներկայացնել որպես % ընդհանուր փարենկան ծախսերի նկարմամբ)

Ընդհանուր պատկերացում ձևավորելով ընկերությունների հիմնական բնութագրերի և ներդրումային ռազմավարությունների վերաբերյալ՝ հաջորդիվ վերլուծվել են դրանց մրցունակության վրա ազդող գործոնները և գնահատվել է դրանց կարևորությունը: Գործոնները համակցված են 7 խմբերում, որոնք ներկայացնում են կազմակերպության արդյունավետությունը, ներքին շուկայում պայմանները և արտաքին շուկայի մրցունակությունը: Դիտարկվել են գործոնների հետևյալ խմբերը.

- աշխատանքի շուկա,
- կապիտալի շուկա և ֆինանսական համակարգ,
- հարկային և մաքսային քաղաքականություն,
- պետական հաստատություններ,
- սպրանքների մրցունակություն,
- ենթակառուցվածք,
- մուտք դեպի արտաքին շուկաներ:

Ներքին և արտաքին շուկաներում մրցունակության բարձրացմանը խոչընդոտող գործոնների վերաբերյալ տեղեկատվության ամփոփումը ներկայացված է գծապատկեր 3.16-ում, որտեղ AHP մեթոդով կազմված աստիճանակարգում համապատասխան գույներով նշվել են 3-րդ և 4-րդ մակարդակի գործոնները: Կանաչով նշված են այն գործոնները, որոնք, ըստ հարցմանը մասնակցած կազմակերպությունների, ներկա պահին չեն դիտարկվում որպես մրցունակությանը խոչընդոտող գործոններ, դեղինով նշվածները մասնակի են խոչընդոտում, իսկ կարմիրով նշվածները զգալիորեն խոչընդոտում են կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը:



Գծապատկեր 3.16

ԱԻՄ մեթոդի հիման վրա կառուցված արդյունաբերական կազմակերպությունների մրցունակության վրա ազդող գործոնների աստիճանակարգությունը

Մրցունակության վրա ազդող գործոնների կարևորությունը տարբեր տեսակի ընկերությունների համար

Հարցեր	Ըստ Կազմակերպության գործունեության տարիներ				Ըստ Կազմակերպության շրջանառության					Ըստ արտահանման կշիռների			Ըստ գործունեության ոլորտի			
	Մինչև 1 տարի	1-3 տարի	4-10 տարի	10 տարուց ավել	Մինչև 25 մլն ՀՀ դրամ	25-50 մլն ՀՀ դրամ	50-115 մլն ՀՀ դրամ	115-1 մլրդ ՀՀ դրամ	1 մլրդ-ից ավելի	10%-ից պակաս արտահ	10-90% արտահ անուժ	90%-ից ավելի արտահ	Սևնդամ թերցի արտադր	Հագուստի արտադր	Խմիչքների արտադր	Այլ ոլորտներ
Աշխատողների կրթությունը	1.0	2.9	3.1	2.4	2.3	3.4	2.5	2.9	2.0	2.3	3.3	3.5	2.5	2.6	3.3	2.8
Աշխատողների արտադրողականությունը	2.0	3.1	3.1	2.8	2.4	3.4	2.8	3.4	2.0	2.7	3.3	3.5	3.0	2.6	2.7	3.1
Ուղղակի հարկերի դրույքաչափերը	4.0	3.2	3.7	2.2	3.1	3.6	2.3	3.1	3.0	2.7	3.3	3.5	2.8	3.7	2.0	3.1
Անուղղակի հարկերի դրույքաչափերը	4.0	3.7	3.9	2.3	4.0	3.6	2.5	2.9	3.0	3.1	3.3	3.5	3.4	4.0	2.0	3.1
Հարկային վարչարարությունը	3.0	3.2	2.9	1.9	3.1	3.4	2.3	2.2	3.0	2.5	3.1	2.0	2.9	2.9	1.7	2.7
Մաքսային վարչարարությունը	3.0	3.1	2.6	2.0	2.7	3.4	2.5	2.2	3.0	2.5	2.6	2.0	3.3	2.2	1.7	2.4
Պետական վերահսկողությունը	2.0	2.5	3.8	2.1	2.3	3.0	3.0	2.7	2.0	2.6	2.4	3.0	2.9	2.3	1.7	2.8
Լիցենզիաների և թույլտվությունների ստացումը	2.0	2.8	2.4	2.4	2.4	3.2	2.5	2.3	3.0	2.4	2.8	2.0	2.8	2.2	2.3	2.5
Դատական համակարգը	1.0	2.3	2.1	1.8	1.8	3.0	2.2	1.7	2.0	2.0	1.8	2.5	2.4	1.2	1.7	2.1
Օրենսդրական դաշտը	2.0	2.4	2.1	2.0	2.6	2.8	1.7	1.8	3.0	2.1	2.2	2.5	2.6	2.3	2.0	1.9
Վարկերի տոկոսադրույքը	4.0	3.9	3.9	3.5	4.2	3.6	4.0	3.5	3.0	3.7	3.9	3.5	3.6	3.8	3.7	3.9
Վարկերի ստացման ու ավագանի թաղանթումները	4.0	3.9	4.2	4.0	4.3	3.6	4.3	3.9	3.0	3.8	4.4	4.0	3.8	4.5	4.3	3.9
Վարկերից բացի, ֆինանսավորման այլընտրանքի բացակայությունը	5.0	4.0	4.2	3.9	4.6	3.4	4.0	4.0	3.0	4.2	4.0	4.0	3.6	4.8	4.3	4.1
Ներպետական ճանապարհային ցանցը	2.0	3.2	3.3	3.7	2.6	3.4	2.7	4.3	3.0	3.1	3.4	4.0	4.1	3.0	2.3	3.2
Կոմունալ ծառայությունների անհասանելիությունը (էլ. էներգիա, ջուր, գազ և այլն)	1.0	2.6	2.3	2.8	1.6	3.6	2.7	2.7	2.0	2.0	3.1	2.5	3.1	2.0	1.3	2.5
Արտադրության ընդլայնման հնարավորությունները	1.0	3.0	3.3	2.1	2.7	4.0	2.5	2.4	2.0	2.8	2.6	2.0	2.8	2.2	2.7	2.9
Արտադրանքի որակը	1.0	3.0	1.9	1.9	1.6	3.7	2.8	2.3	1.0	1.7	2.6	2.0	3.0	1.5	1.7	2.4
Արտադրանքի հիվանդեցը	2.0	3.2	2.6	3.1	2.0	3.7	4.3	3.1	2.0	2.5	3.4	2.0	3.4	2.0	2.7	3.3
Փոխարժեքը	1.0	3.4	3.7	4.3	2.4	4.5	4.5	3.9	4.0	2.6	4.4	3.5	4.2	3.0	3.3	3.6
Միջպետական ճանապարհների ու բարձրը վիճակը	1.0	2.9	2.8	2.9	2.3	4.0	2.3	3.0	3.0	2.5	2.8	3.0	3.4	2.3	2.7	2.6
ՀՀ-ից դուրս ճանապարհների ասինափակ լինելը	3.0	2.8	3.3	4.1	2.5	4.0	4.0	3.7	3.0	3.1	3.7	3.0	3.8	3.0	2.3	3.6
Այլընտրանքային տրանսպորտի բացակայությունը (երկաթուղի, մատչելի ավիափոխադրումներ և այլն)	3.0	3.0	4.2	4.0	3.1	4.0	3.8	3.9	3.0	3.6	3.5	3.5	3.8	3.8	2.7	3.6
Արտասահմանյան շուկաներում մաքեթինգը	2.0	3.0	3.5	3.6	2.4	3.0	3.5	4.0	2.0	3.0	3.1	4.0	3.8	3.2	2.3	3.2
Արտաքին շուկաների ավագանի ասինափակումները	2.0	2.9	2.1	2.0	1.9	2.5	2.5	2.8	2.0	2.3	2.2	2.5	4.0	1.8	1.3	2.2
Արտաքին շուկաների ու ավագանի ասինափակումները	2.0	2.2	2.1	2.1	1.7	2.5	2.5	2.4	2.0	2.1	1.9	2.5	3.0	2.0	1.3	2.1
Արտաքին շուկաների վերաբերյալ անկա տեղեկատվության պակասը	3.0	2.3	3.4	3.4	2.6	2.5	3.8	3.2	3.0	2.9	2.7	4.0	3.0	3.3	2.7	2.9

Մրցունակության վրա ազդող գործոնների կարևորությունը ներդրումային տարբեր ռազմավարություն ունեցող կազմակերպությունների համար

Հարցեր	Ըստ հետազոտությունների ուղղությամբ ծախսերի			Նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ծախսերի			Սարքերի կազմակերպության ուղղությամբ ծախսերի			Աշխատողների վերապատրաստումների ուղղությամբ ծախսերի		
	0	1-ից 10	11-ից ավելի	0	1-ից 10	11-ից ավելի	0	1-ից 10	11-ից ավելի	0	1-ից 10	11-ից ավելի
Աշխատողների կրթությունը	2.6	2.5	3.7	2.0	3.0	2.7	2.0	2.8	2.7	2.4	2.6	3.4
Աշխատողների արտադրողականությունը	2.8	2.8	3.7	3.2	3.2	2.7	2.7	2.8	3.1	2.6	2.9	3.7
Ուղղակի հարկերի դրույթաչափերը	2.4	2.9	4.5	2.5	3.3	3.0	2.0	2.8	3.5	2.8	2.8	4.1
Անուղղակի հարկերի դրույթաչափերը	3.1	3.0	4.5	2.6	3.5	3.3	2.5	2.9	3.7	3.6	2.8	4.4
Հարկային վարչարարությունը	2.4	2.4	4.2	2.3	3.0	2.6	1.3	2.3	3.4	2.7	2.4	3.6
Մաքսային վարչարարությունը	2.4	2.4	3.5	2.8	2.8	2.4	1.5	2.2	3.1	2.8	2.4	3.0
Պետական վերահսկողությունը	2.3	2.7	3.2	2.3	2.8	2.7	2.3	2.8	2.6	2.9	2.4	3.0
Լիցենզիաների, և թույլտվությունների ստացումը	2.4	2.4	3.2	2.4	2.4	2.6	2.0	2.4	2.7	2.8	2.3	3.0
Դատական համակարգը	2.3	1.7	2.4	2.0	2.5	1.6	1.5	2.4	1.7	2.6	1.9	1.7
Օրենսդրական դաշտը	2.1	2.1	2.8	1.6	2.2	2.4	1.5	2.2	2.3	2.6	1.9	2.5
Վարկերի տոկոսադրույքը	3.7	3.6	4.3	4.3	3.8	3.6	3.7	3.5	4.1	3.7	3.6	4.4
Վարկերի ստացման ոչ սակագնային բարդությունները	4.0	3.9	4.3	4.3	3.8	4.1	3.7	4.0	4.1	3.9	4.0	4.4
Վարկերից բացի, ֆինանսավորման այլընտրանքի բացակայությունը	3.8	4.2	4.3	3.5	4.1	4.3	4.7	3.8	4.3	3.8	4.1	4.6
Ներպետական ճանապարհային ցանցը	3.4	3.3	3.2	3.3	3.6	3.1	2.3	3.5	3.3	3.3	3.2	3.5
Կոմունալ ծառայությունների անհասանելիությունը (էլեկտրիկա, ջուր, գազ և այլն)	2.5	2.2	3.6	2.7	2.6	2.4	2.0	2.4	2.7	2.7	2.3	3.0
Արտադրության ընդլայնման հնարավորությունները	1.8	2.5	3.8	2.0	2.8	2.9	2.0	2.7	2.7	2.5	2.2	3.9
Արտադրանքի որակը	1.4	2.1	3.2	2.2	2.3	2.2	2.0	2.2	2.3	2.3	2.1	2.6
Արտադրանքի ինքնաթեքը	2.4	3.0	3.2	3.8	2.9	2.6	2.0	3.0	2.9	2.5	3.1	2.9
Փոխարժեքը	3.6	3.3	4.3	4.2	2.6	3.8	4.0	3.3	3.7	3.3	3.3	4.4
Միջպետական ճանապարհների ոչ բարվոք վիճակը	2.0	2.9	3.0	3.2	2.3	2.8	3.0	2.6	2.8	2.3	2.7	3.2
ՀՀ-ից դուրս ճանապարհների սահմանափակ լինելը	3.0	3.4	3.5	4.6	2.9	3.1	3.0	2.8	3.8	2.0	3.5	3.8
Այլընտրանքային տրանսպորտի բացակայությունը (երկաթուղի, մատչելի ավիափոխադրումներ և այլն)	3.4	3.7	3.3	4.2	3.1	3.6	4.0	3.5	3.6	3.5	3.6	3.6
Արտասահմանյան շուկաներում մարքեթինգը	2.6	3.5	3.0	3.6	3.0	3.2	5.0	3.2	3.1	3.5	3.1	3.2
Արտաքին շուկաների սակագնային սահմանափակումները	1.2	2.6	2.8	2.8	2.3	2.2	2.0	2.1	2.6	2.3	2.3	2.7
Արտաքին շուկաների ոչ սակագնային սահմանափակումները	1.2	2.5	2.0	2.8	2.1	1.9	2.0	2.1	2.2	2.3	2.2	2.0
Արտաքին շուկաների վերաբերյալ առկա տեղեկատվության պակասը	2.6	3.1	3.0	3.2	3.0	2.9	5.0	2.9	2.9	3.5	2.9	2.8

Արդյունաբերական կազմակերպությունների մրցունակության վերլուծության ցուցանիշները, հիմնված հարցման արդյունքների և AHP մոտեցման վրա, ցույց են տալիս, որ կապիտալի շուկան, ֆինանսական համակարգը և հարկային դրույքաչափերը մրցունակության վրա բացասաբար ազդող ամենակարևոր գործոններն են: Ընդ որում, հարցմանը մասնակցած ընկերությունները կարծում են, որ ինչպես բարձր տոկոսադրույքները, այնպես էլ վարկերի ոչ սակագնային պայմանները էական խոչընդոտ են մրցունակության աճի համար՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում: Հարցված ընկերությունները բարձր հարկային դրույքաչափերը (ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկերի դրույքաչափերը) մրցունակության վրա ավելի մեծ բացասական ազդեցություն ունեցող գործոն են համարում, քան հարկային և մաքսային վարչարարությունը:

Պետական կառավարման մարմինների գործունեությունը մրցունակության վրա էական բացասական ազդեցություն չի թողնում, որի մասին է վկայում այն փաստը, որ ընկերությունները Հայաստանում օրենսդրության և իրավական համակարգերում լուրջ խնդիրներ չեն տեսնում: Սակայն պետական թույլ վերահսկողությունը, գործունեության լիցենզիաների և այլ թույլտվությունների ստացման անարդյունավետ գործընթացը չափավոր բացասական ազդեցություն են ունենում մրցունակության վրա: Մրցունակության բարձրացման գործում այլ նշանակալի դժվարություններ են ներքին, ինչպես նաև Հայաստանից դուրս ճանապարհների ցածր որակը կամ դրանց բացակայությունը, ինչպես նաև արտաքին շուկաների մասին տեղեկատվության պակասը:

Արտադրողների կարծիքով՝ իրենց արտադրանքն ունի բավարար որակ, որպեսզի մրցունակ լինի նաև արտաքին շուկաներում, սակայն արտադրության ինքնարժեքը բարձր է, իսկ ընդլայնման հնարավորությունները՝ սահմանափակ:

Գործոնների կարևորությունը ոչ միատեսակ բնութագրեր ունեցող ընկերությունների համար, մրցունակության առումով, տարբեր է (աղյուսակ 3.5 և աղյուսակ 3.6): Օրինակ, 10 տարի և ավելի գործունեություն ծավալող, ինչպես նաև խմիչքների արտադրության ոլորտում աշխատող ընկերությունների համար հարկային դրույքաչափերն էական խնդիր չեն: Փոխարժեքի տատանումների ազդեցությունը ընկերությունների գործունեության տեսանկյունից գերազանահատված է դիտարկվում հիմնականում այն ընկերությունների համար, որոնք աշխատում են ավելի քան 3 տարի: Ընդ որում, որքան երկար են գործում ընկերությունները, այնքան խիստ է ընկալվում գերազանահատումը: Նմանօրինակ օրինաչափություն առկա է նաև ներքին ճանապարհային ցանցի վերաբերյալ պատասխաններում. որքան ընկերությունները երկար են աշխատում, այնքան շատ խնդիրներ են տեսնում ճանապարհային համակարգում, մինչդեռ, նորաբաց ընկերությունների համար դա չի համարվում մրցունակության խոչընդոտ:

Մյուս կողմից, բարձր տոկոսադրույքները և վարկերի գծով ոչ սակագնային միջոցառումները, ինչպես նաև այլընտրանքային ֆինանսավորման գործիքների բացակայությունը կարևոր խնդիրներ են բոլոր ընկերությունների համար: Նույնը կարելի է ասել նաև Հայաստանից դուրս տրանսպորտային այլընտրանքային ուղիների բացակայության, ճանապարհների վատ վիճակի մասին: Գրեթե բոլոր ընկերությունների համար նշանակալի խնդիր է արտաքին շուկաներում մարքեթինգի իրականացումը և արտաքին շուկաների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացումը:

Վերջին տարիներին ՀՀ մշակող արդյունաբերության ոլորտում արձանագրված առաջընթացը դեռևս մասշտաբային որակական փոփոխությունների չի հանգեցրել: Մասնավորապես, ՀՀ մշակող արդյունաբերության մրցունակության բարձրացման առումով լուրջ տեղաշարժեր չեն գրանցվել: Մշակող արդյունաբերության ստեղծած արդյունքի մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրությունների արդյունքի մասնաբաժինը, ինչպես նաև մշակող արդյունաբերության արտադրանքի ընդհանուր արտահանման մեջ միջին և բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման մասնաբաժինը մնում են նկատելիորեն ցածր և՛ համաշխարհային միջինից, և՛ ԵԱՏՄ երկրների միջինից:

ՀՀ ՀՆԱ-ի արտադրության ներուժն առավելապես ձևավորում է ընդհանուր գործունային արտադրողականություն: ՀՀ ՀՆԱ-ի արտադրության արդյունավետության փոփոխության տեմպը վերջին 20 տարիների ընթացքում միջինում ավելի բարձր է, քան համաշխարհային միջինը: Ըստ սույն ցուցանիշի՝ միջին դիրքում է գտնվում նաև ԵԱՏՄ անդամ և համադրելի այլ երկրների շրջանակներում: Ընդ որում, երկրի ընդհանուր գործունային արտադրողականության փոփոխությունը մեծապես պայմանավորված է բուն արտադրական գործընթացի արդյունավետությամբ, որի աճին խոչընդոտում է մասշտաբից արդյունավետության փոփոխության գրեթե անփոփոխ՝ ստատիկ բնույթը: Ցածր է նաև տեխնոլոգիական արդյունավետության փոփոխության տեմպը:

Արտահանման ծավալների շարժընթացի վրա մակրոտնտեսական գործոնները՝ ՀՀ արդյունաբերության իրական աճը, գործընկեր երկրներում տնտեսական աճի և իրական փոխարժեքի փոփոխությունը, մեծ ազդեցություն ունեն: Մակրոտնտեսական գործոնների շարքում արտահանման ծավալների վրա առավել նշանակալի և երկարատև ազդեցություն է ունենում առաջարկի գործոնը՝ ՀՀ արդյունաբերական արտադրանքի աճը: Իսկ պահանջարկը և փոխարժեքը, թեև նույնպես նշանակալի են, սակայն ավելի կարճատև է վերջիններիս ազդեցությունը: Գործընկեր երկրների տնտեսական աճի՝ ՀՀ արտահանման վրա ազդեցության մեծ գործակիցը պայմանավորված է գործընկեր երկրների տնտեսությունների խոշոր չափերով:

Վերոնշյալ ազդեցությունները պահպանվում են նաև մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա, որի նկատմամբ, սակայն, արտաքին պահանջարկի ազդեցության գործակիցը թույլ է: Մշակող արդյունաբերության արտահանման ծավալների վրա նշանակալի ազդեցություն է ունենում ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ փոխարժեքի փոփոխությունը:

Հայկական մի շարք ապրանքների գծով ձևավորված արտահանման վերջնական գները մրցունակ են ոչ միայն ռուսական շուկայի միջին գների

համեմատ, այլև դիտարկվող գրեթե բոլոր խոշոր քաղաքներում: Այդ ապրանքախմբերն են՝ կարագ, պանիր, ջեմ, մուրաբա, հրուշակեղեն, կարտոֆիլ, լոլիկ, վարունգ, բանջարեղեն (սառեցրած), սեղանի գինի, գարեջուր: Ռուսական շուկայում գնային մրցունակության առումով խիստ շահեկան դիրքում են հայկական միրգը, բանջարեղենը, մուրաբաները, որոնց վաճառքի գները ոչ թե տոկոսներով, այլ անգամներով ցածր են ռուսական շուկայում այլ վաճառողների համանման ապրանքներից: Եթե հաշվի առնենք նաև ՀՀ այդ ապրանքների որակական հատկանիշները, ապա ակնհայտ է, որ դրանց արտահանման ավելացման հարցում մեծ ներուժ է առկա:

Հարցման արդյունքների, ինչպես նաև արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշների վրա ազդեցություն ունեցող մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատումների հիման վրա մշակվել են արդյունաբերական կազմակերպությունների մրցունակության բարձրացմանն ուղղված հետևյալ առաջարկությունները:

Արտաքին շուկաների հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝

- արտաքին շուկաներին հասանելիության այլընտրանքային միջոց կարող է դառնալ էլեկտրոնային առևտուրը: Օրինակ, Amazon և ebay հարթակներում վաճառքներ իրականացնելու հսկայական ներուժ է առկա ՀՀ տնտեսությունում (ձեռագործ իրերի, հագուստի, կոշիկի և այլ իրերի վաճառք): Իրա համար անհրաժեշտ է.

- ՀՀ ռեզիդենտների համար PayPal և Amazon Pay ու նմանատիպ այլ վճարային համակարգերի ամբողջ գործիքակազմի հասանելիության ապահովում,
- այդ հարթակներում վաճառքի համապատասխան ծավալների ապահովման համար ՀՀ-ում միատեսակ արտադրանք արտադրողների ջանքերի համակարգում, պահեստների ստեղծում և խոշորածավալ արտադրությունների կազմակերպում,
- ԱՄՆ և եվրոպական շուկաներում բրենդի և ապրանքանիշի գրանցմանն աջակցություն,
- փոստային ծառայությունների բարելավում, մասնավորապես՝ ՀՀ-ից փաթեթների առաքման ծառայության ինքնարժեքի նվազեցում:

Ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի, ինչպես նաև այլընտրանքային ֆինանսավորման հնարավորությունների բարելավմանն ուղղված առաջարկություններ՝

- նոր և հեռանկարային ծրագրերի ֆինանսավորման արդյունավետ հարթակի ստեղծում, ինչը հնարավորություն կտա միջազգային լավագույն փորձի հիման վրա ընտրելու և ֆինանսավորելու նոր ծրագրեր և նպաստելու կազմակերպությունների ընդլայնմանը,
- նպատակահարմար է ստեղծել միջոցների հավաքագրման հարթակներ, որտեղ ներդրողները կլինեն հիմնականում մասնավոր հատ-

վածի ներկայացուցիչները, իսկ պետության դերը կլինի հարթակի գործունեության ապահովումը,

- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների, մասնավորապես՝ բլոկչեյն տեխնոլոգիայի հիման վրա (օրինակ՝ ICO, NFT) ֆինանսական միջոցների ներգրավման հասանելիության բարձրացում:

Նորարարությունների և նորագույն տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված միջոցառումներ՝

- նորագույն տեխնոլոգիաների կիրառման և ներդրման հնարավորությունների, դրանց տեղայնացման հստակ բիզնես ծրագրերի մշակման վերաբերյալ **սեմինարների կազմակերպում գործարարների համար՝ առանձին ոլորտների** միջազգային մասնագետների մասնակցությամբ,
- **բիզնեսի արդյունավետության գնահատման համակարգի ներդրում**, որը հնարավորություն կտա գործարարներին՝ գնահատելու իրենց արդյունավետությունը ոլորտի այլ կազմակերպությունների (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում) համեմատ և միջոցներ ձեռնարկելու դրա բարելավման ուղղությամբ,
- հաշվի առնելով վերջին տարիներին միջին չափի կազմակերպությունների կողմից ստեղծված արդյունքի աճը՝ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել՝ փոքր կազմակերպություններին աջակցելու և **փոքրից միջինի վերածվելու ընթացքը դյուրինացնելու նպատակով:**

Բարձր որակավորում ունեցող աշխատողների քանակի ավելացմանն ուղղված միջոցառումներ՝

- մշակող արդյունաբերության ոլորտի համար անհրաժեշտ մասնագիտությունների պահանջարկի բացահայտում, դրա բավարարմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- **արդյունաբերության ոլորտում փորձնակների աշխատանքի խրախուսում** (անհրաժեշտության դեպքում՝ աշխատավարձի պետական ֆինանսավորմամբ),
- մշակող արդյունաբերության ոլորտի նորագույն պահանջներին համապատասխանության տեսանկյունից **կրթական ծրագրերի վերանայում՝** սկսած դպրոցական ծրագրերից մինչև բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրեր,
- դպրոցներում **ձեռնարկատիրության հիմունքների ուսուցանում և ձեռնարկատիրական** մտածողության զարգացում,
- **մշակող արդյունաբերության ոլորտի աշխատակիցների համար պրակտիկ սեմինարների և դասընթացների կազմակերպում՝** ոլորտի միջազգային փորձագետների ներգրավմամբ:

Մշակող արդյունաբերության ոլորտի հնարավորությունների և ձեռքբերումների ցուցադրում՝

- ՀՀ-ում գործող բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ արդյունաբերական կազմակերպությունների և դրանց **արտադրանքի ներկայացում** ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում,
- ՀՀ արդյունաբերության **հնարավորությունների և հնարավոր ներդրման ուղիների բացահայտում և ներկայացում ներդրողներին,**
- զարգացող, նորարար տեխնոլոգիաներ կիրառող կազմակերպությունների վերաբերյալ **ցուցադրություններ և քննարկումների կազմակերպում ուսանողների համար՝** մատնանշելով աշխատանքի և կարիերայի առկա հնարավորությունները:

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին,
https://www.armstat.am/file/article/sv_12_07a_121.pdf:
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին,
https://www.armstat.am/file/article/sv_12_19a_121.pdf:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին,
https://www.armstat.am/file/article/sv_12_20a_121.pdf:
4. ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2013 թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրաման:
5. ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2007-2020 թթ.:
6. «Լոյս» հիմնադրամ, Միջազգային կառույցների կողմից հրատարակված ցուցանիշների ուսումնասիրություն, Գլոբալ մրցունակություն, 2018,
7. <https://www.luys.am/img/artpic/small/0300bc66605994700370%D4%B3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%B4%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B6%D5%A4%D5%A5%D6%84%D5%BD2018PDF.pdf>:
8. Մխիթարյան Լ. Կ., Իրական փոխարժեքը և ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքի փոփոխությունները, «Բանբեր ՀՊՏՀ», թիվ 3(39), «Տնտեսագետ» հրատարակչություն, Եր., 2015:
9. Վարդանյան Ք. Ջ., Ավագյան Գ. Ա., ՀՀ վճարային հաշվեկշռի վերլուծությունը և դրա վրա իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցության գնահատումը, «Բանբեր ՀՊՏՀ», «Տնտեսագետ» հրատարակչություն, 2012, Եր., N 4 (28):
10. Мокронос А. Г., Конкуренция и конкурентоспособность: учебное пособие / Мокронос А. Г., Маврина И. Н. – Екатеринбург: Изд-во Урал ун-та, 2014, 194 с.
https://elar.urfu.ru/bitstream/10995/28814/1/978-5-7996-1098-2_2014.pdf.
11. Захаров А. Н., Зокин А. А., Конкуренентоспособность предприятия: сущность, методы оценки и механизмы увеличения,
https://logistics.ru/scm/9/2/i20_64.htm.
12. Смит А., Исследование о природе и причинах богатства народов, М., 1962.
13. Мионов В., Индекс конкурентоспособности ЮНИДО и болезни российской экономики <https://issek.hse.ru/press/97147261.html>.
14. Кулешова И. Б., Конкуренентоспособность и инновации,
<https://cyberleninka.ru/article/n/konkurentosposobnost-i-innovatsii/viewer>.
15. Конкуренентоспособность компании по ценам и издержкам,
<https://economv-web.org/?p=129>.
16. Клинова М. В., Государство и национальная конкурентоспособность (на примере ЕС) // Вопросы экономики. 2020. № 8.
17. Организация объединенных наций по промышленному развитию, ежегодный доклад ЮНИДО 2019 год, 2020,
<https://www.unido.org/sites/default/files/files/2020-05/Annual%20Report%-202019%20%28RUS%29.pdf>.

18. Российский Гуманитарным Научный Фонд, Оценка влияния санкций на экономику РФ: Карточка проекта, 2015.
19. Matiy A. K., Matundura E., Analysis of Macroeconomic Factors Affecting the Performance of Manufactured Exports in Kenya, *The International Journal of Business & Management*, Vol 7 Issue 9, 2019.
20. Camanho A. S., Dyson R. G., Data Envelopment Analysis and Malmquist Indices for Measuring Group Performance, *Journal of Productivity Analysis*: 26: 35–49, 2006.
21. Sajee Sirikrai B., John Tang C.S., Industrial competitiveness analysis: Using the analytic hierarchy process, *Journal of High Technology Management Research* 17 (2006) 71–83, 2006.
22. Cornwell Ch., Schmidt P. , Stochastic Frontier Analysis and Efficiency Estimation, *The Econometrics of Panel Data*, 2008, <https://www.researchgate.net/publication/226451530>.
23. Cho D. S., Moon H. C., From Adam Smith to Michael Porter. Evolution to Competitiveness Theory, *World Scientific, Asia Pacific Business Series*, Vol. 2, Singapore 2000.
24. Competitiveness at the Crossroads: Choosing the Future Direction of the Russian, Economy By Michael E. Porter and Christian Ketels, with Mercedes Delgado and Richard Bryden. URL, http://www.csr.ru/upload/editor_files/file0029.pdf.
25. Hawdon D., Efficiency, performance and regulation of the international gas industry - a bootstrap DEA approach. *Energy Policy*: 31/11, 2003, https://scholar.google.com/scholar?hl=ru&as_sdt=0%2C5&q=D.+Hawdon%2C+Efficiency%2C+performance+and+regulation+of+the+international+gas+industry+-+a+bootstrap+DEA+approach.+Energy+Policy, [https://doi.org/10.1016/s0301-4215\(02\)00218-5](https://doi.org/10.1016/s0301-4215(02)00218-5) .
26. Aigner D. J., Lovell C. A. K., Schmidt P., Formulation and Estimation of Stochastic Frontier Production Function Models, *Journal of Econometrics*, 6, 1977.
27. Miljkovic D., Shaik S., The Impact of Trade Openness on Technical Efficiency in U.S. Agriculture *Agribusiness & Applied Economics Report*: No. 660, 2010 Department of Agribusiness and Applied Economics, Agricultural Experiment Station, North Dakota State University, Fargo, ND 58108-6050.
28. Caves D. W., Christensen L. R., Diewert W. E., The economic theory of index, input, output and productivity, *Econometrica*: 50/6, 1982, https://scholar.google.com/scholar?hl=ru&as_sdt=0%2C5&q=++D.+W.+Caves%2C+L.+R.+Christensen%2C+E.+W.+Diewert%2C+The+economic+theory+of+index+number+and+the+measurement+of+input%2C+output%2C+and+productivity , <https://doi.org/10.2307/1913388>.
29. Fairbanks, Michael, *Changing a Mind of a Nation: Elements in a Process for Creating Prosperity*, Culture Matters: How Values Shape Human Progress, New York: Basic Books, 2000.
30. Dai F., Liu G., R&D efficiency and productivity growth: A Malmquist index analysis of High-Tech industries in China. In: *International Conference on Management Science and Engineering*, 2009, <https://doi.org/10.1109/icmse.2009.5317726>.

31. Battese G. E., Coelli T. J., Frontier Production Functions, Technical Efficiency and Panel Data: With Application to Paddy Farmers in India, *Journal of Productivity Analysis*: 3, 1992.
32. Fuente-Mella H., Vallina-Hernandez A. M., Fuentes-Solis R., Stochastic analysis of the economic growth of OECD countries, *Economic Research-Ekonomika Istraživanja*: 33/1, 2019, <https://doi.org/10.1080/1331677X.2019.1685397>.
33. Djokoto J. G., Technical Efficiency of Agriculture in Ghana: A Time Series Stochastic Frontier Estimation Approach, *Journal of Agricultural Science*, Vol. 4, No. 1, 2012, <http://dx.doi.org/10.5539/ias.v4n1p154>.
34. Lee J. Y., Global Trends of Productivity Growth: Evidence from the Malmquist Index, *Journal of International Economic Studies*: 12/1, 2008.
35. Melecky L., Stanickova M., National Efficiency Evaluation of Visegrad Countries in Comparison with Austria and Germany by Selected DEA Models. In: *International Conference on Mathematical Methods in Economics*, 2012, https://scholar.google.com/scholar?hl=ru&as_sdt=0%2C5&q=L.+Melecky%2C+M.+Stanickova%2C+National+Efficiency+Evaluation+of+Visegrad+Countries+in+Comparison+with+Austria+and+Germany+by+Selected+DEA+Models.+In%3A+International+Conference+on+Mathematical+Methods+in+Economics, <http://doi.org/10.7441/ioc.2012.03.05>.
36. Fugazza M., Export Performance and its Determinants: Supply and Demand Constraints, Policy Issues in International Trade and Commodities, Study Series No. 26, UNCTAD/ITCD/TAB/27, 2004.
37. Moonhyang Oh, Seongseop Kim & Aejoon Lee, Development of an Evaluation Scale for Inter-Country Tourism Industry Competitiveness using the Delphi Technique and Analytic Hierarchy Process, *International Journal of Tourism Sciences*, 13:2, 1-32, 2013, DOI: 10.1080/15980634.2013.11434671.
38. Porter M., *On Competition*, The Harvard Business Review Book Series, Boston, United States, 1998.
39. Porter M., *The Competitive Advantage of Nations*, New York, The Free Press, 1990, *Competitiveness at the Crossroads: Choosing the Future Direction of the Russian Economy* By Michael.
40. Anand R., Perrelli R., Zhang B., South Africa's Exports Performance: Any Role for Structural Factors?, IMF Working Paper, WP/16/24, 2016.
41. Fare R., Grosskopf S., Norris M., et al., Productivity growth, technical progress and efficiency change in industrialized countries, *Am Econ Rev*: 84/1, 1994,
42. Kumbhakar S. C., Lovell C. A. K., *Stochastic Frontier Analysis*. New York, NY: Cambridge University Press, 2000.
43. Park S., Evaluating the efficiency and productivity change within government subsidy recipients of a national technology innovation research and development program. *R&D Management*: 45/5, 2015, <https://doi.org/10.1111/radm.12097>.
44. Redding S., Venables A., Geography and Export Performance: External Market Access and Internal Supply Capacity, NBER Working Paper 9637, 2003.
45. Sharma S., Thomas V., Inter-country R&D efficiency analysis: An application of data envelopment analysis. *Scientometrics*: 76/3, 2008, <https://doi.org/10.1007/s11192-007-1896-4>.

46. Supper E., Is There Effectively a Level Playing Field for Developing Country Exports?, Policy Issues in International Trade and Commodities, Study Series No. 1, 2001, UNCTAD/ITCD/TAB/2, https://unctad.org/system/files/official-document/itcdtab2_en.pdf.
47. Sumiyati E.E., Factors Affecting Manufacturing Exports, Journal of Economics, Business, and Accountancy Ventura, Vol. 23, No. 2, August – November 2020, 2020.
48. The Global Competitiveness Report 2019, Klaus Schwab, World Economic Forum, http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf.
49. The International Standard Industrial Classification of All Economic Activities (ISIC), Rev.4, Statistical Papers, Series M No. 4/Rev.4, United Nations, New York, 2008, <https://unstats.un.org/unsd/publications/catalogue?selectID=396>.
50. Diewert W. E., The early history of price index research, NBER working paper series: 2713, 1988, https://www.nber.org/system/files/working_papers/w2713/w2713.pdf.
51. W. CH. Lu, T. K. Liu, Malmquist indices of R&D productivity growth in taiwanese ic-design industry. Global journal of business research: 4/1, 2010.
52. Greene W. H., Fixed and Random Effects in Stochastic Frontier Models. Journal of Productivity Analysis: 23/1, 2004, <http://dx.doi.org/10.1007/s1123-004-8545-1>.
53. Meeusen W., J. van den Broeck, Efficiency Estimation from Cobb- Douglas Production Functions With Composed Error, International Economic Review: 18, 1977.
54. Fariborz Partovi Y., Determining What to Benchmark: An Analytic Hierarchy Process Approach, International Journal of Operations & Production Management, Vol. 14 Iss 6, 1994.
55. <https://www.armstat.am>
56. <https://www.cba.am>
57. <https://petekamutner.am>
58. <https://customs.gov.ru>
59. <https://data.worldbank.org>
60. <https://ilostat.ilo.org>
61. <https://economics.uq.edu.au>
62. <https://www.stata.com>
63. <https://www.belvpo.com>
64. <https://stat.unido.org>
65. <https://mineconomy.gov.uz>
66. <https://review.uz>
67. <https://issek.hse.ru>
68. <https://www.iksmedia.ru>
69. <https://www.unido.org>
70. <https://dic.academic.ru>
71. <https://studbooks.net>
72. <https://gtmarket.ru/>
73. <https://kpfu.ru>
74. <https://business-planner.ru>
75. <http://www.cdi.org.pe>
76. <https://www.belstat.gov.by>

77. <http://www3.weforum.org>
78. <https://librarvno.ru>
79. <https://www.belvpo.com>
80. <https://ruxpert.ru>

ՀՀ մրցունակության դիրքը՝ ըստ 12 հենասյունների, 2011-2017 թթ.¹⁰²

Ը/Ը	Հենասյուն	Դիրք	Դիրք	Դիրք	Դիրք	Դիրք	Դիրք	Դիրք
		2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.
1.	Ինստիտուտներ	83	71	65	72	76	66	55
2.	Ենթակառուցվածքներ	77	80	80	78	82	82	80
3.	Մակրոտնտեսական կայունություն	114	83	64	77	72	88	101
4.	Առողջապահություն և տարրական կրթություն	94	80	85	99	95	93	55
5.	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	76	70	77	75	72	71	69
6.	Ապրանքների շուկայի արդյունավետություն	108	72	58	64	50	45	35
7.	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	34	30	50	74	58	55	51
8.	Ֆինանսական շուկայի կատարելագործվածություն	95	78	76	97	94	90	78
9.	Տեխնոլոգիական պատրաստվածություն	88	92	72	71	75	71	77
10.	Շուկայի չափ	115	115	117	118	116	120	115
11.	Գործարարության կատարելագործվածություն	107	92	87	93	97	81	68
12.	Նորարարություն	112	105	103	104	107	87	70

¹⁰² http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf
http://www3.weforum.org/docs/gcr/2015-2016/Global_Competitiveness_Report_2015-2016.pdf
http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2014-15.pdf
http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf
http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2012-13.pdf
http://www3.weforum.org/docs/WEF_GCR_Report_2011-12.pdf
http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2010-11.pdf

Հավելված 2

ՀՀ մրցունակության դիրքը՝ ըստ 12 հենասյուների, 2018-2019 թթ.¹⁰³

Հ/Հ	Հենասյուն	Գիրք	Գիրք	Միավորը
		2018 թ.	2019 թ.	Առավելագույն 100-ից
1.	Ինստիտուտներ	67	62	56.2
2.	Ենթակառուցվածքներ	74	60	69.4
3.	ՏՀՏ ընդունում	56	59	62.0
4.	Մակրոտնտեսական կայունություն	89	64	75.0
5.	Առողջություն	61	68	80.7
6.	Հմտություններ	55	61	66.8
7.	Ապրանքների շուկա	39	44	59.1
8.	Աշխատանքի շուկա	33	32	66.4
9.	Ֆինանսական համակարգ	87	69	60.2
10.	Շուկայի չափ	118	118	37.5
11.	Գործարար ակտիվություն	62	57	62.5
12.	Նորարարական կարողություն	60	62	39.4

Հավելված 3

Արդյունաբերության մրցունակության համաթվի ցուցանիշները¹⁰⁴

	Արդյունաբերության մրցունակության համաթիվ	Վարկիչ	Քանչուր 1 շնչի հաշվով վերջին տրիմեստրում արժեքի աճը	ՀՆԱ-ի մեջ մշակող արդյունաբերության և սնունդի ոլորտների մասնաբաժնի համարիչ	Մշակող արդյունաբերության արժեքի մեջ վերջին և բարձր արդյունաբերության ոլորտների մասնաբաժնի համարիչ
2005	0,013	105	0,017	0,259	0,044
2006	0,012	108	0,016	0,230	0,043
2007	0,011	114	0,016	0,241	0,042
2008	0,011	114	0,016	0,227	0,042
2009	0,010	117	0,017	0,240	0,050
2010	0,010	115	0,018	0,260	0,050
2011	0,010	117	0,019	0,287	0,050
2012	0,011	114	0,020	0,287	0,050
2013	0,011	109	0,021	0,312	0,050

¹⁰³ Տե՛ս The Global Competitiveness Report 2019, World Economic Forum, http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf
http://www.cdi.org.pe/pdf/IGC/2018/The_Global_Competitiveness_Report_2018.pdf
<http://www3.weforum.org/docs/GCR2017-2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2017%E2%80%932018.pdf>

¹⁰⁴ Հաշվարկները կատարել են հեղինակները՝ <https://stat.unido.org/cip/#> կայքի տվյալների հիման վրա:

2014	0,011	108	0,022	0,311	0,050
2015	0,010	111	0,015	0,255	0,054
2016	0,012	106	0,015	0,284	0,056
2017	0,013	103	0,015	0,281	0,058
2018	0,0128	99	0,015	0,276	0,059

Հավելված 4

Երկրների զբաղեցրած հորիզոնականը՝ ըստ արդյունաբերության մրցունակության համաթվի (CIP-2020)¹⁰⁵

	2005	2010	2015	2016	2017	2018
<i>ԱՊՀ երկրներ</i>						
ՌԴ	34	34	33	33	33	32
Բելառուս	51	45	47	49	48	47
Ղազախստան	67	65	68	68	66	68
Ուկրաինա	54	57	71	71	70	69
ՀՀ	105	115	111	106	103	99
Մոլդովա	113	121	118	116	113	111
Ադրբեջան	95	108	108	115	119	120
Ղրղզստան	123	125	124	124	122	122
Տաջիկստան	122	130	132	129	127	129
<i>Այլ երկրներ</i>						
Գերմանիա	1	1	1	1	1	1
Չինաստան	16	5	2	2	2	2
Կորեայի Հանրապետություն	5	4	4	5	3	3
ԱՄՆ	3	3	3	3	4	4
Ճապոնիա	2	2	5	4	5	5
Իռլանդիա	8	13	7	6	6	6
Շվեյցարիա	4	6	6	7	7	7
Չինաստան-Թայվան	14	8	8	8	8	8
Սինգապուր	15	7	9	9	9	9
Նիդեռլանդներ	11	11	12	12	10	10
Իտալիա	6	9	11	10	11	11
Բելգիա	9	12	10	11	12	12
Ֆրանսիա	7	10	13	13	13	13
Ավստրիա	17	16	15	15	15	14

¹⁰⁵ Страны Мировой рейтинг стран по индексу конкурентоспособности промышленности (CIP), Читать полностью: <https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/realny-sector-ekonomiki/promyshlennost/mezhstranovve-sopostavleniya/>
<https://www.belstat.gov.by/ofitsialnaya-statistika/realny-sector-ekonomiki/promyshlennost/mezhstranovve-sopostavleniya/>

Հավելված 5

Գծային բազմաչափ ռեգրեսիայի մոդելների հիմնական արդյունքները և դրակի ստուգման թեստերը

1. Ընդհանուր արտահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելը


Աղյուսակ 1

Գնահատման արդյունքները

Dependent Variable: DL_EXPORT
 Method: Least Squares
 Date: 08/08/21 Time: 15:54
 Sample (adjusted): 2007Q3 2021Q1
 Included observations: 55 after adjustments

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
DL_IND_R_TOT	0.978020	0.256550	3.812204	0.0004
DL_REER(-1)	-1.276640	0.324847	-3.929972	0.0003
DL_FD	5.251219	1.173175	4.476074	0.0000
DL_EXPORT(-1)	-0.320182	0.105893	-3.023630	0.0039

R-squared	0.534317	Mean dependent var	1.427538
Adjusted R-squared	0.506924	S.D. dependent var	10.27381
S.E. of regression	7.214207	Akaike info criterion	6.859928
Sum squared resid	2654.284	Schwarz criterion	7.005916
Log likelihood	-184.6480	Hannan-Quinn criter.	6.916383
Durbin-Watson stat	2.076304		



Գծապատկեր 1

Մոդելի մնացորդը, գնահատված և փաստացի շարքերը

Date: 08/09/21 Time: 00:58
 Sample: 2000Q1 2021Q4
 Included observations: 55
 Q-statistic probabilities adjusted for 1 dynamic regressor

Autocorrelation	Partial Correlation		AC	PAC	Q-Stat	Prob*
. .	. .	1	-0.057	-0.057	0.1864	0.666
. * .	. * .	2	0.087	0.084	0.6369	0.727
. * .	. * .	3	0.120	0.131	1.5043	0.681
* .	* .	4	-0.117	-0.113	2.3410	0.673
** .	** .	5	-0.226	-0.271	5.5307	0.355
. .	. .	6	-0.030	-0.061	5.5886	0.471
* .	. .	7	-0.126	-0.053	6.6216	0.469
* .	* .	8	-0.153	-0.119	8.1810	0.416
* .	** .	9	-0.138	-0.216	9.4777	0.394
. * .	. .	10	0.079	0.028	9.9127	0.448
. .	. * .	11	0.051	0.106	10.096	0.522
. .	. .	12	-0.011	-0.062	10.105	0.607
. .	* .	13	0.047	-0.142	10.269	0.672
. * .	. .	14	0.129	0.042	11.541	0.643
* .	. .	15	-0.082	-0.026	12.064	0.674
. .	. .	16	0.034	-0.034	12.154	0.733
. .	. .	17	0.054	-0.033	12.397	0.776
. .	. .	18	-0.056	-0.023	12.662	0.811
* .	* .	19	-0.151	-0.128	14.640	0.745
. * .	. .	20	0.084	0.029	15.273	0.761
* .	. .	21	-0.087	-0.061	15.972	0.771
. .	. .	22	0.003	0.012	15.973	0.817
. .	. .	23	0.065	0.030	16.393	0.838
. * .	. * .	24	0.107	0.074	17.553	0.824

*Probabilities may not be valid for this equation specification.


2. Մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը

Գնահատման արդյունքները | Աղյուսակ 1

Dependent Variable: DL_EXP_IND
 Method: Least Squares
 Date: 08/08/21 Time: 15:54
 Sample (adjusted): 2007Q2 2021Q1
 Included observations: 56 after adjustments

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
DL_IND_R	0.649062	0.215288	3.014849	0.0040
DL_FD	4.649744	1.652316	2.814078	0.0069
RUB_REAL_QQ	-0.624300	0.199520	-3.129007	0.0029
C	62.66818	20.20275	3.101962	0.0031

R-squared	0.415969	Mean dependent var	1.537335
Adjusted R-squared	0.382275	S.D. dependent var	13.28245
S.E. of regression	10.43941	Akaike info criterion	7.597802
Sum squared resid	5667.023	Schwarz criterion	7.742470
Log likelihood	-208.7384	Hannan-Quinn criter.	7.653889
F-statistic	12.34545	Durbin-Watson stat	2.426076
Prob(F-statistic)	0.000003		



Գծապատկեր 1

Մոդելի մնացորդը, գնահատված և փաստացի շարքերը

Մնացորդների կոռելյոգրամը | Աղյուսակ 2

Date: 08/09/21 Time: 01:04

Sample: 2000Q1 2021Q4

Included observations: 56

Autocorrelation	Partial Correlation		AC	PAC	Q-Stat	Prob
** .	** .	1	-0.224	-0.224	2.9665	0.085
. .	. .	2	0.040	-0.010	3.0642	0.216
. .	. * .	3	0.067	0.078	3.3415	0.342
* .	. .	4	-0.084	-0.055	3.7874	0.436
. .	. .	5	0.045	0.011	3.9140	0.562
. * .	. * .	6	0.145	0.165	5.2736	0.509
. * .	. * .	7	0.093	0.183	5.8408	0.558
* .	. .	8	-0.090	-0.052	6.3872	0.604
. * .	. * .	9	0.140	0.093	7.7465	0.560
* .	* .	10	-0.203	-0.158	10.655	0.385
. **	. **	11	0.261	0.221	15.587	0.157
*** .	*** .	12	-0.367	-0.404	25.520	0.013
